

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՐՍԵՂՅԱՆ  
ՓԱՌԱՋԵՄ ՄԵՅԹԻԽԱՆՅԱՆ

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԴԱՍԱԳԻՐՔ  
9-ՐԴ ԴԱՍԱՐԱՍԻ ՀԱՍՏԱՐ

«ԱՍԴԻԿ ԳՐԱՏՈՒՆ»  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2013

**Հաստատված է Հայաստանի Հանրապետության  
կրթության և գիտության նախարարության կողմից**

**Խմբագիր՝      Լիանա Հովսեփյան**

**Մեթոդիստներ՝**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Նախորդ դասարանում անցած նյութի կրկնություն** ..... 6

**ԸՐԱՀՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ**

<b>Դերայական դարձված</b> .....	<b>19</b>
<b>Բարդ նախադասություն</b> .....	<b>28</b>

<b>Բարդ համադասական նախադասություն</b> .....	<b>35</b>
--	-----------

Համադասական նախադասությունների կապակցումը և կետադրությունը.....	41
Համադասական շաղկապներ .....	41
Ստորագյալի լրիվ կամ մասնակի գեղչումը բարդ համադասական նախադասություններում և կետադրությունը.....	54

<b>Բարդ ստորադասական նախադասություն</b> .....	<b>63</b>
---	-----------

Գերադաս և ստորադաս նախադասություններ .....	63
--	----

Գերադաս և ստորադաս նախադասությունների կապակցումը .....	66
---	----

Ստորադասական շաղկապներ .....	67
------------------------------	----

Հարաբերական դերանուններ և հարաբերյալներ .....	82
---	----

Անշաղկապ կապակցում .....	88
--------------------------	----

Զեղչված շաղկապով բարդ ստորադասական	88
------------------------------------	----

նախադասության կետադրությունը.....	88
-----------------------------------	----

Ստորադաս նախադասության շարադասությունն	91
--	----

ու կետադրությունը .....	91
-------------------------	----

<b>ՄԵԶԲԵՐՎՈՂ ԽՈՍՔ</b> .....	<b>103</b>
-----------------------------	------------

Ուղղակի խոսք .....	105
--------------------	-----

Անուղղակի խոսք .....	107
----------------------	-----

Երկխոսական տեքստի կետադրությունը .....	109
--	-----

Երկխոսական տեքստի կետադրություննը .....	110
---	-----

Երկխոսությունը առօրյա խոսքում .....	110
-------------------------------------	-----

<b>Երկխոսությունը գեղարվեստական</b>	
գրականության մեջ.....	115
<b>Երկխոսությունը դրամատիկական</b>	
ստեղծագործություններում.....	120
<b>Երկխոսությունը մասնագիտական բնագավառում .....</b>	123
<b>Սենայիսություն .....</b>	124
 <b>ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	132
Դիմում .....	132
Արձանագրություն .....	133
Հաշվետվություն .....	136
 <b>Տարեվերջյան կրկնություն</b> .....	138
 <b>Հավելված-1</b> .....	144
<b>Հավելված-2</b> .....	148
<b>Համառոտագրություններ</b> .....	158

## Պայմանական նշաններ



Տեքստային աշխատանք



Ստեղծագործական աշխատանք



Խմբային աշխատանք



Հեղինակային մեջքերում



Հարցեր



Առաջադրանքներ



Վարժություններ



Անակնկալ հարց



Բառերի շտեմարան, կապակցությունների շարան



Հիշիք



Իմացիք

\*

Բարդ վարժություն

#

Վարժություն կամ առաջադրանք անցած նյութերից


ՆԱԽՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԱՆՇԱՅ ՆՅՈՒԹԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

## ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԾԱՐԱՀՅՈՒՏՈՒԹՅՈՒՆ

Ա յս, ինչքա՞ն, ինչքա՞ն կուզեի լինել  
Չինվոր հասարակ.  
Հայոթյան բոլոր ոստիների դեմ կռվեի անդուլ  
Անիի հզոր պարիսապների տակ:  
Եվ եուր վրեժով  
Զարկեի դարե՛ր, զարկեի դարե՛ր  
Եվ բյուր վերքերով  
Ընկնեի վսեմ պարիսապների տակ.  
Միրտս խաղաղվեր, հանգչեի հավերժ  
Անիի անմահ պարիսապների տակ...

Դև. Գոստիակյան



### Աշակերտի նկար

Սիրելի՝ աշակերտ, քերականոթյունը լեզվի դժվար յուրացվող բաժիններից մեկն է, եթե ոչ ամենադժվարը։ Առանց քերականական օրենքների սերտունան և դրանց գործնական կիրառման հնարավոր չէ անքերի տիրապետել մայրենի լեզվին։ Ուստի և անշուշտ նկատում ես, որ մենք աշխատում ենք այդ ուսուցումը քեզ մատուցել հնարավորինս հետաքրքիր ու նատչելի։ Գեղարվեստական ստեղծագործությունների առկայությունը հայոց լեզվի այս դասագրքերում ինքնանպատակ չէ։ Դրանք նախ և առաջ քեզ սովորեցնում են ճիշտ կարդալ, արտասանել, պատմել, վերլուծել, բանավոր կամ գրավոր կարծիք հայտնել քեզ համձնարարված նյութերի վերաբերյալ։ Որքան համարձակ ու անկաշկանդ խոսես, այնքան կզարգանա քո բանավոր խոսքը, որքան ճիշտ և գեղեցիկ արտասանես, այնքան կզարգանան քո ճարտասանական հմտությունները։

## Հովիկ Մկրտումյան Տունը

Մորեղբայրս ասում էր՝ տո՛ւն կառուցիր։

Հորեղբորս տղաներն ասում էին՝ տո՛ւն կառուցիր։

Երբ գնում էի գյուղ, հորաքույրերս ձեռքից բռնում, բերուն կանգնեցնում էին մեր հիմ տան ավերակի մոտ ու ասում՝ տո՛ւն կառուցիր։ Գյուղի ճանապարհին հանդիպած բոլոր գյուղացիները հարցնում էին։

«Ե՞րբ ես հորդ տան տեղոր տուն կառուցելու»։

Այսպես ինձ ամեն անգամ կանգնեցնում էին **բարձր** ու կանաչ եղինջի «ծառերով» ծածկված քարակույտերի առաջ ու համոզում տուն կառուցել։

— Ել ի՞նչ տղամարդ, որ հորդ տան ծուխը չծխացնի, — **բախծուն** հայացքը եղինջով պատված քարակույտերին՝ ասում էր Աստղիկ հորաքույրս, —

թե չէ մեծանում գնում եք, մեծանում, թևին տալիս բռչում եք: Բա էս ավեր-  
վող տները մեղք չե՞ն, բա էս մեռնող հիշատակները մեղք չե՞ն...

Մորեղբայրս լավ էր խոսում, խելացի, մտերիմ: Հորեղբորս տղաները,  
հորաքույրերս գեղեցիկ էին խոսում, և ճշմարիտ, ու **իմաստուն** էին բոլորի  
խոսքերը: Եվ ես տիսրում էի այդ խոսքերից, հոգիս խոռվում էր, սիրոս՝  
կարոտում: Օրերով մտրից չէին գնում նրանց խոսքերը, և զարմանում էի՝  
որտեղից այսքան բարություն այս մարդկանց մեջ, այսքան կամեցողու-



ՄՐԱՋ ՎԱՐԴԱՅԱՆ Ն 1955 ԳԵՂԻՆ ՇԱԿՈՒՆԻ

թյուն այս **խառնաշփոթ** ժամանակներում...

— Դու միայն սկսի՛ր,— ասում էր մորեղբայրս:  
— Դու միայն սկսի՛ր, մնացածը քո գործը չէ,— համոզում էին հորեղբորս  
տղաները:

— Դժվարն սկսելն է, մի՛ վախեցիր,— քաջալերում էին գյուղամիջյան ճա-  
նապարհներին հանդիպող գյուղացիները,— հենց սկսեցիր, ողջ գյուղը կհա-  
վաքվի:

Վերջապես համոզեցին, և ես որոշեցի իմ հոր գյուղում, իմ հոր ավերված  
տան տեղում մի տուն կառուցել, մի փոքրիկ տուն՝ փոքրիկ նկուղով,  
առջևում այգի...

— Որ կառուցում ես, միանգամից մեծ տուն կառուցիր,— ասաց մորեղ-  
բայրս,— թե չէ տան փոքրը ո՞րն է: Տանը պիտի օդ լինի շնչելու, պիտի  
շարժվելու տեղ լինի, որ մարդու հոգին բացվի ներս մտնելու:

— Գյուղի տունը մառան պիտի ունենա, որ այզու խնձորն ու տանձը լցնես, խաղողի կախանները շարես, որ գինու գավը ձեռքիդ մտնես ու օրորվելով դուրս գաս,— ասացին հորեղբորս տղաներ:

— Հայի տունը մեծ պատշգամք պիտի ունենա,— ասացին հորաքոյյրերս,— հայի տունը պիտի բաց սիրտ ունենա ու բաց ճակատ: Էլքան աշխարհներ ես ման եկել. չե՞ս զգացել, որ հայի տունը բոլորից տարբեր է. կարծես հյուրի է սպասում, ճանապարհից հոգնած անցորդի, օտարությունից վերադառնող հարազատի:

— Տոնն այնպիսին պիտի լինի, որ նայողն ասի՝ տղամարդ է եղել կառուցողը,— աչքերն արևից կողցելով՝ եզրափակեց Նիկոլ պապը:

Ու սկսվեց...

Մորեղբայրս եկավ բուլղովերով, մտավ հողանաս, հարթեցրեց տեղը: Լարեր բերեցին, չափեցին, հիմքերը փորեցին: Երեկոյան հիմքերն արդեն լցված պատրաստ էին: Կանգնեցի արդեն լցված հիմքերի կողքին, նայեցի, գարմացա՝ թե ինչպես եղավ, ես ինչ հրաշք էր:

Ամեն օր նոր մարդիկ էին զալիս, կատակելով, ուրախանալով, գործը միմյանց ձեռքից խլելով՝ աշխատում էին: Եվ բոլորը սրտանց ուրախանում էին, որ գյուղում մի ավերված տուն է կենդանանում, մի մեռած հիշատակ:

... Տունը շատ արագ կառուցվեց՝ բարձր, երկիրականի, յայն, երկար պատշգամբով, մեծ մառանով: Երբ տանիքը ծածկեցինք վերջացրինք, տունը հայի տան նմանվեց՝ կանչող ու **սրտաքաց**: Մայրս հորաքույրերիս հետ մեծ սեղան բացեց թթենու տակ, նստեցինք ճաշելու: Տաք ու **հյուրասեր** աշուն էր՝ մրգելով լեցուն այգիներով, հացով լինը տաշտերով: Մի պահ լուս նայում էինք հպարտորեն կանգնած մեր տանը: Բոլորս այնտեղ մեր աշխատանքն ու քրախնքի կարիներն էինք ողել քարի ու շաղախի հետ, և բոլորիս այն հարազատ էր ու սրտամուտ: Լռությունը խախտեց մորս բախժուտ, հուզված ձայնը.

— Հայրդ ճիշտ այսպիսի տուն էր երազում կառուցել, բայց պատերազմը խանգարեց: Եթե ողջ լիներ, ինչքա՞ն կուրախանար...

Բաժակները լցրինք թքի օդիով: Նիկոլ պապը տնքալով վեր ելավ տեղից:

— Ապրեն, որդի՛, որ չքողեցիր մարեր հորդ օջախի ծուխը, ապրեն: Յուրաքանչյուր մարդ այս աշխարհում պիտի մի տուն կառուցի, որ տղամարդ կոչվի: Դու այսօրվանից հետո կարող ես գլուխդ բարձր ման գալ. այսօրվանից տղամարդ ես:

Ահա այսպես ես տուն կառուցեցի... Իրենք հավաքվեցին, իրենք կառուցեցին, իրենք ինձ տղամարդ դարձրին ու ճանապարհ ողին: Եվ այնքան

բնական, այնքան հեշտ ու **աճկեղծ**, որ մինչև հիմա էլ ինձ տղամարդ եմ զգում, տուն կառուցող տղամարդ:

### Հարցեր և առաջադրանիւր

#### **Ա**

**ա** Պատմի՞ր այս առեղծազործությունը. քո ըմկալմամբ ներկայացրո՞ւ պատմվածքի ներքին բովանդակությունը:

**բ** Փորձի՞ր ուրիշ վերնագիր դնել այս պատմվածքին:

**գ** Տոն կառուցելու վերաբերյալ պատմվածքում տրված ո՞ր ցանկությունն ես առավել կարևորում. դու ի՞նչ ցանկություն կհայտնեիր:

#### **Բ**

**ա** Բառարանի օգնությամբ բացատրի՞ր գավիթ, գլխատում, նախասենյակ, պատշգամբ, շրամուտք, օրյակ բառերը՝ յուրաքանչյուրի դիմաց նշելով դրանց ոռուելեն կամ քո իմացած օտարլեզվյան տարբերակը:

**բ** Բառարանի օգնությամբ բացատրի՞ր տրված բառերի՝ բազրիք, հեծան, ամրան, ծխնի, ծխնելույզ, կղմինդր, ձեղուն, որմածք, շրիշակ, քիվ, իմաստները. ուրիշ ի՞նչ բառեր կավելացնեիր, որոնք տան որոշակի հատված են անվանում կամ տան կառուցման անհրաժեշտ պարագաներ են:

### Հովի. Թումանյան

#### Ամենից լավ տունը

(փոխադրություն)

Ենտեղ, ուր հովր խաղում է ազատ,  
Ու ջուրն աղմրկում, անվերջ փրրիրում,  
Ենտեղ իր բարի, իր սիրող մոր հետ  
Սի շատ անհանգիստ տղա էր ապրում,  
Սի գորշ խրճիթում,  
Սի հին խրճիթում,  
Գետի եղերքին,  
Ծառերի տակին:

Սի օր էլ եկավ անհանգիստ տրղան,  
Կանգնեց իր բարի, իր սիրող մոր դեմ.  
«Մայրիկ, էստեղից պետք է հեռանամ.

**Նկար**

**Խրճիթ գետի  
ավին**

Միակ ձանձրալի տեղը, որ զիտեմ,  
Էս գորշ խըրճիքն է,  
    Էս հին խըրճիքն է,  
    Գետի եզերքին,  
    Ծառերի տակին:  
Թո՞ն զընամ շրջեմ աշխարհից աշխարհ,  
Շամփորդեմ՝ լավ-լավ տըներ տեսնելու,  
Ամենից լավը ընտրեմ մեզ համար,  
Գամ քեզ էլ առնեմ, ու փախչեմք հեռու  
Էս գորշ խըրճիքից,  
    Էս հին խըրճիքից,  
    Գետի եզերքին,  
    Ծառերի տակին»:  
Ու գնաց, երկար թափառեց տըղան,  
Մեծ ու հոյակապ շատ տըներ տեսավ,  
Բայց միշտ, ամեն տեղ պակաս էր մի բան...  
Ու հառաչելով ես վերադարձավ  
Էն գորշ խըրճիքը,  
    Էն հին խըրճիքը,  
    Գետի եզերքին,  
    Ծառերի տակին:  
«Գլտա՞ր, զավակըս»,— հարցրեց մայրը՝  
Ուրախ նայելով իր տըղի վրա:  
«Ման եկա, մայրիկ, աշխարհից աշխարհ,  
Ամենից սիրուն, լավ տունը, որ կա,  
Էս գորշ խըրճիքն է,  
    Էս հին խըրճիքն է,  
    Գետի եզերքին,  
    Ծառերի տակին»:

### Ր ա ր ց Ե ր և ա ռ ա զ ա դ ր ա ն ֆ ն ե ր

**ա** Աճգիր արտասանիր այս բանաստեղծությունը:

**բ** Ի՞նչ են սովորեցնում քեզ այս երկու նյութերը. ո՞րը քեզ առավել դուր եկավ. եհմնավորիր՝ ինչո՞ւ:

**գ** Նմանատիա բովանդակությամբ որիշ ի՞նչ ստեղծագործություններ կարող ես եիշել:

**դ** Բանաստեղծությունից դուրս գրիր բոլոր բարբառային ու խոսակցական բառերն ու բառաձևերը՝ դրանց դիմաց նշելով գրական հանարժեքը:

## Ս Ե Ղ Ծ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Մ ա ս ի ս ա ն ֆ

**ա** Համոզվա՞ծ ես, որ Ձեր տունն ամենալավն է. հիմնավորիք:

**բ** Գրի՞ր շարադրություն՝ «Իմ երազանքի տունը» վերնագրով՝ գործածելով որոշիչ, հատկացոցիչ, ուղիղ խնդիր, միջոցի անուղղակի խնդիր, տեղի և նպատակի պարագա լրացումներ:

**գ** Նկարի՞ր քո երազանքի տունը:

## Խ մ բ ա յ ի ն ա ս ի ս ա ն ֆ

Դասարանում անցկացրեք բանավեճ-զրույց. «Քարանձավից ու քարայրից մինչև մերօրյա շքեղ առանձնատուն»:



## Կ Ր Կ Ն Ո Ղ Ա Կ Ա Ն

## Ք ա ր ց Ե ր և ա ռ ա զ ա դ ր ա ն ֆ ն ե ր

**ա** Թվարկի՞ր չքերվող խոսքի մասերը:

**բ** Խոսքի մասերի ո՞ր խմբի մեջ է մտնում մակրայլ և ինչո՞ւ:

**գ** Որո՞նք են մակրայների տեսակները. ին՞չ պաշտոն են կատարում մախաղասության մեջ:

**դ** Ի՞նչ են ցույց տալիս վերաբերականները և ի՞նչ տեսակների են բաժանվում:

**ե** Ինչո՞վ են տարրերվում վերաբերականները մակրայներից:

**զ** Որո՞նք են ձայնարկությունների արտասանական կամ հնչերանգային առանձնահատկությունները:

## Վ Ե Ր Ի Հ Ծ Ե Ր

Մակրայների մի մասը կազմված է քերականական ձևերից, **ինչպես՝ հայցական հոլովից** – դուրս, ներս, ցմահ, ցարդ, ցտեսություն,

բացառական հոլովից – հանպատրաստից, հնուց, ի սկզբանե, իհարկե, ի ծնե, ի սրտե, մանկուց, նորից, միանգամից, վաղուց,

գործիական հոլովից – անձամբ, բարով, դիտմամբ, խստիվ, հազիվ, սակավ, մասամբ, մախօրոր, պատահմամբ, փուրով, շտոռով,

ներզոյական հոլովից – հնում, հիմնականում, հետազայտմ, ներկայում:

Մի շաբը մակրայներ կազմված են երկու բաղադրիչից, **ինչպես՝** ամենից առաջ, վերին աստիճանի, ծայր աստիճան, չափից ավելի, մեծ մասամբ, ժամ առաջ:

#### Առաջադրանքներ

**ա** Դուքս գրի՞ր տրված տեքստերից մակրայները, որոշի՞ր նրանց տեսակն ու կազմությունը:

**բ** Վեհիշի՞ր մակրայակերտ ածանցները և դրանցով կազմի՞ր մակրայներ:

## **Վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսի մասեր**

Խոսքի մասերի երկրորդ խումբը արտահայտում է **վերաբերմունքային իմաստ**, այսինքն՝ այս բառերը սույն եղանակավորում են խոսքը, **դատողական** կամ **զգացական** վերաբերմունք են արտահայտում: Դրանք են **վերաբերականներն ու ձայնարկությունները**:

Խոսքի մասերի երրորդ խումբը արտահայտում է **քերականական իմաստ**, այսինքն՝ այս բառերը ցույց են տալիս հարաբերություններ: Դրանք են **կապերն ու շաղկապները**:

**գ** Վերևում տրված տեքստերից որևէս գրիր վերաբերականներն ու ձայնարկությունները, կապերն ու շաղկապները առանձին սյունակներով և բնութագրի՞ր:

### Դիշիր

**Շարահյուսության** ուսումնասիրման միավորներն են՝

**բառը** – որպես նախադասության անդամ

**բառակապակցությունը** – իր անվանուղական արժեքով,

**նախադասությունը** – իր հաղորդակցական արժեքով,

**տեքստը** – իբրև կապակցված խոսք:

#### Քարցեր և առաջադրանքներ

**ա** Բացատրի՞ր երկու խոսք իրար կապել դարձվածքի իմաստը և գործածիք այն նախադասության մեջ:

**▶** Խոսք բառով ուրիշ ի՞նչ դարձվածքներ գիտես. օգտվելով դարձվածաբանական բառարանից՝ զրի՞ր դրանցից մի քանիսը քո տետրում:

## Բառակատակցություն

### Առաջադրանիւր

**ա** «Տունը» և «Ամենից լավ տունը» տեքստերից դրանք զրիր հիմնական գոյականական և բայական բառակապակցություններ, դրանցից մի քանիսով կազմիր նախադասություններ:

**բ** «Տունը» պատմվածքի ընդգծված ածականները դարձրություններ:

*Օրինակ՝ հոգով անկեղծ*

**զ** Տրված բառակապակցությունները բնութագրիր ըստ բաղադրիչների կապակցման սերտության և ըստ բառակապակցության գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության. բառկապակցությունների իմաստը արտահայտիր մեկ բառով:

Արջի ծառայություն մատուցել, միտքը զբաղված, միտքը պայծառ, շահը սիրող, մարդկանցից խուսափող, ճայնը մեկուսացնող, ճեղքը թերև, խաղաղություն պահող, Գողգոթայի ճանապարհ անցնել, գիտական վեճ, քաղաքականությամբ զբաղվող, համայնքի ղեկավար, հուշերի մատյան, մարզական աշխարհ, շարժվող սանդուռք, սիրտը ելնել, սպիտակ ագռավ, ուղեղով սրափ, քամի անել:

## Նախադասություն

**Բառերի այն կապակցությունը, որն ունի հաղորդակցական արժեք, կոչվում է նախադասություն:**

Նախադասության կարևոր բնութագրիչներն են՝  
**ստորոգյալը**  
 միտքը կամ բովանդակությունը  
 հնչերանգը  
 Մեկ ստորոգյալ ունեցող նախադասությունը կոչվում է պարզ նախադասություն:  
 Միայն ենթակայից և ստորոգյալից կամ միայն ստորոգյալից կազմված

նախադասությունը կոչվում է պարզ համառոտ նախադասություն:

Ենթակա, ստորոգյալ և լրացում(ներ) ունեցող նախադասությունը կոչվում է պարզ ընդարձակ նախադասություն:

Պարզ նախադասության քերականական հիմքը ենթական ու ստորոգյալն են կամ միայն՝ ստորոգյալը:

### 1. Նախադասության գլխավոր անդամներ

### 2. Գոյականական անդամի լրացումներ

### 3. Բայական անդամի լրացումներ

#### Ր ա ր ց ե ր և ա ռ ա ջ ա դ ր ա Ծ ժ ն ե ր

**■** Տրված հատվածներում քանի<sup>o</sup> պարզ նախադասություն կա. ի՞նչ նախադասություններ են դրանք ըստ նպատակադրման:

Իմ մորեղբայր Մելիքը թերևս ամենաճախորդ ֆերմերն է ամբողջ աշխարհում: Նա չափից ավելի մեծ երազող էր ու պոետ: Այնպես որ նա իր շահի մասին չէր մտածում: Գեղեցկություն: Ահա թե ինչի էր նա ձգտում: Նա կուզենար գեղեցկություն ցանել ծաղկի պես և հիանալ՝ նրա աճը տեսնելով: Պոեզիայի և պատանեկության վաղուց անցած այն հիանալի օրերին ես ինքս հարյուրից ավելի նոնենի տնկեցի նրա համար: Հորեղբորս հրապուրուն էր հենց միայն ծառեր տնկելու և նրանց աճով հիանալու գաղափարը:

Սիայն թե ծառերը չեին ուզում աճել (Վ. Ա.):

Այն, ինչ որ անել չկարողացան  
Արշակ-Վաղարշակ,  
Սուշեղ ու Սուշե,  
Սա՛ արեց միայն՝ անզեն ու անզոք.  
Մեզանից խլված մեր պետության տեղ  
Ստեղծեց մի նոր,  
Չեղյա՞ պետություն,  
Թագավորություն մի հզորազոր՝  
Ո՛չ թե մեզանից խլված հողերի,  
Մեր բաժան-բաժան հայրենու վրա,  
Այլ մեր անբաժան,

Մեր անկիսելի՝,  
Երբեք չխվռող հոգիների մեջ:  
Եվ այնուինու անվախճան եղավ  
Թագավորական Նրա տունը մեծ,  
Եվ մեր հոգևոր թագավորության  
Գահին բարձրացող ամեն թագավոր  
Ծնվեց նույն տնից,  
Նույն ցեղից սերեց  
Եվ պատվով-փառով-վեհությամբ կրեց  
Նույն տոհմանունը՝ Սեսրոպ-Մաշտոցյանք... (Շ. Ա.)

- ❖ Դուքս գրիր տրված նախադասությունների բոլոր ենթակաները՝ նշելով նրանց արտահայտությունը, ու ստորոգյալները՝ նշելով տեսակը:
- ❖ Դուքս գրիր գոյականական և բայական անդամի լրացումները՝ բնութագրելով դրանք շարահյուսորեն:
- ❖ Ինչո՞վ են տարբերվում այդ անդամները միմյանցից:

#### Առաջադրանիւր

- ❖ Շարահյուսորեն վերլուծիր տրված տեքստի նախադասությունների բոլոր անդամները՝ նշելով, թե դրանք ինչով են արտահայտված:

Քարե այդ եկեղեցու քարաշեն գմբեթի պատերի վրա դրսից քանդակել է նախրցի վարպետը տասներկու առաքյալների դեմքերը մեկ-մեկ, կողք կողքի: Նրանք հիմա էլ պարզ նայում են դիտողին գմբեթի հնարույր, մանուս պատերից. կարծր, չոր նախրյան լեռնաքարի մեջ փորած հրաշալի դեմքեր: Եվ այն էլ կնկատի ուշադիր դիտողը, որ առաքյալներից մեկի բոլոր դիմազները փորփրած են անխնամ. քիթը չկա, իսկ աչքերի փոխարեն վերևից նայում են երկու սե ու այլանդակ խոռոչներ (Լ. Չ.):

Երանի ես միշտ բարի մնայի,  
Բարի լինեի մայրիկիս նման,  
Մորս՝ ինձ տվածն աշխարհին տայի,  
Որ մի բուռ սիրտս բացվեր անսահման...

Իմ լավն ու բարին իմ Մասիսն է մեծ,  
Իմ Վանա ծովն է իմ լավն ու բարին,  
Իմ լավն ու բարին իմ հողն է անեղծ,  
Իմ Հայաստանն է իմ լավն ու բարին (Հ. Յ.):

## Ա Ս Ա Կ Ծ Կ Ա Լ հ ա ր ց

Ի՞նչ է խորիրդանշում Արարատ լեռը յորաքանչյուր հայի համար և ի՞նչ՝ քեզ համար:

**թ** Կազմի՞ր պարզ ընդարձակ նախադասություններ հետևյալ կադապարներով.

1. Հատկացուցիչ – որոշիչ – ենթակա – տեղի պարագա – ձևի պարագա – ստորոգյալ – ուղիղ խնդիր:
2. Որոշիչ – հատկացուցիչ – որոշիչ – տեղի պարագա – ձևի պարագա – ստորոգյալ – որոշիչ – ենթակա:
3. Որոշիչ – ենթակա – բացահայտիչ – ժամանակի պարագա – ստորոգյալ – անուղղակի խնդիր:

\***զ** Ջո տեսրում կազմի՞ր պարզ համառոտ և ընդարձակ նախադասության անդամների հինգ գծապատկեր և կազմի՞ր դրանց համապատասխանող նախադասություններ:

**Բառերի տեմարան*****Տուն***

Շինություն – շենք

**Հյուլ** - հյուլակ, հոլիկ, քոլտիկ, խրճիթ

**Կացարան**- բնակարան, կացավայր

**Քնակավայր** – 1.քնակատեղ, ապրելավայր, ապրելատեղի,  
նստավայր, 2. շեն, ավան, շենավան

**Ընտանիք** - 1.գերդաստան, տուն, տունտեղ, 2.մարդուկին, 3.ծուխ,  
երդ, օջախ

**Ծուխ** - 1. /եկղց./ընտանիք, տնտեսություն, 2.օջախ, շառավիղ,  
3.սերունդ, 4.համայնք

**Ազգատոհմ** - 1.ազգ, ազգություն, 2.սերունդ, զարմ, 3.գերդաստան  
**Թագավորություն** - 1.կայսրություն, արքայություն, միապետություն,  
ինքնակալություն, 2.իշխանություն, պետություն

**Երկիր** - 1.երկրագունդ, հողագունդ, աշխարհ, 2.հայրենիք,  
3.քնակավայր, 4.ցամաք, 5.Արևմտյան Հայաստան

**Հայրենիք** - բնաշխարհ, բնօրրան, օրրան, ծննդավայր, երկիր,  
ավետյաց երկիր, հայրենի հոռ, մայր երկիր, մայր հայրենիք

## Հարցեր և առաջադրանիւր

**ա** Քառարանի օգնությամբ սովորի՛ր լմտանիք, տուն, հայրենիք բառերի փոխարերական իմաստները և այլ իմաստներով կազմի՛ր նախադասություններ:

**բ** Տուն բառով ի՞նչ դարձվածներ գիտես. օգտվի՛ր դարձվածաբանական բառարանից և քեզ դուք եկած դարձվածները գրի՛ր քո տեսորում:

## Լուսը մեծերին

Տունը սյունն է. պահում:

Ժողովրդական



Առ Հայոց թագավորական, «Կը մոռն իսքին գնորդու»

## ԾԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

### ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾ

Նրա համար ամենից մեծ հաճույքը այգին ու արտերը ջրելն էր:

**Առվի ջուրը կապելիս նա ջրի հետ էլ գնում էր: Արևից չորացած հողը, տեղ-տեղ ճաքճած, ազահությամբ ծծում էր ջուրը (Ակ. Բ.):**

Տրված օրինակներում ընդգծված կապակցությունները բայական բառակապակցություններ են, որոնց գերադաս անդամը անկախ դերբայ է՝ **ջրել, կապելիս, չորացած, ճաքճած**, որոնցից յուրաքանչյուրը ունի իրեն լրացնող ստորադաս անդամ՝ **այգին ու արտերը, ջուրը, արևից, տեղ-տեղ**:

**Նախադասության մեջ գործածված դերբայն իր լրացումներով կոչվում է դերբայական դարձված:**

Դերբայական դարձվածի գերադաս անդամը դերբայն է, որն արտահայտվում է՝

1. անորոշ դերբայի տարրեր հոլովներով՝ անքարք նայել/ը, ուսին նստելով, այգին մշակելու
2. հարակատար դերբայով՝ ուսապարկը մի կողմ դրած, մերենան բարձած, ծանր աշխատանքից խոնճացած
3. ենթակայական դերբայով՝ բարձունքից գահավիժող, օր օրի կռացող, զիշերուցօր սպասող
4. համակատար դերբայով՝ փողոցն անցնելիս, մանկությունը հիշելիս, հանձնարարությունը կատարելիս

#### Դիշիր

Դերբայական դարձվածը նախադասության մեջ մեկ անդամ է:

Որպես նախադասության անդամ՝ դերբայական դարձվածը նախադասության մեջ կատարում է **ենթակայի, ստորոգելիի, գոյականական և բայական անդամի լրացումների** պաշտոններ, **ինչպես՝**

**Ծանվորդների դադար առնելը** (ենթակա) ճակատագրական եղավ:  
Զախողման պատճառը այդ մարդուն վատահելն (ստորոգելի) էր:  
Նա միանգամից որդեգ, որ գործի անցնելով (որոշիչ) ժամանակն է:  
**Ամակնեկալ վեր կենալով** (ձևի պարագա)՝ տանտերը դուրս եկավ **ծխով լցված** (որոշիչ) սենյակից:

Տղամարդը երազում էր, որ կինը նրան դիմավորի **որսից վերադառնալիս** (ժամանակի պարագա):

Դերբայական դարձվածի գերադաս անդամը՝ դերբայը, ունենում է իրեն լրացնող, իր հետ կապված չորս լրացում:

### **Ենթակա.**

**Օրինակներ՝ Ամահիսի** (կողմնակի ենթակա) **գրածը** ոչ ոք չկարողացավ կարդալ:

**Ուսուցչի**՝ (կողմնակի ենթակա) մեր պատմության այդ հերոսական էջը **ներկայացնելը** դեռ երկար կիշշվի աշակերտների կողմից:

### **Ստորոգելի** կամ **վերադիր.**

**Օրինակներ՝** Փորձառու **որսորդ** (ստորոգելի) **համարվող** Համո քեռին անսպասելի հիվանդացավ:

Հմուտ **մասնագետ** (ստորոգելի) **դարձած** ընկերս մեկնեց գյուղ՝ աշխատելու:

### **Խնդիր.**

**Օրինակներ՝** Նրան այդպես էլ չհաջողվեց որևէ **առաջադրանք** (ուղիղ խնդիր) **կատարել:**

Չատերին դուր չեր գալիս ծերունու՝ ամեն մի **մաճրուք** (ուղիղ խնդիր) **տեսնելը:**

### **Այսրագա.**

**Օրինակներ՝ Իրիկնապահին** (ժամանակի պարագա) **պատի տակ** (սեղող պարագա) **նստելը** պապիս հին սովորությունն էր:

Աշխատանքը շոգ **կեսօրին** (ժամանակի պարագա) **ավարտելոց հետո** նա **դանդաղ** (ձևի պարագա) **քայլելով** վերադարձավ գյուղ:

Այս լրացումները կոչվում են **կողմնակին**, որովհետև սրանք ոչ թե նախադասության ստորոգյալի, այլ դերբայի լրացումներ են: Դերբայի լրացումներն իրենց հերթին կարող են ունենալ լրացումներ, որոնք այլևս կողմնակի չեն:

Դերբայ գերադաս անդամը կարող է ունենալ նաև իրեն լրացնող երկրորդական նախադասություն, **ինչպես՝**

Թագուհին շտապեց դուրս՝ **տեսնելու**, թե ովքեր մտան ամրոց:

Ծառուրով միայնակ քայլում էր՝ **մտածելով**, թե որն է ատեղծված իրավիճակից դուրս գալու ելքը:

## ՏԵՒՍԱՅԻՆ ԱԾԽԱՏԱՐԱՄ

**Համն Սահյան**

**Համն Սահյանի  
նկարը**

Դեռ չփորձած մրրիկ ու հով,  
Դեռ չտված ու չստացած՝  
ճախրում էի դաշտերի մեջ՝  
Երազներով, երազներով  
Հարստացած:

Աշխարհի հետ զրոցելով,  
Աչքերիս մեջ՝ ժպիս ու լաց՝  
Նայում էի գագաթներին՝  
Սիրով, սիրով ու հույսերով

Հարստացած:

Ուրս ժայռ ու քարին տալով,  
ճակատս բաց ու սիրտս բաց՝

Գնում էի վերելքն ի վեր՝  
Հոգոցներով ու հոգսերով  
Հարստացած:

Հոգնած աչքերս փակելով,  
Փափագելով օրերն անդարձ՝  
Կանգնել էի լեռան գլխին՝  
Խոռվթներով ու պարտքերով  
Հարստացած:

Ամեն ծառի տակ նստելով,  
Կարծես մի քիչ հանգստացած՝  
Զորն եմ իշնում՝ անդառնալի  
Կորուստներով, կորուստներով  
Հարստացած:

## Առաջադրանք

Արտասանի՞ր այս բանաստեղծությունը՝ ուշադրություն դարձնելով  
հնչերանգին:

Վարժություններ և առաջադրանքներ

**ա** Արտագրի՞ր Համն Սահյանի բանաստեղծությունը՝ ընդգծելով դերբայական դարձվածները և որոշելով դրանց շարահյուսական պաշտոնը.

**#բ** Դուրս գրիր տասը բառ՝ որոշելով դրանց շարահյուսական պաշտոնը:

**#գ** Բանաստեղծության վերջին հնգատողը ենթարկի՞ր հնչյունական և բառակազմական վերլուծության:

**դ** Ստորև արված տեքստից դրվագ գրիր դերբայական դարձվածները՝  
առանձնացնելով գերադաս անդամը:

Առատ լույսից շլացած՝ անլուղմեց այս ու այն կողմ էին ցատկում խայտացող ձկներ:

Եկան երկու նավաստի՝ ձեռքներին տախտակներ քռնած:

Վաղ առավոտյան՝ ժամը վեցին, նա գնաց գետափ՝ աշխատելու այն-  
տեղ գտնվող արհեստանոցում:

Նա հիշեց Հոռմի կայսր Ներոնին, որը, իր իսկ աթոռանիստ քաղաքն այ-  
րելով, կամենում էր բանատեղական ներշնչանք ստանալ դրանից:

Սմբատը, ակամա գրավված Շուշանիկի պայծառ աշբերտվ, համակրե-  
լի դեմքով, դիտում էր նրան:

Բոլորը նայեցին իրար՝ ապարդյուն փորձելով կռահել՝ ինչ կարող է պա-  
տահած լինել:

Ամեն անգամ կարոտով, երբ դաշտերն են ես մտնում,  
Ասես սարերն եմ ելնում սիրտս բանտող մութ ձորից,  
Քաղաքներում ինձ կորցրած՝ դաշտերում եմ ինձ գտնում,  
Հավք ու ծաղկանց արբությամբ մարդանում եմ ես նորից (Հ. Շ.):

### Ա ն ա կ ն կ ա լ հ ա ր ց

**Որտե՞ղ ես դու բնակվում: Համաձա՞յն ես բանատեղծի ասածին:**

**■ Դուքս գրիր և որոշիր դերքայի լրացումները՝ նշելով դրանց պաշտոնը:**

**\*q Տրված նախադասություններում տարրերակիր տրոհված  
հատկացուցիչը կողմնակի ներակայից և հարկ եղած դեպքում  
կետադրիր. հիմնավորիր:**

Եկեղեցու ձյան հաստ շերտի տակ թաքնված խաչը մինչև գարուն չէր  
նկատվում:

Ամպի զոռալը անձրևի նշան է:

Ոչ ոք չէր հասկանում քահանայի հազիվ լսվող աղոթքի ձայնը:

Արմենի տնից այդքան երկար քացակայելլ ոստիկանության ուշա-  
դրությունից չվրիպեց:

Երիտասարդի ծնողներին գրած նամակը խիստ անհանգստացրեց  
բոլորին:

Ուսուցիչը շատ էր ցանկանում իր սաների ուսման մեջ առաջադիմելը:

Տան կտորի տևական անձրևներից քանդվելլ պարտադրում էր  
անհապաղ սկսել վերանորոգումը:

Հարևաններին արդեն ձանձրացրել էր նրանց առավոտից իրիկուն  
լսվող գոռգոռոցը:

## **Դերբայական դարձվածի տարադասությունը և կետադրությունը**

Դերբայական դարձվածը նախադասության մեջ ունի ազատ շարադասություն. այն կարող է հանդես գալ նախադաս, միջադաս և վերջադաս:

Դերբայական դարձվածները լինում են կետադրվող (տրոհվող) և չկետադրվող (չտրոհվող):

### **Կետադրվող դերբայական դարձված**

**Կետադրվող առաջադաս և վերջադաս դերբայական դարձվածները նախադասությունից տրոհվում են բութով, իսկ միջադասը՝ երկու կողմից ստորակետով:**

Կետադրվող են համարվում **աճորոշ** և **հարակատար** դերբայներով կազմված դերբայական դարձվածները, որոնցում իրենք հանդես են գալիս որպես գերադաս անդամ:

Անորոշ դերբայի գործիական հոլովով արտահայտված դերբայական դարձվածները կետադրվում են բոլոր դիրքերում ժամանակի, պատճառի և ձևի պարագայի պաշտոն կատարելիս:

#### **Օրինակ՝**

#### **Առաջադաս**

**Ֆանկանալով փոքր-ինչ կտրվել առօրյա հոգսերից՝** ես մտնում եմ ճամփեզրի՝ մեծ-մեծ փեղկերով սրճարանը:

**Ժամեր շարունակ վիճելով՝** նրանք չհասան ոչ մի արյունքի:

#### **Վերջադաս**

**Ես մտնում եմ ճամփեզրի՝ մեծ-մեծ փեղկերով սրճարանը՝ ցանկանալով փոքր-ինչ կտրվել առօրյա հոգսերից:**

**Հեծյալները դանդաղեցրին ձիերի լնքացքը՝ մոտենալով քնակավայրին:**

#### **Միջադաս**

**Ես, ցանկանալով փոքր-ինչ կտրվել առօրյա հոգսերից, մտնում եմ ճամփեզրի՝ մեծ-մեծ փեղկերով սրճարանը:**

**Չյունը մաքրող մեքենաները, ճանապարհները քացելով, առաջ էին շարժվում:**

**Կետադրվում են նաև՝**

**զիջման պարագա դերբայական դարձվածը բոլոր դիրքերում:**

### Օրինակ՝

Չնայած քավականաշափ միջոցներ ունենալում՝ իրեն շատ համեստ էր պահում:

Նպատակի պարագան վերջադաս դիրքում, **ինչպես՝**

Տղաներն անմիջապես դուրս քափվեցին բակերից՝ **հեռվից ժամանող իրենց հյուրերին դիմավորելու:**

Հետադաս որոշիչ դերբայական դարձվածի, **ինչպես՝**

Աղջնակը՝ **բարձր ու զիշ ձայնով երգող, միանգամից լոեց:**

### Ինացի՛

\*Եթե կետադրվող դերբայական դարձվածից առաջ կա նախադասության որևէ այլ անդամ, ապա դերբայական դարձվածի համարվում է միջադաս:

### Օրինակ՝

Սեղանի տակ, **փափուկ բարձր գրկած, քնել էր փոքրիկը:**

\*Եթե դերբայական դարձվածի հաջորդում է շաղկապին, կարող է կետադրվել թե՛ բութով (առաջադաս), թե՛ ստորակետերով (միջադաս):

### Օրինակ՝

Անցավ ու **տեսնելով փքքող երկիրը՝ նախանձից քարացրեց այն:**

Անցավ ու, **տեսնելով փքքող երկիրը, նախանձից քարացրեց այն:**

### Դիօշի՛

Եթե դերբայական դարձվածը գտնվում է բարդ նախադասության կազմում, ապա կարևորվում է այն, թե բարդությունը որ նախադասության մեջ է այն հանդես եկել և ինչ դիրքում:

### Օրինակ՝

**Գլխարկը հանելով՝ Արամը շտապ տուն մտավ և ողջունեց ներկաներին:**

**Արամը, գլխարկը հանելով, շտապ տուն մտավ և ողջունեց ներկաներին:**

**Արամը շտապ տուն մտավ՝ գլխարկը հանելով, և ողջունեց ներկաներին:**

**Արամը շտապ տուն մտավ և գլխարկը հանելով՝ ողջունեց ներկաներին:**

**Արամը շտապ տուն մտավ և ողջունեց ներկաներին՝ գլխարկը հանելով:**

**Արամը շտապ տուն մտավ և, գլխարկը հանելով, ողջունեց ներկաներին:**

### Առաջադրանք

Կազմի՛ր նախադասություններ՝ առաջադաս, միջադաս և վերջադաս դերբայական դարձվածներով, և կետադրի՛ր:

### Չկետադրվող դերբայական դարձված

Դերբայական դարձվածը չի կետադրվում, եթե այն կատարում է

ենթակայի, ստորոգելիի, հատկացուցչի, նախադաս որոշչի, խնդիրների պաշտոն:

### Օրինակներ՝

**Ամբողջ օրը այզիներում քավառելը նրան հաճույք էր պատճառում:**

Արամի պարտականությունը տան կարգուկանոնին հետևելն էր:

**Խոսելու չափ ու կշիռը պահողի հարգանքը անչափ մեծ է:**

**Վարդի հազիվ նոր քացված թերթիկները արևից քոշնեցին:**

Անահիտն ուզում էր անվերջ բղավել:

Ընդհանրապես չի կետադրվում համակատար դերբայով արտահայտված դերբայական դարձվածը, որն արտահայտում է ժամանակի պարզապես պաշտոն:

### Օրինակ՝

**Եկեղեցի գնալիս հանդիպել էր իր հին ընկերներին:**

Բայց՝ Վաղ առավոտյան՝ **Եկեղեցի գնալիս/մասն.** քացահայտիչ/, հանդիպեց հին ընկերներին:

### Իմացիք՝

Եթե առաջադաս կամ միջադաս դերբայական դարձվածին հաջորդում է օժանդակ բայց՝ **եւ,** ապա դերբայական դարձվածը չի տրոհվում:

### Օրինակ՝

**Ամանեները լվանալով էր անցկացրել իր առաջին օրը հյուրանոցի խոհանոցում:**

Չինվորները դեռ լույսը չքացված էին հեռացել գյուղից:

## Ա ռ ա ջ ա դ ր ա ն տ ն ե ր

**#ա Լրացրու քաց քողած տառերը ըստ անհրաժեշտության:**

**թ Գտի՛ր դերբայական դարձվածները, որոշի՛ր նրանց պաշտոնը:**

Ընդհանուր քարե սանդու-քով վեր բարձրանալով նրանք մտան մի մութ մի-անցք:

Այդ մտքից անհանգստացած ու փոքր-ինչ երկյուղած շուր եկավ դեպի խորհրդավոր ուղ-որը կարծես պաշտպանվելու նրանից:

Տեսնելով նրանց կյանքի փոր-ից բխած իմաստությունը մտա խիտ քփուտների տակ ու լավ քա-նվեցի:

Գուցե փրփրահոս Ծասուտա գետը խառնվելով մի ուրիշ կարկաչուն գետի հասնում է այն լազուր ծովին որի ափին գույնզգույն ավագի վրա մի օր նստել էին կինը և նկարիչը ան-ացած լի-ովին ու կտրված առօրյա-ից:

Վարպետ Սար-իսն էր այդ որը ճակատի ք-տինքը սրբելով հողու քակոնը մեջքին զցելով նստեց մի քարի ծխելու իր նա-շազարդ ծխամոր-ը:

Լիլիքը ականակի- աղբյուրի մոտ նստած ականջ դրած նրա քյուրեղյան նվազին ան-ացած նայում էր աստղագար- երկնքին:

**գ Կետաղրիք տրված նախադասությունները:**

### Կ Ր Կ Ն Ո Դ Ա Կ Ա Ն

#### Ամփոփիչ hawrgեր

- Ո՞րն է կոչվում դերքայական դարձված:
- Որո՞նք են դերքայական դարձված կազմող դերքայները:
- Ի՞նչ է կոչվում դերքայական դարձվածի դերքայը և ի՞նչ՝ նրան լրացնող անդամները:
- Շարահյուսական ի՞նչ պաշտոններ է կատարում դերքայական դարձվածը:

#### Առաջադրանքներ

**ա Բացատրիք դերքայական դարձվածի կետադրությունը:**

**բ Կազմիք կամ գեղարվեստական գրականությունից դրուս գրիք դերքայական դարձվածների օրինակներ՝ նշելով անդամների քանակը և պաշտոնը:**

**գ Կազմիք նախադասություններ՝ գործածելով հետևյալ դերքայական կապակցությունները.**

արևն առած իր թիկունքին, բարձունքից գահավեժ ցած բավիվելով, այսպայի վառ հույսերով տարված, գործից անտեղյակ լինելով, ձեռքերը վեր կարկառած



#### Ստեղծագործական աշխատանք

Տրված նկարին նայելով՝ կազմիք դերքայական դարձվածներով հազեցած կապակցված խոսք: Վերնազրիք ինքն:

### Վարժություններ

**ա** Կետադրությունից եկնելով՝ բաց քողած տեղերում տեղադրի՛ր տրված բայերի դերքայական այն ձևը, որը քերականորեն և տրամաբանորեն կիամապատասխանի նախադասությանը.

Տեղավորել, շրջապատվել, հասնել, նայել, հեռանալ, հայտարարել, կանգ առնել, օժտվել, մեկուսանալ

Սմբատ Ըազլատունին, Դվինից -----, առանց որևէ տեղ -----, գնաց հայրական կալվածքը, ուր նրա եղբայրներն էին՝ իր պես անվեհեր ուազմավարի հմտություններով -----։ Տեղ ----- պես նրան պատշաճ ընդունելության արժանացրին՝ ----- ամենաշքեղ սենյակում։

Ամբոցը հին էր, ----- ամբակուր պարիսպներով, բարձր աշտարակներով՝ արթուն աչքի նման շուրջը ----- դիտանցքերով։

Նրեկոյան, իր սենյակում -----, զորավարը խորհում էր, որ մայրաքաղաքուն կարող էին արքայի ականջը լցնել, թե ինքը թողել է Դվինը՝ բացեիքաց ----- իր դժոխությունը նոր զահ բարձրացած արքայի թագադրման առթիվ (Ա. Զ.)։

- բ** Գտի՛ր դերքայական դարձվածները, որոշի՛ր նրանց պաշտոնը։
- գ** Որոշի՛ր դերքայի լրացումների պաշտոնը։
- դ** Գործածի՛ր ստորև տրված դարձվածները նախադասությունների մեջ։

### Կառակցությունների շարան

Ասած խոսքից բռնել – ասածից կառչելով՝ ստիպել խոսքը կատարել

Ասած քամին տանի – Աստված մի արասցե

Բառերը քամուն տալ – դատարկախոսել

Բառի համար գրպանը չխառնել – սրախոս, ճարտարախոս լինել

Բերանին մածուն քսել – մեկին քծնել, շողոքորթել

Բերանին կողպեք (փակ) դնել – արգելել խոսել

#### Անակնկալ հարց

Կարո՞ղ ես այս կապակցությունները գործածել ուղիղ իմաստով։

#### Լսենք մեծերին

Ով չի սիրում իր երկիրը, նա ոչինչ սիրել չի կարող։

Տ. Պայտիկ

## ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Արևի տակ ժպտում էր վերջին արևածագիկը և օրարաւմ դեղին գլուխը...

Աշնան արևո ջերմացնում էր նրան. ձորի խաղաղությունը դուրեկան էր: Ծառերին փաթաթված վազերն օրորվում էին քամուց, Դիլան դայու միտքն էլ տարութեր էր լինում, ինչպես քամիների բերանն ընկած չոր տերեւ:

Քամուց հնձանի դրմակը մեղմ ճռնչում էր, և մաշված դուռը դողդոց երգում էր մի իին երգ: Եթե արևո չխոնարհվեր դեպի մայրամուտ, ճա առանց հոգմության երկար կմնար այդ դիրքով և չէր հագենա մրգերը քաղած և արդեն դեղնող ծառերի սոսակից (Աղ. Վ.):



Տրված հատվածում բոլոր նախադասությունները կազմությամբ բարդ են. ինչո՞ւ, որովհետև դրանցից յուրաքանչյուրը իր կազմում ունի երկու կամ ավելի պարզ նախադասություններ, որոնք միմյանց կապակցված են համադասական կամ սոորադասական շաղկապներով և կամ միայն կետադրությամբ: Այդ նախադասություններն ունեն նաև հնչերանգային միասնություն:

### Առաջադրանք

**Առանձնացրո՛ յուրաքանչյուր նախադասության մեջ նտնող պարզ նախադասությունները:**

**Մեկից ավելի պարզ նախադասություններից կազմված նախադասությունը կոչվում է բարդ նախադասություն:**

Վերցնենք հետևյալ նախադասությունները.

1. Անահիտը չէր բարկանում:
2. Անահիտը երեխաների չարաճիտությունները տեսնելիս չէր բարկանում:
3. Անահիտը, երբ տեսնում էր երեխաների չարաճիտությունները, չէր բարկանում:

Առաջին նախադասությունը պարզ համառոտ է. կազմված է ենթակայից և ստորոգյալից, այսինքն՝ ունի մեկ ստորոգյալ:

Երկրորդում համառոտ նախադասությունը համարվել է դերբայական դարձվածով, և նախադասությունը դարձել է ընդարձակ: Այդ երկու նախադասություններն ել պարզ են, որովհետև ունեն մեկ ստորոգյալ՝ **չերքարկանում**:

Երրորդ նախադասության մեջ ունենք երկու ստորոգյալ՝ **տեսնում եք** և **չերքարկանում**, ինչն էլ հական դեր է կատարում բարդ նախադասություն ձևավորելիս: Այդ նախադասություններից՝ **Անահիտը չերքարկանում և երբ տեսնում եք երեխաների չարաճճիությունները**:

Բարդ նախադասությունը ևս պարզ նախադասության պես արտահայտում է մեկ ամփոփ միտք:

### Ի մ ա ց ի՝ ր

Մեկ և մեկից ավելի միտք արտահայտելը պարզ և բարդ նախադասությունների տարբերություններից մեկն է, բայց ոչ հիմնականը, քանի որ բարդ նախադասության արտահայտած միտքը հաճախ կարելի է արտահայտել պարզ նախադասությամբ և հակառակը:

### Օրինակ՝

**Լույսը բացվելուն պես ծերունին դուրս եք գալիս տնից:**

**Հենց որ լույսը բացվում եք, ծերունին դուրս եք գալիս տնից:**

Տրված օրինակներից առաջինը՝ պարզ, իսկ երկրորդը բարդ նախադասություն է, չնայած երկուսն ել բացարձակապես նույն միտքն են արտահայտում: Կնշանակի մի քանի միտք արտահայտելու բնութագրիչ հատկանիշներից մեկն է, բայց ոչ միակը բարդ նախադասության համար:

### Չ հ օ հ՝ ր

Պարզ և բարդ նախադասությունները իրարից տարբերվում են կառուցվածքով:

Պարզ նախադասությունը ունի մեկ ստորոգյալ, բարդը՝ մեկից ավելի:

### Ի մ ա ց ի՝ ր

Պարզ նախադասության քերականական հիմքը ենթական ու ստորոգյալն են կամ միայն ստորոգյալը, իսկ բարդ նախադասության քերականական հիմքը բաղադրիչ նախադասություններն են:

Բարդ նախադասությունը կազմված է նվազագույնը երկու նախադասությունից: Ըստ այդմ ել բարդ նախադասությունները կառուցվածքով լինում են **երկրադադրիչ** (երկու նախադասություն) և **բազմադադրիչ** կամ **բազմաբարդ** (երկուսից ավելի):

### **Օրինակներ՝**

#### **Երկրադադրիչ՝**

1) Այդ ժամանակ Ծովանը գլխով հրեց դուռը և 2) մտավ ներս:

1) Երբ անտառից դուրս եկան, 2) հեռվից լսվեց շների հաշոց (*Ար. Զ.*):

#### **Բազմադադրիչ՝**

1) Երբ հասան մի մեծ գյուղ, 2) անձանոթը Ծովանին ծախեց մի երկար մարդու, 3) նրանից ինչ-որ քրեթեր առավ ու 4) ել չերևաց (Ստ. Զ.):

1) Թվում էր, 2) թե մինչև մաս կապրի այդ ժայռերի վրա, ինչպես իր պապերը, 3) կցանի կորեկ, 4) աշնանը կիջնի ձորերը, 5) կհավաքի միրգ և ցախ, 6) ձմեռը կլսի հին գրույցներ... (*Աֆ. Վ.*):

Բարդ նախադասության բադադրիչ նախադասությունները իրար կապակցվում են՝

ա) համադասական և սոորադասական շաղկապներով,

բ) հարաբերական դերանուններով,

գ) շարահարությամբ (անշաղկապ):

### **Առաջադրանք**

Վերիշի՛ր շաղկապները, նրանց տեսակները և կազմոթյունը:

### **Կարծություններ**

**ա** Տրված տեքստում առանձնացրո՞ւ պարզ և բարդ

նախադասությունները. յուրաքանչյուրի դեպքում հիմնավորի՛ր:

**բ** Բարդ նախադասությունների բադադրիչ նախադասություններն

արտագրի՛ր առանձին- առանձին:

Ուղտապանը ծնկի եկավ ուղտի առաջ և խորը հուսահատությամբ սկսեց լաց լինել առաջին ան-ամ:

Մենք կանգնած ենք մոտի, իաց ենք տալիս նրան:

Անապատի քաղցած մարդը այլևս հացին էլ ուշք չի դար-մում: Ար-ունքները, **հակառակ ձյան փաքիններին**, այլում են նրա կոպերը, գլորվում են վար: Ուղտը նայում է ուղտապանին, նրա ար-ունքներին. ուղտապանի նայվածն էլ **ար-ունքների միջից** ռնկել է ուղտի խորունկ աչքերի մեջ, ար-ունքները գլորվում են, այրվում են նրա կոպերը:

Զյունի փաքիլներից ստեղծված մեր հ-ճվանքին խառնվում է անապատի մարդու ողը:

Հանկարծ ուղտը երկարեց վիզը, աղերսագին ձայնեց մի քանի ան-ամ, հ-աց և սկսեց բարձրանալ:

Մենք ճշացինք.

— Դևը ելա՛ Վ, դևը ելա՛ Վ...

Ուղտապանը սրբեց իր ար-ունքները, հավա-եց մեր քերած հացը, ճանկեց ուղտի թա-բը, մազլցեց վեր ու ճա-նապարի բնկավ դեպի անա-պատը՝ ժպտո՞ւն և ուրա՞խ:

Փողոցի երկու կողմերում մարդիկ կանգ էին առնում և դիտում համառ ուղտին, որ օր-բվելով քայլում էր՝ աչքերը հեռու հեռու հառած:

Ուղտապանը ող-ունում էր փողոցում կանգնած մարդկանց, հավա-ում նրանց նետած դրամները, հացի կտորները լցնում տոպարակի մեջ և հեռանում քաղաքից դեպի ավագները, դեպի հարա-ի արեգակը (Ա. Խ.):

**# զ** Ի՞նչ խոսքի մաս են հետևյալ բառերը՝ ըստ տրված տեքստում գործածության՝ ծնկի զալ, սոսօ, քաղցած, այլնս, հակառակ, միջից, ել, վեր:

**# ի** Վերլուծիր տրված տեքստում ընդգծված կապային կապակցությունները. որոշիր կապերի հողովառությունը:

**# ե** Լրացրու տեքստում բաց թողած տառերը:

Նկար

Նստած ուղտ և  
ուղտապան

## ԿՐԿՆՈՂԱԿԱՆ

### Ա մ փ ո փ ի չ հ ա ր ց ե ր

Ո՞րն է կոչվում պարզ նախադասություն, և ո՞րն է նրա քերականական հիմքը:

Որո՞նք են պարզ նախադասության հիմնական հատկանիշները:

Ո՞րն է կոչվում բարդ նախադասություն, և ո՞րն է նրա քերականական հիմքը:

Ո՞ր հատկանիշներն են ընդհանուր պարզ և բարդ նախադասությունների համար:

### Դիշի՛ր

Բարդ նախադասությունը կազմված է՝

- պարզ նախադասություններից,
- ունի մեկից ավելի ստորոգյալ,
- արտահայտում է մեկ ամփոփ միտք,
- ունի ավարտուն հնչերանգ:

**Կարժություններ և առաջադրանքներ**  
**ա** Գտի՛ր բարդ նախադասությունները և որոշի՛ր՝ դրանք երկրադադրի՞չ, թե՞ բազմաբաղդրիչ են:

**բ** Որոշի՛ր բաղադրիչ նախադասությունների կապակցման միջոցները:

**\*գ** Որոշի՛ր յորաքանչյոր բարդ նախադասության և բաղադրիչ նախադասության քերականական հիմքը:

Մի գիշեր սարերից անսանձ փշում էր քամին, դուռն ու պատուհանները ծեծում ու ծեծում: Պարզ լսվում էր, որ այնտեղ՝ անտառում, դարավոր կադնիներն ու վայրի ընկույզները ճակատում էին հողմի դեմ, աղմկում և գոռում: Եվ քամին քերում էր անընդհատ անտառի այդ լիակուրծք խշոցն ու մոռնչը, ու թվում էր, թե հենց մեր դրան առջև է աղմկահույզ, հողմածեծ անտառը:

Երեխաներս վախից կուչ էին եկել, մինչդեռ եղնիկը դողում էր մի խենք սարսուռով:

Աչքերը կայծակին էին տալիս: Անթարք, ամրողովին լսելիք դառած՝ ականջ էր դնում նա անտառի հուժկու շառաչին, որ խոսում էր նրա հետ մայրենի լեզվով:

«Անտառը կանչում է նրան, ընկերների ազատ



վազքն է տեսմում նա մթին բավուտների մացառուտ ժայռերն ի վեր», – մտածում էի ես:

Սի փոքր հետոն ավելի սաստկացավ քամին՝ վերածվելով իսկական փորբորիկի . մեկ էլ աղմուկով բացվեցին լուսամուտի փեղկերը, և մի ուժգին շառաչ միանգամից ներս խուժեց: Եղնիկը հանկարծակի մի ոստյունով ցատկեց լուսամուտի գոզը՝ աչքերը սուզելով շառաչուն խավարի մեջ: Ես իսկույն վրա վազեցի՝ բռնելու նրան, սակայն նա մի ակնթարթի մեջ բռավ լուսամուտից պարտեզը և ծածկվեց խավարների մեջ...

Դմի, հիմա գնա՛ ու գտիր նրան իր հայրենի անծայր անտառներում... (Աշ/ Թու.)

**#7** Ի՞նչ խոսքի մաս են ընդգծված բառերը. արտագրի՛ր դրանք քն տեսդրում առանձին՝ ըստ արտահայտած ընդհանուր իմաստի:

**Ե** Կազմիր երկրադադրիչ և բազմադադրիչ բարդ նախադասություններ:

### Ա Ծ Կ Ն Կ ա լ հ ա ր ց

Ի՞նչ կենդանի ես դու սիրում՝ ընտանի՞», թե՞ վայրի: Ի՞նչ տնային կենդանի ես պահում դու:

### Ս Ե Ն Ծ ա զ ո ր ծ ա կ ա ն ա ս ի ս ա ս ա ն ի

**ա** Նկարի՛ր քո սիրած կենդանին  
և կազմիր կապակցված խոսք  
միայն պարզ  
նախադասություններով:  
**բ** Գրի՛ր շարադրություն՝ «Ես  
ուզում եմ ինքնուրույն լինել»  
վերնագրով՝ օգտագործելով  
տրված բառերն ու  
բառակապակցությունները.

անձնական կարծիք, հոգու թե-  
լադրանք, բախում, ճգնել, կողմ-  
նորոշվել, խորհրդածություն, ինք-  
նարուխ, հակամետ, մերիհակ, սաստող հայացք, վարքագիծ, պահվածք,  
արդարանալ, ավելորդ ինքնավստահություն, հետևողականություն, հոգա-  
տար, համացանց, աշխատանքային փորձ:

Նկար -  
Ինքնավստահ  
տղա

## Կադակցությունների տարան

**Սովորի՛ր և գործածի՛ր նախադասություններում**

լուս

լուս կաթել – բարություն իջնել

լուս սփռել – լուսարանել, ինչ որ հարց պարզաբանել

լուս քեզ տեսնողին – բարենմաղթանք վաղուց չտեսած ցանկալի  
մարդու մասին

լուսի բաժին դառնա – բարի խոսք լավ համրավ քողած  
հանգուցյալի մասին

լուսի կտոր – շատ գեղեցիկ

լուս արարել – բարի, նվիրական գործ կատարել

## Լուսը մեծերին

Հայաստանը քարտու է, քար է, և ճրա զավակն էլ՝ հայն էլ քարի պես  
ամոր է, դիմացկուն, սլինդ ժողովորդ:

Աջ. Վասիսիսան

Նկար

## Ա. ԲԱՐԴ ՀԱՍԿԱՎԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Վահագն Դավթյան

Շաղրտ փեշը քամուն տված,  
Ծամը նետած հետև,  
Կանաչ-կանաչ դաշտի միջով  
Վազում էր նա թերև:

Քամին սուրում, քամին հասնում,  
Ելնում հասակն ի վեր,  
Բաց էր անում քնքուշ-քնքուշ  
Ու մեղավոր ձևեր...

Եվ ձևերից այդ մեղավոր  
Լույս էր կաթում հողին...  
Ասես վազում էր, որ ձուլվի  
Արեգակի շողին:

Ա խ, դու քամի մեղսուտ ու չար,  
Ա խ, մեղավոր ձևեր...  
Ո՞ւր է աղջիկն, ո՞ւր է քամին,  
Ո՞ւր են, ո՞ւր են թևել...

Նկար

Առջիկ

- Առաջադրանք**
- Անգիր արտասանիր այս բանաստեղծությունը;
- Որոշիր, թե տրված բանաստեղծության մեջ քանի նախադասություն կա, և ինչով են նրանք կապակցված միմյանց հետ:

**Այն բարդ նախադասությունները, որոնց կազմի մեջ մտնող պարզ նախադասությունները համազոր են կամ համադաս, կոչվում են բարդ համադասական նախադասություններ:**

**Օրինակներ՝**

Քամին օրորում էր ճյուղերը, և թթենին ճերմակ արցունքներ էր բափում (Վ. Դ.):

**Քամին սրբում է դեմքը աշխարհի,**  
**Սև փաթիլներով իջնում է մութը (Վ.Դ.):**

Բերված նախադասություններից յուրաքանչյուրը կազմված է երկու պարզ նախադասություններից՝ քամին օրորում էր ճյուղերը, քենան ճերմակ արցունքներ էր քակում և Քամին սրբում է դեմքը աշխարհի, Սև փաթիլներով իջնում է մութը, որոնք իրար համազոր, հավասարագոր են:

Բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները կոչվում են **համադաս նախադասություններ**:

### Օրինակներ

- 1) Արևը արդեն բաձրացել է քիչ,
- 2) Ժպտում է օրը ինչպես երգեհոն (Ա. Չ.):

- 1) Առաջին սերս ձնձաղիկի պես  
Զնիալի միջից մի անգամ ժպտաց,
- 2) Ինձ ոտից գլուխ ի անգամ չափեց
- 3) Եվ իսկույն փակեց աշխիները թաց (Հ. Ա.):

1) Չեսը հոնքերը կիսենց ահեղորեն, 2) գլխի մազերը կանգնեցին, 3) և ողջ Օլիմպոսը ցնցվեց հիմնիվեր (քրզմ.):

### Առաջադրանիներ

**ա** Վահագն Դավթյանի տրված բանաստեղծության յուրաքանչյուր քառատողում բնութագրի՞ր յուրաքանչյուր նախադասություն.

առանձնացրու համադաս բաղադրիչ նախադասությունները:

**#բ** Նոյն բանաստեղծությունից գտի՞ր և դրիս զրիր դերբայական դարձվածները՝ որոշելով նրանց պաշտոնը:

**գ** Քո ընտրած զեղարկվեատական որևէ արձակ ստեղծագործությունից դրիս զրիր եինզ բարդ համադասական նախադասություն՝ համարակալելով բաղադրիչ նախադասությունները:

### Բարդ համադասական նախադասություններում բաղադրիչ համադաս նախադասությունների հարաբերությունը

Բարդ համադասական նախադասության համադաս նախադասությունները կարող են լինել **երկվագն**, այսինքն՝ բաղադրիչ համազոր բոլոր նախադասություններն ունեն ենթակա և ստորոգյալ, **ինչպես՝**

**Եվ դառնազին լալիս էր Անանդան՝ անհույս ու հոգենաշ, և լալիս առանց արցունքի (Ա. Թու.):**

Տրված օրինակում երկրորդ համադաս նախադասության ենթական գեղզած է ամբողջովին, ստորոգյալը՝ մասամբ, բայց, միևնույն է, ունենք բարդ համադասական նախադասություն, որի երկու բաղադրիչ նախադասություններն են՝ **Անանդան լալիս էր:**

Բարդ համադասական նախադասության բոլոր բաղադրիչ նախադասությունները կարող են լինել **միակազմ**, այսինքն՝ բաղադրիչ համագոր բոլոր նախադասությունները կամ անենթակա են, կամ անդեմ բայական, կամ անվանական անդեմ, **ինչպես՝**

**Նորից աճճրև, մշուշ, ամայ,**

**Թախսիծ անհուն, տիխրանք հեզ... (Վ. Տ.):**

Տրված օրինակը կազմված է իհնագ համագոր նախադասություններից, որոնք բոլորն ել անվանական անդեմ նախադասություններ են:

Կամ՝

**Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ,**

**Ամենին մոռանալ.**

**Չըսիրել, չըխորհել, չափսուալ –**

**Հեռանա՛լ... (Վ. Տ.):**

Այս օրինակում արդեն բարդ նախադասությունը կազմված է բայական անդեմ համագոր նախադասություններից:

Եվ, վերջապես, բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասություններից մեկը կարող է լինել միակազմ, մյուսը կամ մյուսները՝ երկկազմ, **ինչպես՝**

**Նորից աղմոկ ու վեճ, և հարևանները դիմեցին ոտտիկանություն:**

Առաջին նախադասությունը միակազմ է՝ անվանական անդեմ, երկրորդը՝ երկկազմ:

Կամ՝

**Իսկ դրւար նշուշ էր, արևը խեղդվել էր ամաերի ծալքերում:**

**Ցուրտ էր, աչքերի առաջ ավելի խոր, անհատակ էր թվում անդունդը (Պ. Վ.):**

Առաջին նախադասությունները դիմավոր են՝ անենթակա, երկրորդները՝ երկկազմ:

— Բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները կարող են ունենալ որոշակի ինքնուրույնություն, **ինչպես՝**

**Հոլիկում մութ էր, ու Նահապետի քոնը չէր տանում (Հ. Ք.):**

Այս բարդ համադասական նախադասության համագոր նախադասություններն այնքան ինքնուրույն են ու անկախ, որ առանձին գործածվելիս մտքի որևէ շփոթ չի առաջանում, **ինչպես՝**

**Հողիկում մութ էր: Նահապետի քունը չէր տանում (—ա. Ի.):**

— Կան այնպիսի բարդ համադասական նախադասություններ, որոնց համադաս նախադասությունները միևնույն ինքնուրույնությունն ու անկախությունը չունեն, **ինչպես՝**

**Սի անգամ հարեան ծերունի Մովսեսը Նահապետի տուն զնաց ու մոթեն ընկենելուց հետո մինչև կեսօփշեր նստեց նրա կողքին (Հր. Ք.):**

Այս օրինակում արդեն համադաս նախադասություններից երկրորդու չի կարող առանձին հանդես գալ, որովհետև զեղչված է ենթական.

**Սի անգամ հարեան ծերունի Մովսեսը Նահապետի տուն զնաց:**

**Մուրն ընկենելուց հետո (նա) մինչև կեսօփշեր նստեց նրա կողքին:**

Լինելով համադաս առաջին նախադասությանը՝ երկրորդ համադաս նախադասությունը նրա ինքնուրույնությունը չունի, քանի որ ենթական զեղչված է, և **Նահապետի** փոխարեն գործածված է **նրա** բառ:

Երկրորդ համադասը անկախ կիրառություն չի ունենում սովորաբար այն դեպքերում, եթե՝

ա) **զեղչվում է ենթական.**

**Օրինակ՝**

**Անտառապահը** ուշ գիշերով միայն մտավ խրճիթ, **եղանած մոտեցավ վառարանին:**

բ) **հասնեապես երկրորդ նախադասության մեջ զեղչվում է ստորոգյալը՝ անբողոքվին կամ մասնակիորեն, հաճախ զեղչվում է ենթակայի հետ.**

**Օրինակ՝**

Ծերունին մեզ հյուրասիրում էր, **զանազան դեպքեր պատմում:**

Ծիրանենու ծաղիկները սպիտակ են, դեղձենունը՝ **վարդագույն:**

գ) **երկրորդ համադասում հանդես են զալիս դերանուններ, որոնք փոխարինում են առաջին համադասի որևէ անդամի կամ անդամների:**

**Օրինակ՝**

Ես տեսա Արմենին և **դրանից հետո նրան այլևս չտեսա:**

Պոկոտիր՝ և դե՛ն նետիր անիծյալ կոծոծները, **դրանից մայր բույր միայն երախտապարտ կմնա քեզ:**

## Ս ո ա ջ ա դ ր ա ն տ ն ե ր

**ա** Որոշիր համադաս նախադասությունների քանակը տրված նախադասություններում:

**բ** Որոշիր, թե այդ համադաս նախադասություններն ինչ կազմություն ունեն. միակա՞զմ են, թե՞ երկկազմ:

Մորվանդա մայրիկը որքա՞ն է լացել մեռած քոռների համար, որքա՞ն է լացել սպանված օրդու և անհայտ կորած հարսի համար: Ողջ են քոռները, աստված է պահել... Աղեկտուր ճիշ, գետակից ենուղ ողբ, յեռների չափ ողբ, և սրտակեղեք, սրտաձմիկ ողբի մեջ մի քիչ, շատ քիչ, ցորենի հատիկի չափ ուրախություն: Չեն որոնում իրար, չեն զննում, արյան կանչը, աչքերի կանչը մազնիսի պես քաշում է նրանց իրար մոտ (*Ար. Աղ.*):

Գետափին մենակ նստել է տղան,  
Զուրը գույնզգույն մտքերն է տանում,  
Հստակ անդունդ է երազանքների,  
Որ պատկեր չունի և չունի անուն (*Ա. Դ.*):

Մաշտոց...

Այսինքն՝ Այր մի, որ եկավ ապացուցելու,  
Թե մի տեղ վերջը դառնում է Սկիզբ...  
Այսինքն՝ Այր մի, որ ապացուցեց  
Թե հրաշք չկա՝,  
Այլ կա լոկ կարիք (*Դ. Ա.*):

## Կ ա ր ժ ո ւ թ յ ո ւ ն ն ե ր

**ա** Գտի՞ր բարդ համադասական նախադասությունները և ցույց տուր, թե որ համադաս նախադասությունները կարելի է գործածել առանձին՝ իրեն ինքնուրույն նախադասություն, որոնք՝ ոչ:

Վագերից հյուր էր ծորում, ապրիլյան մաքուր լուսի մեջ շողար-ակում էր ծիրանենու խեժը, խսկ քաղն ավերող մորեխամապը բնավ էլ մորեխամապ չէր, վազող տղաների խումբ էր:

Խիտ եղեգնու-ներից աղմուկով վեր են բարձրանում սուզահավերը, հպարտողեն պատվում լճակի հայելու վրա (*Ա. Հ.*):

Ցանկապատի վրա թոշնել էր վարունգի թաղը, դեղին ծաղիկները կ-կվել էին այտերի վրա չորացած ար-տնքի նման: Պապակած շուրթերով



հողը ջուր էր ծծում, կանաչը խշշում էր ճանապարհին (Վ. Ա.):

**Մքնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է,** մինչև գարուն ոչ մի մարդ ուտք չի դնում անտառներում:

Սակայն Մքնաձորում **այժմ ել բավուտ անտառներ** կան, ուր ոչ ոք չի եղել:

Ծառերն ունենում են, փսում, լնկած ծառերի տեղ, սակայն, նորն է ծլում, արջերը պար են խաղում, սուլում են չորաճի պես, **ոռնում են գայլերը՝** դունչը լուսնյակին մեկնած, **Վարազները ժանիքով** փորում են աև հողը, **աշումքվա փտած կաղիններ** ժողովում (Ա. Վ.):

**▶ Ընդգծվածներից որո՞նք են բառակապակցություններ:**

**#զ** Առանձնացրու տրկած բառերը՝ ըստ նյութական, քերականական և վերաբերմունքային իմաստների. ապրիլյան, ծիրանենու, բնավ էլ, խիտ, խկ, ավերող, վրա, ոչ մի, սակայն, մեկնած, ժանիքով, ժողովում, մինչև:

**#ո** Լրացրո՛ւ բաց քողած տառերն ըստ անիրաժեշտության:

## Կառակցությունների շարան

### Սովորիր և գործածիր նախադասություններում

**քամի**

**քամի անել –** մեծախոսել, սուս խոսել, պարծենալ

**քամի ցանես, փոթորիկ կինձես –** չարիք գործողը ավելի մեծ չարիքի մեջ կընկնի

**քամին զլսից հանել –** երազանքների զիրկը չընկնել

**քամու քերածը քամին կտանի –** հեշտությամբ ձեռք քերկածը հեշտ էլ կկորչի

**քամու քերանն ընկնել –** փշանալ, վատնվել, կորչել

**քամի ծեծել –** զուր ջանք քափել, շատախոսել, գործ շանել

## Լենք մեծերին

Որպեսզի մարդիկ սովորեն սիրել արդարությունը, հարկավոր է նրանց ցույց տալ անարդարության հետևանքները:

Ա. Ավիք

## Համադաս նախադասությունների կապակցումը և կետադրությունը

Բարդ համադասական նախադասություններում բաղադրիչ համադաս նախադասություններն իրար կապակցվում են երկու ձևով՝

- համադասական շաղկապներով
- շարահարությամբ (առանց շաղկապի):

Իսկ հնչերանգը կապակցման համընդհանուր միջոց է այս երկուսի համար էլ:

### Շաղկապական կապակցում

#### Հ ա ր ց ե ր ա ն ց ա ծ ի ց

- Որո՞նք են կոչվում շաղկապներ:
- Ի՞նչ իմաստ են արտահայտում շաղկապները՝ նյութակա՞ն,
- քերականակա՞ն, թե՞ վերաբերմունքային:
- Չանչի՞ տեսակ են լինում շաղկապները:
- Որո՞նք են կոչվում համադասական շաղկապներ:

**Շաղկապները կատարում են սոսկ կապակցական դեր՝ ցույց տալով նախադասությունների ու նախադասության անդամների հարաբերություն ու կապ:**

**Բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները միմյանց կապակցվում են համադասական շաղկապներով:**

#### Հ ի շ ի ՞ր

Համադասական շաղկապներ են՝ և, ու, բայց, իսկ, սակայն, այլ, կամ, էլ, նաև, այլև, ապա, այսինքն, ուստի, ուրեմն, ինչպես նաև՝ բայց և, բայց և այնպես, այն էլ, ինչպես և, ուստի և, միմայն իսկ, կամ թե, և կամ, ապա թե ոչ, և՛...և՛...թե՛, կամ...կամ, ոչ...ոչ:

Համադասական շաղկապները լինում են՝

**Սենադիր – միայնակ շաղկապում են համադաս նախադասություններ:**  
Այդ շաղկապներն են՝ և, ու, բայց, իսկ, սակայն, այլ, այլև, այսինչ,

այսինքն /թե/, այն է /թե/, ասել է /թե/, կամ, էլ, նաև, այլն, ևս, ուստի, որեմն, ինչպես նաև՝ բայց և, բայց և այնպես, այն էլ, ինչպես և, մինչև իսկ, կամ թե, և կամ, ապա թե ոչ, միայն, միայն թե:

### Օրինակներ՝

Ինչքան ժամանակ էր անցել այն օրից, և մի՞թե հնարավոր է այդքան նման երկու դեմք (Ակ. Բ.):

Չանգը ինչեց, բայց ձայնը կորավ այդ ահասարսուո գոռոցի մեջ (Վ. Ա.):

**Կրկնադիր** – յորաքանչյուր համադաս նախադասության մեջ շաղկապն կրկնվում է.

ԱՌ...

### Օրինակ՝

Տառապանքում կա ճայն,

**Եվ** ճայնի մեջ կա լույս,

**Եվ** լուսի մեջ՝ ոգի,

**Եվ** ոգու մեջ ահա դու կանգնած ես մենակ՝

Որպես արուրադուրը չթվարկված զորքի (Խ. Դ.):

ԹԵ...

### Օրինակ՝

**ԹԵ** ընկերումին էր բացատրում, **թԵ** ընկերներն էին հասկացնում այդ ձեռնարկման անհմաստ լինելը:

ՈՇ...

### Օրինակ՝

**ՈՇ** կարգին քննել եմ աշխարհում,

**ՈՇ** կարգին արքուն եմ մնացել,

**ՈՇ** տուն եմ ունեցել մի կարգին,

**ՈՇ** կարգին անտուն եմ մնացել (Հ. Ս.):

ԷԼ...

### Օրինակ՝

Մայրը ճաշն էլ էր պատրաստում, ամաններն էլ էր լվանում, դեռ աշխատանքի էլ էր զնում:

Արդեն վաղուց կորցրել եմ նրա հասցեն էլ, չունեմ նրա ընկերների հեռախոսահամարներն էլ:

**կա՞մ..., կա՞ն****Օրինակ՝**

**Կամ** նա ինձ չհասկացավ, **կամ** ցույց տվեց, թե չի հասկանում:

Այս նախադասության մեջ շեշտեր դնելն ավելորդ է:

Լեղապատառ փայտահատին մնում էր **կամ** հեասպառ փախչել, **կամ** օձի պես կծկվել **Պանինի** մտրակի շառաչուն հարվածների տակ (*Ակ. Բ.*):

Պետք է նկատի ունենալ, որ կրկնադիր **Ա...Ա**, **թե՛...թե՛**, **ո՛չ...ո՛չ**, **Էլ...Էլ** **կամ...**, **կամ** շաղկապների վրա դրվում է շեշտ, սակայն երբեմն կարող են ըստ հնչերանգի շեշտ չկրել:

**Չուզադիր** - շաղկապի մի եզրը առաջին համադասում է, մյուս եզրը՝ հաջորդում:

**ոչ թե..., այլ****Օրինակ՝**

**Ոչ թե** Կատերինան էր կորցրել քանալին, **այլ** լոնկերուիին էր այն աննկատ վերցրել:

Աճահիտը **ոչ թե** այդ հարցը լուծել էր, **այլ** փորձել էր խանգարել մյուսներին::

**ոչ միայն..., այլև****Օրինակ՝**

**Ոչ միայն** դասը չէր սովորել, **այլև** չէր հաճախել պարապմունքներին:

**Ոչ միայն** երեխաններն էին դուրս թափվել տներից, **այլև** ծնողներն էին միացել նրանց ցնծությանը:

**Դիշտ****Ծիշտ**

Ոչ միայն ինքը չէր եկել, **այլև** քրոջն էր արգելել զալ մեր տուն: **Նա ոչ թե** թեզ է փորձում, **այլ** ուզում է բոլորիս ստուգել:

**Սխալ**

**Ոչ միայն** ինքը չէր եկել, **այլ** քրոջն էր արգելել զալ մեր տուն: **Նա ոչ թե** թեզ է փորձում, **այլև** ուզում է բոլորիս ստուգել:

**Իմացի՛ր**

Որոշ քառեր՝ **այլ**, **այն/ս/ուամենայնիվ**, **այն/ս/ուհանդերձ**, **էլ**, **համենայն-դեպս**, **միայն**, **միայն թե**, **մինչև իսկ**, **սակայն** և **այն**, երկարժեք խոսքի մաս են. դրանք կարող են հանդես գալ թե՛ իբրև համադասական շաղկապներ, թե՛ որպես վերաբերականներ:

### Օրինակներ՝

Ինձ **միայն**(վերաբ.) մի հույս էր մնացել:

Կանեմ քո ասածոր, **միայն** (շաղկապ) դու լավ սովորես:

**Այսուհանդերձ** (վերաբ.) ես մնում եմ իմ կարծիքին:

Մենք ամեն ինչ արեցինք, **այսուհանդերձ** (շաղկապ) ոչինչ չստացվեց:

**Համենայնդեպս** (վերաբ.) նա վաստ մարդ չէ:

Ուսուցչին երկար բացատրեցին իրավիճակը, **համենայնդեպս** (շաղկապ) արեցին ամեն ինչ իրենց ընկերոջ համար:

**Այնինչ-ը** և անորոշ դերանուն է, և համադասական շաղկապ:

### Օրինակ՝

Հայրը խոսում ու բացատրում էր, **այնինչ** (շաղկապ) որդին վաղուց քննելու:

Դու քո ձախողումը մի՛ կապիր այնինչ մարդու **այնինչ**(դերանուն)քայլերի հետ:

### Դամադասական շաղկապների դերը համադաս անդամների ու նախադասությունների կապակցումն է:

Սակայն համադասական շաղկապները, բացի կապակցման դեր կատարելուց, նաև իմաստային երանգ են հաղորդում նախադասությանը, ըստ որի լինում են՝

**ա)** միավորիչ - և, ու, եւ, այլև, նաև, թե՛..., թե՛, և՛..., և՛, ոչ միայն..., այլև, ո՛չ..., ո՛չ, ինչպես և, ինչպես նաև և այլն:

**բ)** հակադրական /ներկակական/ - քայց, իսկ, սակայն, մինչ, մինչդեռ, այնինչ, ոչ թե...այլ, այլ ոչ թե, մինչդեռ, եթե...ապա, և ոչ թե, եթե ոչ և այլն:

**գ)** սրուհական - կամ, և կամ, կա՞մ...կա՞մ, կամ թե և այլն:

**դ)** մեկնական - այն է, այն է թե, այսինքն, ասել է թե և այլն:

### Առաջադրանքներ

**ա)** Անզի՞ր իմացիր համադասական շաղկապները:

**բ)** Կազմի՞ր կամ գեղարվեատական գրականությունից դո՛ւր գրիր նախադասություններ, որոնք կապակցված են մենադիր, կրկնադիր և զուգադիր համադասական շաղկապներով:

**գ** Կազմի՞ր նախադասություններ, որոնցում այլ, էլ, սակայն բառերը հանդես գան թե՛ որպես շաղկապ, թե՛ որպես այլ խոսքի մաս:

### Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ե Ր Ո Ւ Թ

Կապակցիր տրված բաղադրիչ նախադասությունները համադասական շաղկապներով. *բայց* և այնպես, թե, մինչդեռ, սակայն, ուստի և, *nչ...nչ*, ուստի:

- 1) Ծնողները տարբերություն չեն դնում զավակների միջև, ... երեխաները դա գնահատում են:
- 2) Եղանակը դեռ չեր փոխավել... հովիվն շտապում էր իջնել սարից:
- 3) Դասը դարձյալ չեր սովորել... փորձեց արդարանալ:
- 4) Գիշերը ծյունը չեր դադարել... ճանապարհները մաքրվել են:
- 5) Արա՞ն արեց առաջին քայլը, ... եղբայրը սպասում էր այդ խոսքերին. նրանք վերջապես հաշտվեցին:
- 6) ... հայրը դա նկատեց, ... մայրը ավելորդ բառեր ասաց. այդ պահին խոսքերն ավելաբդ են:
- 7) Արսենը չգնաց այդ միջոցառմանը, ...ոչ ոք նրա այդ քայլը չներեց:

### ՀԱՅԵՐԱՆԳ

Ըստ համադասական նախադասություններում հնչերանգը արտահայտում է **թվարկում** և **հակառապություն**:

Խմբարկման հնչերանգը դրսնորվում է միավորիչ հարաբերություն արտահայտող շաղկապներով՝ **և, ու, կամ, էլ, ճան** և այլն, ինչպես նաև անշաղկապ կապակցության դեպքում:

#### Օրինակներ՝

**Ծաղկողը հենց քիչ առաջ մի կողմ էր դրել վրձինը և մտախտի հայացըը հառել հեռակոր դաշտերին** (թվարկման) (Հ. Դ.):

**Համեմատված մի անօրինակ լուրջուն տիրեց, պարսպի տակ կանգ առավ ամեն մի շարժում** (Հ. Դ.):

Հակառապության հնչերանգը դրսնորվում է հակառական, ժխտական հարաբերություն արտահայտող շաղկապներով կապակցության դեպքում՝ **բայց, իսկ, սակայն, ոչ թե..., այլ** և այլն:

#### Օրինակ՝

**Պերսևը մահացու վերք կիասցներ Փինևախն, բայց սա բաքնվել էր զոհասեղանի հետևում** (թրգմ.):

Հազմաբաղադրիչ նախադասություններում կարող են դրսնորվել թե՛ թվարկման, թե՛ հակառապման հնչերանգները, **ինչպես՝**

Անուններում երեք հոգու,  
Եվ դրա կաս միշտ, և ես միշտ կամ.  
Չո անունն եմ ես միշտ պոկում,  
Իսկ դու իմը՝ ոչ մի անգամ (Թ. Ա.):

<b>Նկար</b>	<b>ծաղկի</b>	<b>բերքիկ</b>
<b>պոկող աղջիկ</b>		

### Վ ա ր ժ ո ւ թ յ ո ւ ն ն ե ր

- ա** Տրված հատվածներում բաղադրիչ քանի<sup>8</sup> նախադասությունից է կազմված յորաքանչյուր բարդ նախադասություն:
- բ** Ընդգծի՛ր կապակցման միջոցները:
- գ** Տրված նախադասություններում որոշի՛ր հնչերանգի տեսակը:

Գյուղում Ավին լավ որսորդի համբավ ուներ: Բացատներում միրիավ էր որսում, արտերի մոտ՝ կաքավ ու լոր, բակարդ էր լարում աղվեսի համար, երբեմն էլ Սրբաձորի խորքերն էր զնուն, ժամերով նստում քարին, մինչև վարազը գար: Ավին նշանը ճիշտ էր բռնում. բերդանի զնդակը վարազի ճարպուտ կողին մնձ վերք էր բացում: Վարազը քավալգոր էր լինում, ցավից ժանիքներով հողը փորում, արմատներ պոկում, հետո խոռոցով գետին ընկնում (Աղ. Վ.):

Հոգնել եմ ես ցավոտ, դավոտ սերերից,  
Ամենքի դեմ սիրտս բացած, աչքս՝ փակ,  
քար է եղել նրանց շեղ կրծքի տակ,  
Իսկ ես, ավա՞ղ, սիրտ եմ կարծել սիրելին (Ա. Դ.):

Ես հարուստ էի: Ես կարող էի  
Իմ անհատնելի երազանքներով  
Գնել յոք երկինք ու տալ քեզ նվեր:,  
Բայց դու երկնքի կարիք չունեիր,  
Չեզ լոկ մի կապույտ թաշկինակ էր պետք  
Իմ կապույտ-կապույտ  
Արտասուբները մաքրելու համար:  
Ես հարուստ էի: Ես կարող էի  
Իմ վերիուշերի անհուն պաշարով

Գնել աշխարհի ծովերը բոլոր  
Ու տալ քեզ նվեր,  
Բայց դու ծովերի կարիք չունեիր... (Հ. Մ.):

### Առաջադրանք

**Համադասական շաղկապնդով կապակցի՛ր համադաս անդամներ և համադաս նախադասություններ:**

### **Անշառկապ կապակցում**

Համադաս նախադասություններն իրար կապակցվում են առանց շաղկապի՝ շարահարությամբ, **ինչպես**

Մորս համբույրի ջերմությունն ունեք,  
Անապակ շողեր ոսկյա արևի,  
Դոր իմ կարոտով վառվել աշխարհում,  
Այդպես կրակ եք դարձել երևի (Հ. Ս.):

**Մոր նկար**

### **Դիմում**

Առանց շաղկապի կապակցման դեպքում կարևորվում է հնչերանգի դեր:

Առանց շաղկապի կապակցման դեպքում համադաս նախադասությունները միմյանցից բաժանվում են՝

#### **ա) ստորագետով, ինչպես՝**

Չյուն է իջնում, կուտակվում  
Մորս վրա վերևից,  
Ասես փետուր է քափվում  
Հրեշտակի թևերից (Հ. Ը.):

#### **բ) միջակետով, ինչպես՝**

Գեղարվեստը ազգի հոգու դրսելուումն է. Մի՛ քանդեք, մի՛ ոչնչացրեք այն (Այ. Վո.):

Բժշկուհին իսկույն գործի անցավ. դեղ դրեց ու վիրակապեց հիվանդի ոտքը:

Անշառկապ նախադասություններն առավել բնորոշ են խոսակցական լեզվին:

### Առաջադրանքներ

**ա** Կազմի՞ր բարդ համադասական նախադասություններ մենադիր և, ու, էլ և գուգաղիր ոչ միայն...այս շաղկապներով և ուշադրություն դարձրու համադաս նախադասությունների իմաստային հարաբերությանը:

**բ** Կազմի՞ր բարդ համադասական նախադասություններ մենադիր բայց, իսկ, սակայն և գուգաղիր ոչ քե...այլ շաղկապներով և ուշադրություն դարձրու համադաս նախադասությունների իմաստային հարաբերությանը:

**գ** Կետադրի՞ր տրված նախադասությունները և բացատրի՞ր:

Այս վայրերում գրեթե հող չկա ողջ օրը քայլում են քարերի ու խճի վրայով:

Կածանները ճշում են այնտեղ  
 Ջրվեժները լուսում են  
**Ծաղիկները** բոչում են այնտեղ  
 Թիթեռները բուրում են (Հ. Ս.):

— Բա էն ոչխարներն ի՞նչ եղան գողացած չլինե՞ն:

Խոսքի վրա ակամա աչքերս ոչխարներ են որոնում բայց հայացքս քերում են Գոմերի քարից մեկ է այս **ամուլ** լեռը ոչխար ապաստանող չէ և նայում են Հաճարկուտ լեռան կողմը: Բացատը նորից պայծառ ժպտում է բացատը Այգեձորի հնոց այրերն են արարել **Բարունց** տոհմը:

**Երեկ** նույն այս ժամն էր Բարունց տոհմի **երեց** Թունի ապոր նոտ էի:

Բարունց Թունին պառկած էր անկողնում զլսաշորով փաթաթվել էր վերմակը քաշել գլխին գրիպ էր: Ծեր ուկորները մրսում էին (Մ. Գ.):

Այգում **երիտասարդ** կեռասենիները մրսում էին քամուց խշշում: Սիմինդրի երկար տերենները բրերի նման քավում էին **իրար**, պողպատի ձայն հանում: Կարծես ծիավորներ էին արշավում իրար դեմ և սիմինդրի տերեւը որպես քեկված սուսեր ընկնում էր քամու առաջ (Ակ. Բ.):

**#** Որոշի՞ր ընդգծված բառերի շարականական պաշտոնը և խորիմասային պատկանելությունը:

### Ա ն ա կ ն կ ա լ հ ա ր ց

Ի՞նչ է նշանակում սիմինդր. հացահատիկազգի ուրիշ ի՞նչ բույսերի անուններ կարող են բվարկել:

## Վ ա ր ժ ո ւ թ յ ո ւ ն

Կազմի՞ր բարդ համադասական նախադասություններ հետևյալ շաղկապական և անշաղկապ կաղապարներով.

- ա** .....ն /m/.....քայց.....ն /m/.....:  
**բ** Ե՛վ——ն՝——ն՝——քայց——:  
**գ** ——այսինքն——ն——:  
**դ** ——,——,——,——,——:  
**է** Ոչ թե——այլ——ն /m/——:  
**զ** Կա՛մ——կա՛ն——քայց——:

## Ս ե ռ ծ ա գ ո ր ծ ա կ ա ն ա ս է խ ա ս ա ն ի

Կազմի՞ր կապակցված խոսք՝ «Կոփորձեմ ներողություն խնդրել» թեմայով՝ գործածելով կրկնադիր և գուգադիր շաղկապներ:

## Վ ա ր ժ ո ւ թ յ ո ւ ն ն ե ր

**ա** Տրված նախադասությունների կապակցման համար ո՞ր շաղկապը հնարավոր է կիրառել:

Չեր այգին հիասքանչ է, ... այն չափազանց մշակված է. դա ինձ չի գոհացնում:

(այսինքն, քայց, նաև)

Ամրող կյանքում մենք ուրախացել ենք նրա հետ միասին, ... չենք կարող այս ձևով հրաժեշտ տալ նրան:

(ասկայն, այնինչ, ասել է թե)

Ըոլորը հայացքները հառել էին քաշկիմակին, ... ոչ ոք ոչինչ չէր տեսնում, քացի մետաքսյա քաշկիմակից:

(իսկ, կամ, ու)

**բ** Տրված նախադասություններում գտի՞ր և դրվագ գրիր մենադիր, կրկնադիր և գուգադիր շաղկապները. ի՞նչ են շաղկապում նրանք՝ համադաս անդամնե՞ր, թե՞ համադաս նախադասություններ:

Ոչի՞նչ, ոչի՞նչ ես չտեսա Ոփալտոյի կամուրջին,

Ո՛չ մրահոն աղջիկ տեսա, ո՛չ ջրերը կապտաջինք (Ա. Վ.):

Իր կյանքում Մարգարը երկու անգամ էր ծեծ կերել. մեկ երբ տղա էր, ու շան պոչից ցախավել էր կապել, մեկ էլ պառավի գերեզմանին քար դնելուց հետո (Ա.Վ.):


Այս, եթե վերադառնար իմ կորած պատաճեկությունը, ապա նրա մեջ կամփոփեի այսօրվա սիրտս, և այլևս ոչ մի գնդակ չէի արձակի ոչ մի արարածի վրա (Ա. Ա.):

Ոչ թե ես եմ **ստեղծող**, այլ սրինգն եմ աստծո,  
Աստվածային նատների տակ են երգերս գեղգեղում... (Հ. Ծ.):

Եկեք մենք էլ վերև նայենք  
Ոչ թե կույրի, այլ ծառի՝ պես,  
Որպեսզի մենք **երբեմն** զգանք  
Քիչ ավելի մոտիկ օդին, քան թե հողին...  
(Դ. Ա.)

Ո՛չ տրտունջ, ո՛չ մրմունջ սգավոր,  
Հեռացի՛ր, մոռացի՛ր ինձ հավետ...

Եվ տանջանք, ե՛ թեկում, ե՛ թախիծ-  
Սև օրեր ես դեռ շատ կտեսնեմ.  
Ամունդ թող **փարոս լիճի** ինձ  
Սուտ կյանքի և դառը մահու դեմ:  
Այսօր դու քաղցր ես նայում, առավո՞տ,  
Եվ **ոյութական** է համրույրը քո զով,  
Եվ լայն է բացված հեռուն արևոտ,  
Ու **զինով եմ** ես մի նոր երազով (Ա. Ը.):



Առաջ նա այգին ու տունը կառավարում էր կնոջ՝ Սարեթ նանի հետ, սակայն մի տարի առաջ՝ քաղից հետո, պառավը մեռավ՝ **թողնելով Մարտին ապորը մեն-մենակ**: ճիշտ է, նրա պահակը՝ Սահակը, թե՛ տան քանն էր անում և թե՛ գնումներ կատարում, կամ աղջիկներն էին շուտ-շուտ գալիս, տունը կարգի բերում, բայց Մարտին ապորը միշտ թվում էր, թե գործն առաջ չէր գնում: Չմեռն ու գարունը անցան մի կերպ, բայց հիմա, երբ խնձորները հասել էին, հարկավոր էր **ժամանակին քաղել**, հավաքել, ծախել...

(Ար. Ը.):

**#** Վերլուծի՛ր շարահյուսորն ընդգծված անդամները:

## Կատակցությունների շարան

**Սովորիր և գործածիր նախադասություններում**

### աստղ

աստեղային ժամ – որևէ անձի համար շատ հիշարժան օր, պահ

աստղի խավարել – գործերը ձախողվել, հաջողությունը կորչել

աստղերը հաշվել – ասկում է հպարտ ու գուտզ մարդու մասին

աստղերից իջնել – ասկում է անտեղյակ միամիտ մարդու

վերաբերյալ

աստղերը ուղի են բնկել – ուր որ է յույսը կրացվի

աստղը քաց – բախտավոր, երջանիկ մարդու մասին

Ա ն ա կ ն կ ա լ հ ա ր ց

Աստղ բառով դո՞ւ ինչ դարձվածքներ կարող են հիշել:

## Լենք մեծերին

Շունչով տուր, հոգին, բայց հայրենիքը մի՛ տուր թշնամյաց:

Խ. Վրույրան

## Դամադասական շաղկապների գործածության հետ կապված կետադրական կանոնները

\* Համադասական շաղկապներից առաջ դրվում է ստորակետ:

### Օրինակներ՝

Ու օրերում քազմագույն ու քազմազան

Վառվեց, վառվեց ողջակիզվող սիրտը մեր,

Բայց աչքերը մեր արևմեր չտեսան,

Եզ մեր սրտերը՝ լուսավոր հեռուներ (Ա. Չ.) :

Գյուղացիների մի մասը բողոքեց, բայց հուսախար եղավ:

Նա զննեց սենյակը, սակայն այդպես էլ ոչինչ չգտավ:

## Դիմեր

Մակայն-ը, նաև վերաբերական լիներով, նախադասության մեջ կարող է հանդես գալ իբրև միջանկյալ բառ. այդ դեպքում այն կկետադրվի երկու կողմից ստորակետով, ինչպես՝

Տիգրանին, սակայն, ոչ ոք չներեց:

Բույսերը, սակայն, բնակլիմայական այդ պայմաններին չընտելացան:

\* **և, ու, կամ** շաղկապներից առաջ դրվում է ստորակետ, եթե դրանք կապում են տարրեր ենթակայով նախադասություններ:

**Օրինակներ՝**

Դողանջը արևի գույն ուներ, արևի պես համատարած էր, **և** օքք պոնկեապունկ լցված էր դեղին զրնգոցով (*Մ.Գ.*):

Չուրակը հարմարեցնում էր ձախ ծնկանը, **ու** քաղաքային այգին լցվում էր գնչուական մեղեղիներով (*Ժ.Ա.*):

\* **և, ու, կամ** շաղկապներից առաջ դրվում է ստորակետ, եթե համադաս նախադասություններում կրկնվում է նույն ենթական:

**Օրինակներ՝**

**Դու** միշտ իմ կողքին ես, **ու**, անկասկած, **ու** ես իմ հավատարիմ բարեկամը:

**Ավագը** կմտնի պայքարի մեջ, **և** **Ավագը** կանի ամեն ինչ հաղթանակի համար:

\* **և, ու, կամ** շաղկապներից առաջ ստորակետ չի դրվում, եթե դրանք կապում են ընդհանուր ենթակայով նախադասություններ:

**Օրինակներ՝**

Ծերունին կողքանց նայեց **ու** տեսավ ջահելների խոսմքը:

Տղան ավարտեց երգը **և** նայեց Սողոմոնին:

\* **և, ու, կամ** շաղկապներից առաջ ստորակետ չի դրվում, եթե դրանք կապում են համազոր լրացումներ:

**Օրինակներ՝**

Լուսանկարը պատկերում էր հաստարուն **ու** ճյուղավորված մի ընկուզենի **և** ծառի տակ խմբված տղաների մի խումբ:

Արմենը **կամ** Կարենը պետք է պատասխան տար կատարվածի համար:

### Առաջադրանիւր

**ա) Կետադրի՛ր տրված նախադասությունները:**

Երգը ծավալվում էր և գարնան երկնքի տակ կացարանի այգում դատարկվում էր մշեցի մանչի կարոտը:

Նա կոպերը վրա բերեց ու աշխարհի քողարկվեց **վեղարով**:

Կարծես թե մի մահարեր շունչ անցել էր այդ սքանչելի դաշտի վրայով և մարդկային ամեն արարած ոչնչացրել էր:

Փողոցի շրջապարձից ելավ մի կառք ուկեզույն ծովերով զարդարուն և փողոցը լցվեց բոժոժների տաք գնօղոցով:

Դեռատի կնոջ **աչքերում** բողոք կար և հույսը լացի պես կախվել էր շոր-քերից ու դողում էր:

Աշնան օր էր և ճեմարանի բակում ծիրանենիները ճոճում էին իրենց դե-ղին **մեղեղին**:

Հին էր ընկուզենին այրված ու դեպի ձորը քեքված քնով և տարածուն ճյուղերը **ձորի գլխին կրտսակված** ամպերն էին քշում:

Նրանց ընտանիքը **մեծ** էր հոր աշխատավարձը քիչ և ծնողները **դժվա-րությամբ** էին ծայրոր ծայրին հասցնում:

**#p** Որոշի՞ր ընդգծված անդամների շարահյուսական պաշտոնը:

\* Ա՛..., Ա՛, թե՛..., թե՛, ո՛..., ո՛չ..., է՛..., է՛ն կա՞մ..., կա՞մ կրկնադիր շաղկապները հիմնականում շեշտվում են և դրանցից առաջ դրվում է ստորակետ:

**Օրինակներ՝**

Այրին Ա՛ լալիս էր, Ա՛ արտասվախառն ձայնով պատմում համգուցյալի տանջանքները (6):

**Կա՞մ** նա ինձ չէր հասկանում, **կա՞մ** ես ինչ-որ բան այնպես չէի բացատ-րում:

Աշնան խաղաղ օրին նրան հաճելի էր Ա՛ սիմինդրի տերևների խշշոցը, Ա՛ վազերի օրորը, Ա՛ հնձանի դրնակի երգը:

**Ո՛չ** դու ես անտարբեր գործի նկատմամբ, **ո՛չ էլ** ես ինչ-որ բան այնպես չեմ արել:

### Առաջադրանքներ

**w** Կետադրիր տրված նախադասությունները և անհրաժեշտության դեպ-քում շեշտադրիր:

**p** Որոշի՞ր՝ շաղկապները նախադասության անդամնե՞ր, թե՞ նախադա-սություններ են կապակցել:

Ես մատներով տրորում եմ կավը ամենահին նյութը որ կա այս տափա-րակում: Քանի ոտքեր քանի սմբակներ և քանի անխվներ են անցել այս կավի վրայով ինչքան է ծեծել ձյունը և հողմը և արևը և անձրևը (Վ. Տ.):

Ոչ ես չեմ տիսում ոչ անցած մանկությանս ոչ տիսուր ձորի ոչ էլ աղբյու-րի այլ տիսում եմ Բենիամինի համար:

Սակայն Հովհաննեսը ոչ շփոթվում է ոչ սրբություն ոչ ել հանկարծակի գալիս այլ իրեն հատուկ զվարճախոսությամբ գրադացնում է ապշած հյուրերին:

Հայը լաց է լինում և կնունքին և պսակին և թաղմանը:

Այնպիսի լուսավոր գորշ քար է որ և խստառ է և ոչ մոայ:

Ունեմ ամեն ինչ թե սեղան թե լուսամփոփ թե ներկեր ու վլոձին (Վ.Պ.):

Իմ գերեզմանին դուք չմոտենաք  
Հարկավոր չէ ինձ ոչ ծաղիկ ոչ սուզ  
Հանկարծ կզարքնի ջերմ լալու փափազ  
Սիրտս չի գտնի ոչ մի արտասուր (Վ. Ծ.):

❷ Վերլուծի՞ր ընդգծված բառակապակցությունները:

## **Սուրոգյալի լրիվ կամ մասնակի գեղչումը և կետադրումը բարդ համադասական նախադասություններում**

**Բարդ համադասական նախադասության ստորոգյալը գեղչում է ամբողջովին կամ մասամբ:**

Քամին ուժգնանում է, ծովը՝ փոքրկվում:

Չույրս շատ խելացի է, եղբայրս՝ ճարապիկ:

Տրված բարդ համադասական նախադասություններից առաջինում երկրորդ բաղադրիչ նախադասության մեջ գեղչվել է և օժանդակ բայց, երկրորդ համադասում՝ բաղադրյալ ստորոգյալի հանգույցը:

Այսինքն՝ այս օրինակներում մենք ունենք ստորոգյալի մասնակի գեղչում:

**Մայրը ամեն առավուտ շտապում է գործի, իսկ քույրը՝ դասի:**

Այս օրինակում երկրորդ համադաս նախադասության մեջ ստորոգյալը՝ շտապում է, գեղչվել է ամբողջովին:

**Ամբողջովին գեղչում է պարզ ստորոգյալը:**

**Օրինակ՝ Հայրը գիշեր ու զօր աշխատում էր դաշտում, որդիները՝ տանը,** բայց ելի չին կարողանում օրվա ապրուստը իոգալ:

**Ամբողջովին կամ մասամբ գեղչված ստորոգյալի փոխարեն դրվում է բուք:**

Սովորաբար զեղչվում է երկրորդ կամ երրորդ նախադասության ստորոգյալը:

**Օրինակ՝** Ծովը գետերին է սպասում, **գետերը՝ վտակներին, վտակները՝ առյուղներին**, և նրանցից ոչ մեկը հուսախար չի լինում (հուն. ասացվածք):

Բայց չի բացառվում, որ զեղչումը կատարվի նաև առաջին բաղադրիչ նախադասության մեջ:

**Օրինակ՝ Աճահիտը՝ տուն,** իսկ ես դպրոց եմ գնում:

**Մասամբ** զեղչվում է **բաղադրյալ**, ինչպես նաև **պարզ ստորոգյալը**:

**Օրինակ՝** Նրա զինվորական զգեստը սեղմ էր, **գոտին՝ ձիգ, անդրավարտիքի փողքերը՝ արդուկված**:

Եթե համադաս նախադասությունների ենթակաները տարբեր են, ապա զեղչված օժանդակ բայի փոխարեն դրվում է բութ:

**Օրինակ՝** Հայրը բարկանում է, **մայրը՝ պաշտպանում**:

### Դի՛ ի՞՛

Նույն ենթակայի առկայության դեպքում պարզ ստորոգյալը մասամբ զեղչելիս կարելի է նաև չտրոհել:

**Օրինակ՝** Տերեկն աշխատում էր, **երեկոները այցելում մտերիմ ընկերոջը**:

### Դ ա մ ե մ ա ս ի՛ ր

**Մի տեղ պարում էին, մեկ այլ տեղ՝ երգում:**

Ինչպես տեսնում ենք, առաջին օրինակում ունենք նույն ենթական, որը զեղչված է երկրորդ համադասում, ուստի օժանդակ բայի զեղչումը տրոհում չի պահանջում: Մինչդեռ երկրորդ օրինակում առկա են արդեն տարբեր ենթականեր, որոնք դարձյալ զեղչված են, ուստի ստորոգյալի մասամբ զեղչումը պահանջում է տրոհում:

Եթե երկրորդ նախադասության ստորոգյալը արտահայտում է ժխտում, ապա նույն ստորոգյալի զեղչման դեպքում գործածվում է **ոչ** բառը:

**Օրինակ՝** Ծնողները ջանասեր են, **երեխաները՝ ոչ**:

## Առաջադրանիւր

**ա** Համապատասխանեցրո՞ւ առածների բաղադրիչ կապակցությունները.

Հասկացողին մին	Էժան ծախուցի
Լեռը երկնեց	Քե՞ շլինել
Գարուն կգա	լեզվի կտրածը չի լավանա
Մի ձեռքով աստված տալիս է.	Ավետարանը դու ես կարդում
Թաճկ առա	առվույտ կրուսնի
Թրի կտրածը կլավանա	շիասկացողին՝ հազար ու մին
Ժամից ես եմ գալիս	մյուսով առնում
Լինե՞լ	ծնեց մուկ

**Նկարներ -  
առակների համարժեք**

**թ** Որոշի՞ր ստացված նախադասությունների բնույթը և կետադրի՞ր:

## ԿՐԿՆՈՂԱԿԱՆ

Ա մ փ ո փ ի չ հ ա ր ց ե ր ւ  
ա ռ ա զ ա դ ր ա ն ֆ ս ե ր

- Ո՞րն է կոչվում բարդ համադասական նախադասություն:
- Ինչպես են կապակցվում բարդ համադասական նախադասությունները:
- Անգիր իմացիր համադասական շաղկապները:
- Ինչպիսի՞ն են բարդ համադասական նախադասության մեջ մտնող բաղադրիչ նախադասությունների հարաբերությունները:

**S ե f u s a j ի ն ա ս ի ս ա ն ֆ**

### **Պարույր Սևակ**

**Տոնը**

**Ա**

Եվ Եփրատի ափին իմ տնակը այրվեց,  
Մի բուռ մոխիր դարձավ հիմքի վրա,  
Նրա միակ այունը ծնկի նման ծալվեց  
Եվ գերանը ջարդվեց մեջքի նճան:

Զեղունը՝ Եփրատի եղեգներից անթիվ,  
Երբև սև սուզ՝ մնաց սևմին փարված,  
Լոկ մի ելուն մնաց կիսակործան պատից՝  
Աղոթող ձեռքի պես վեր կարկառված:

Շունը, չիմանալով այլաս ինչ անի,  
Ոռնա՞ց քինով, հաշեց երկնքի դեմ,  
Որտեղից նայում էր մի արյունոտ մահիկ  
Հրաշքով սպասվող փրկության տեղ:

Շունը ոռնա՞ց դեռ տաք մոխիրների վրա,  
Եվ Եփրատի ծանոթ եղեգնութուն,  
Իմ հայրենի քամին ցավով սուլե՞ց, նվա՞ց  
Աստանդական կյանքի երգը տրտում:

\*\*\*

**Բ**

Հետո ես փորձեցի տունս շինել դարձյալ  
Իմ հրդեհված հոգու մի բուռ մոխրով,-  
Սերք Նեղոսի ափին՝ սֆինքսի աչքերի տակ,  
Ում գարտնիքից անզամ իմ վիշտն էր խոր:

Մերը հեռավոր Հինդում, Մեռյալ ծովի հանդեպ,  
Ամեն մի ցանաքի, կղզու վրա -  
Դամասկոսից Բեյրութ և Բեյրութից Աքենք  
Ու Աքենքից մինչև Կալիֆոռնիա:

**Նկար**

Ես փորձեցի կրկին տունս վերաշինել,  
Բայց... հայրենի հողից, ջրից հեռու:  
Ողջն անապատ թվաց... Չուր էր տան հիմք դնել  
Անապատի փխրուն ավագներուն:

Իսկ ես մի մարդ էի անտո՛ն, անանձնազիք,  
Անանձնազիք մի մարդ, պանդուխտ մի հայ,  
Իր մարմնից զատված մի դեզերուն հոգի՝  
Անկարող իր մարմնին կրկին հետ դառնալու...

**Գ**

Դարձրել եր հոգիս հավատալուց վաղուց  
Ամեն մի հրաշքի՝ այն օրից դեռ,  
Երբ սեփական տան մեջ իր հայրենի հողում  
Ամբողջ մի ժողովուրդ սրով մորթվեց:

Բայց... արդ առևն եմ շինում փեշերի տակ Մասյաց,  
Հրազդանի ափին, Արտաշատո՞ւմ...  
Նա հառնում է իրև պատանեկան հասակ,  
Իբրև վերադարձած երջանկություն:

Նա հառնում է այստեղ- պապերիս այն հողում,  
Ուր ամեն ինչ այնքան նոր է, աննախադե՛պ,  
Որի վրա բախտի արեգակն է շողում  
Հին աշխարհի մթան ու խավարի հանդեպ:

**Նկար**

## Ա Ր Գ Ե Ր Ը Ա Խ Ա Զ Ա Դ Ր Ա Ծ Ա Ւ Ե Ր

**ա** Վերնագրի՞ր բանաստեղծությունը հատվածաբար:

**բ** Ամբողջ բանաստեղծությունից ընտրի՛ր հինգ քառասող և սովորի՛ր անգիր. հիմնավորի՛ր՝ ինչու հենց այդ հատվածները ընտրեցիր:

**գ** Ինչպե՞ս կբացատրի՞ս Ողջ անապատ թվաց... Չո՞ր էր տաճ հիմք դնել Անապատի փխրուն ավազմերում տողերի իմաստը:

### Բ

**ա** Որոշի՛ր տրված բանաստեղծության մեջ երկրադադրիչ բարդ համադասական նախադասությունները:

**բ** Որոշի՛ր բազմաբադրիչ նախադասություններում համադաս բադրիչ նախադասությունների քանակը:

**գ** Որոշի՛ր, թե բանաստեղծության մեջ կապակցման ո՞ր կաղապարն է գերակշռում՝ շաղկապակա՞ն, թե՞ անշաղկապ:

**դ** Դուրս գրի՛ր բանաստեղծության մեջ գործածված բոլոր շաղկապները՝ որոշելով յուրաքանչյուրի տեսակը:

### Գ

**ա** Բանաստեղծությունից դո՞ւրս գրիր դերբայական դարձվածները՝ որոշելով յուրաքանչյուրի շարակյուսական պաշտոնը:

**բ** Բանաստեղծությունից դո՞ւրս գրիր հինգ գոյականական և հինգ բայական անդամի լրացումներ՝ նշելով նրանց շարակյուսական պաշտոնը:

**գ** Դուրս գրիր հինգը բառ, որոնք գործածված են փոխարերական իմաստով և բացատրի՛ր:

## Խ Մ Բ Ա Յ Ի Ա Ա Ը Խ Ա Տ Ա Ծ

Բաժանվելով երկու կամ երեք խմբի՝ դասարանում անցկացրեք մրցույթ՝ «Ի՞նչ զիտեմ ես 20-րդ դարակազրի հայ ժողովրդի Սեծ եղեռնի մասին» թեմայով՝ նախապես օգտվելով հանրագիտարաններից, համացանցից:

Ուսուցիչը զնահատում է յուրաքանչյուր խմբի տեղեկացված լինելը՝ հավաքած փաստացի նյութը՝ նկարներ, անգիր սովորած բանաստեղծություններ, բանավոր խոսք:

## Ա ռ ա զ ա դ ր ա Ծ Ա Ւ Ե Ր

**ա** Լրացրո՛ւ բաց քողած տառերը:

- բ** Կետադրի՞ր տրված նախադասությունները՝ նշելով կետադրման՝ քո անցած կանոնները:
- գ** Վերականգնի՞ր զեղչված ստորոգյալները:

Քո երգերի մեջ քա-ծության միրած  
Քո ձեռքերի մեջ սա-սուսի որոտ  
Անուշ միսանք կա քո շրբունքներին  
Եվ քո ձայնի մեջ լույս կա վեհերոտ:  
Քո ծիծաղի մեջ թռչող մանուկներ  
Քո հայացքի մեջ կրկին քա-ծություն  
Որ քե կուր-քեն քար-մանենք քառով,  
Պիտի որ հնչի Միքարադություն (Դ. Դ.):

Օդն այստեղ խոնավ էր ու ցու-տ հողմի շունչը ավելի զգալի իսկ գետինը արևի պակասության պատճառով կանաչազուրկ և տամու-:

Գիտունին մեկ անգետին հագար (Ժող):

Հանճարեղ է եղել այն քանաստեղծը որն առաջին անգամ նկատել է և տող դար-քել վարդն ու նրա փուչը գետը նմանեցրել է օձի հասակը նոճու կանացի քայլվա-քը բոցի լուսինը մերժված սիրահարի կյանքը օվկ-անի (Դ. Մ.):

Այստեղ կծկծան մաճառ են վաճառում այնտեղ կեռ պոչերով կծու տադեղ բռ-կ շա-գամ ճակնդեղ:

Առաջին կապոցում ինչ-որ թղթակցությունների պատճեններ էին անդուագրեր ու բոլորն էլ անգլերեն: Երկ-որյակ եղբայրներ էին նրանք Սեթ և Արթուր Անդր-ասյանները: Սեկը Երևանի պետական համալսարանի մեխման էր ավարտել մյուսը քանասիրականը (մամ.):

Ժողովուրդն անհամբեր սպասում էր նրա խաղին: Նկել էին ամենքն անխտիր և նրանք որ երբե-տեսել էին նրան և նրանք որ առաջին անգամ էին տեսնելու (Գ. Ա.):

Գիշեր-ցերեկ վայում է քամին ավերակների մեջ ունայն դեգերում ճրագալույ-ին տների ճրա-ներն համացնում փակ դրսների լուսամուտների փեկերը ծխնիներով պոկում շպ-տում ծառերի թավշյա սաղարթները պոկում ցանուցիր շպ-տում (Այ. Մ.):

#### Վ ա ր ժ ո ւ թ յ ո ւ մ ն ե ր

**ա** Կարդա՛, առանձնացրո՛ համադաս նախադասությունները և որոշի՛ր՝ համադաս նախադասությունների կապակցման նղանակը՝ շաղկապակա՞ն, քե՞ անշաղկապ (շարահարական):

Քամին սովում էր դրառում, խնձորենիների տակ կռացած ճուղբերն օրորվում էին, հասած խնձորները քափշում էին ցած: Առավուտները գետինը կարմրած էր լինում ծառերի տակ, իսկ ծովափի պարտեզներից քամին խնձորը ծովի մեջ էր քափում, ու ալիքների վրա հեռվից հազարավոր կարմիր զնդակներ էին երևում, որ մեկ իջնում էին ծովի խորքը, կորչում հայցքից, մեկ բարձրանում էին բարձրացող ալիքների կատարմերին: Ու այդպես գնում էին, գնում մինչև մյուս ափի... Աղի ջրի մեջ չէին աղիանում համեղ խնձորները, և նրանց բույրը ծովի մեջ շնչում էին նույնիսկ այն ափերին լողացող ջահեղները:

Արծկե քաղաքի թիկունքին Սիփանն էր հպարտ կանգնած..., իր ամրող հասակով երևում էր **Արտամետի պարտեզներից**:

Խոսեց, պատմություններ պատմեց, առակներ ու առածներ ասաց, դեպքեր հիշեց, **գյուղի անցողարձի** մասին տեղեկացրեց, բայց դարձյալ ու կրկին Նահապետը լրու մնաց՝ երբեմն միայն գլխի թերև, հազիվ նշմարելի շարժումով հավանության կամ գարմանքի նշան ցույց տալով (Հր. Բ.):



**#թ** Վերլուծիր ընդգծված բառակապակցությունները՝ ըստ կազմության և ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության:

**#գ** Ի՞նչ խոսքի մաս են հետևյալ բառերը՝ ըստ տրված տեքստում գործածության՝ տակ, վրա, այդպես, բարձրացող, մինչև, մյուս, դարձյալ, լու:

### Ս Ե Ն Ծ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Մ ա ս խ ա տ ա ն ի

**Գրիր շարադրություն՝ «Նամակ սփյուռքում ապրող իմ բարեկամներին»** վերնագրով՝ հնարավորինս գործածելով բարդ համադասական նախադասություններ:

#### Ա ռ ա ջ ա դ ր ա ն ի ն ե ր

**ա Կետադրիր տրված առածներն ու ասացվածքները:**

**բ Որոշիր տրված նախադասությունների բնույթը՝ պա՞րզ, թե՞ բարդ, համադասակա՞ն, թե՞ սոորադասական:**

**գ Որոշիր այդ նախադասություններում կապակցության միջոցները:**

Քիչ ուտելը մարմնին է օգուտ քիչ խոսելը հոգուն: Խելքը մեծ ու փոքր չի հարցնում: Թրի կտրածը կլավանա լեզվի կտրածը չի լավանա: Ծիշտ խոսողի ձիմ քամքած պիտի լինի: Կրթությունը հյուր է խակ խելքը տանտեր: Շատ ման եկողը շատ բան կիմանա: Շիտակ մարդը ծուոք չի սիրի և շիտակին էլ ծուտ չի ասի: Իմաստունի հետ քար քաշիր բայց տգետի հետ մեղը մի կեր: Բարեկամի հետ կերուխուն արա բայց առևտուր մի արա: Սերը սովորը կուտի բանը մոլորը: Արտը խախտուտ մահանան կարկուտ: Նախ ասեղդ թեզ խփիր ապա մախաթը՝ հարևանիդ:

**դ Սեկնաբանիր ասացվածքների բովանդակությունը:**

### Կ ա դ ա կ ց ո ւ թ յ ո ւ ն ն ն ե ր ի տ ե մ ա ր ա ն

**Անոնք կա, ամանում չկա** - Ասվում է այն դեպքում, երբ խոսվում է մի բանի մասին, որը միայն անոնով գոյություն ունի:

**Անոնք տուր, փայտը վերցրոն ճեղող** - Ասվում է այն մարդու մասին, որին չես ուզում տեսնել, բայց նա անսպասելի հայտնվում է:

**Սի ճեղողը լվանում է ճեղը, երկու ճեղողը՝ երես** - Ասվում է այն մասին, որ շատ մարդիկ մասին կարող են շատ ավելին անել

#### Ա ն ա կ ն կ ա լ հ ա ր ց

Սիրում ես միայնա՞կ, թե՞ ընկերովի գործել:

**ե Կազմությամբ ինչպիսի՞ միավորներ են կապակցությունների շարանում տրված դարձվածքները՝ բառակապակցությո՞ւն, պա՞րզ, թե՞ բարդ նախադասություն:**

### Լ ս ե ն ք մ ե ժ ե ր ի ն

Ինչպես ապրել չի կարելի առանց հացի, այնպես էլ անհնարին է ապրել առանց հայրենիքի:

Հյույս

## F. ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

### ԳԵՐԱԴԱՍ ԵՎ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կա աշխարհում քանձրիկ մի Հայաստան աշխարհ,  
Որն իր լաջվարդ, լազուր լեռներն ունի,  
Եվ իր դաշտերն ունի ասես նշխար (Ռ. Դ.):

**Այն բարդ նախադասությունները, որոնց կազմի մեջ մտնող  
պարզ նախադասություններից մեկը գերադաս է, գլխավոր,  
իսկ մյուսը կամ մյուսները լրացնում կամ պարզաբանում են  
գլխավորի միտքը, կոչվում են բարդ ստորադասական  
նախադասություններ:**

Օրինակ՝

Մի ժամանակ կարծում էի, թե արագիլներն են գարուն քերում (Շ. Հ.):

Տրված բարդ նախադասության մեջ մի բաղադրիչ նախադասությունը  
արտահայտում է հիմնական, գլխավոր միտքը՝ մի ժամանակ կարծում էի,  
իսկ մյուս նախադասությունը՝ թե արագիլներն են գարուն քերում, լրաց-  
նում է առաջինի միտքը:

**Նրա գարմանքը շատ եղավ, երբ Արշակի մեքենան չտեսավ իր դրանը  
(Մ. Ի.):**

Տրված օրինակում նրա գարմանքը շատ եղավ նախադասությունը գլ-  
խավորն է, իսկ երբ Արշակի մեքենան չտեսավ իր դրանը նախադասությու-  
նը՝ երկրորդականը, քանի որ լրացնում է գլխավորին:

**Այն նախադասությունը, որի որևէ անդամը արտահայտված է  
մեկ ուրիշ նախադասությամբ, կոչվում է գլխավոր կամ  
գերադաս նախադասություն:**

**Այն նախադասությունը, որը փոխարինում կամ լրացնում է  
գլխավորի որևէ անդամին և կամ ամբողջ գլխավորին,  
կոչվում է երկրորդական կամ ստորադաս նախադասություն:**

Ստորադաս նախադասությունը գերադասին կապակցվում է ստորադասական շաղկապներով կամ հարաբերական դերանուններով:

### Առաջադրանք

**Որոշի՛ր տրված նախադասություններում գերադաս և ստորադաս բաղադրիչ նախադասությունները:**

1. Մենք արդեն զիտենք, որ նա անգլիական հետախուզության գործակալ է:
2. Հիմա գտնում են, որ կավե այդ սալիկը մարդկության պատմության մեջ հնագույն հանրագիտարանն է:
3. Երբ սեպագիրը վերծանվեց, գիտմականների ձեռքն ընկավ հին ժողովուրդների մասին մի անհատնում գանձարան:
4. Թշում էր, թե նրա կյանքն այդուհետ կընթանա գիտական աշխատա-սենյակի անդորրության մեջ, բայց ճակատագիրն այլ կերպ վարվեց:

### Իմացի՛ր

Պարտադիր չէ, որ գերադաս նախադասությունը արտահայտի տվյալ նախադասության հիմնական միտքը:

### Օրինակ՝

**Լավ է, երբ ընկերներդ քեզ ճիշտ են հասկանում:**

Այս նախադասության մեջ, ինչպես տեսնում ենք, հիմնական միտքը արտահայտված է երկրորդական նախադասության մեջ՝ **երբ ընկերներդ քեզ ճիշտ են հասկանում**: Բայց այդ հիմնական միտքը կախված է գլխավորից՝ **Լավ է**:

Բացի ստորոգյալից, գերադաս նախադասության մնացած բոլոր անդամները՝ ստորոգելին, ենթական, որոշիչը, հատկացուցիչը, բացահայտիչը, խնդիրներն ու պարագաները կարող են արտահայտվել երկրորդական նախադասությամբ:

### Օրինակ՝

Այս տիան նա է, **ով օգնեց շինարարներին դպրոցի տանիքը վերանորոգելիս**

(ստորոգելի):

Ինձ բվաց, **թե նա քարձոնքից որ որ է կզահավիժի** (ենթակա):

Սողոմոնը մտածեց, **որ աղոքքի ծնկած մայրն ու մլմացող մոմը նման են** (ուղիղ խնդիր) (*Մ. Գ.*):

Բարդ ստորադասական նախադասությունները լինում են՝

**Երկրադադրիչ, եթե կազմված են միայն մեկ գերադաս և մեկ ստորադաս նախադասություններից, ինչպես՝**

1) Հերմեսը մի ակնքարթում սուրաց դեպի այն լեռան գագաթը, 2) որ հարյուրակնյա Արգոսը հսկում էր Իոյին (թղթ.):

Բազմաբաղդրիչ, եթե կազմված են մեկ գերադաս և մի քանի ստորադաս նախադասություններից, **ինչպես՝**

1) Երբ իր հաղթանակով հապարտ Ապոլոնը կանգնել էր նետերով խոցված իրենի վրա, 2) իր կործին կանգնած տեսավ սիրո պատաճի ասուլած Երսին, 3) որ լարում էր իր ոսկեղեն աղեղը (թղթ.):

Երկրորդական նախադասությունը կարող է լրացնել գերադաս նախադասության որևէ անդամի:

**Օրինակներ՝**

Ես, որ կյանքում միշտ քեզ հետ հաշվի եմ նատել, այժմ դառը հիասքափություն եմ ապրում:

Բերված օրինակում որ կյանքում միշտ քեզ հետ հաշվի եմ նատել երկրորդականը լրացնում է գլխավոր նախադասության բացահայտյալին՝ ես:

Վերցնենք մեկ այլ **օրինակ՝**

Ես անկեղծորեն ուզում եմ ասել, որ այդ հարցը ինձ համար անշափկարևոր է, լրացնում է գլխավորի ուզում եմ ասել կապակցությանը:

Կան նաև այնպիսի երկրորդականներ, որոնք լրացնում են ամբողջ գլխավորին:

**Օրինակ՝**

Մարզիկը միանգամից շրջվեց դեպի հակառակորդը, որով անակնկալի քերեց թե՛ նրան, թե՛ դահլիճում նստածներին:

Այս դեպքում արդեն երկրորդականը՝ **որով անակնկալի քերեց թե՛ նրան, թե՛ դահլիճում նստածներին**, չի բխում գերադասի որևէ անդամից, այլ լրացնում է գերադասին իր ամբողջության մեջ:

### Վ ա ր ժ ո ւ թ յ ո ւ ն ս ե ր և ա ռ ա ջ ա դ ր ա ն ս ե ր

**ա Համարակալի՛ր տրված քարդ նախադասությունների քաղաքորիչ նախադասությունները, ընդգծի՛ր գերադաս նախադասությունները:**

Այսուեղ, որտեղ հայր չի կարողացել հաղթել սրով, հաղթել է գրով՝ ծառլելով ու ոչնչացնելով իր ոստիսներին և զալիք սերունդներին փոխանցելով իր երազը, հույսն ու հավատը:

Գրիշները մտածել ու գրել են **զրքի մասին** այնպես, ինչպես կգրեին կենդանի մարդու մասին:

Ձեռագրերից ամեն մեկի վրա կան **տեսանելի և անտես հետքերը** այն արյան, որ բափել է մեր ժողովուրդն իր ազատության ու անկախության համար:

Երբ կարդում ես գրիշների կցկտոր տողերը, քո առջև կանգնում է մեր աշխատավոր ժողովուրդն իր **առողջ քննազդով**, իմաստությամբ, սրամտությամբ: **Ուամիկ մի գրիչ**, իոզ տանելով իր առքատ հանազյուղացիների մասին, որոնք ամբողջ բերքը ուստիկանին, վանքին ու իշխանին տալուց հետո վշտից ու **անզոր կատաղությունից** գինով հարբում էին, նրանց տասներկու խորհուրդն է տալիս «հարբեցողության վճասների մասին»:

**Գրիշների անձնվեր աշխատանքի** շնորհիվ է, որ մեզ է հասել հայոց ամենամեծ գանձը՝ **Մատենադարանի հարստությունը**:

Եվ ես երազում եմ այն օրը, երբ Մատենադարանի շենքի առջև կամ նրա որևէ սրահում մյուս արձանների կողքին կկանգնեցվի **ձեռագիր արտագրողի** կամ գրչի արձանը...

Ձեռս գնա՞՝, դառնա ի հոռ,  
Գիրըս մնա հիշատակո՞ն (Գ. Հ.):

**▶ Գտիիր երկրորդական նախադասությունները և որոշիիր, թե գերադասի որ անդամին են փոխարինում:**

**#զ Ի՞նչ խոսքի մաս են հետևյալ բառերը՝ ըստ տրված տեքստում գործածության՝**

այնուեղ, ծաղրելով, մասին, ամեն մեկը, առջև, շնորհիվ, որևէ:

**#ի Վերլուծիիր տեքստի ընդգծված բառակապակցությունները:**

## Գերադաս և ստորադաս նախադասությունների կապակցումը

Բարդ ստորադասական նախադասություններում գերադաս և երկրորդական նախադասությունները միմյանց կապակցվում են՝

**ա)** ստորադասական շաղկապներով,

**բ)** հարաբերական դերանուններով ու հարաբերյալներով,

**գ)** շարահարությամբ:

## 1. Ստորադասական շաղկապներ

### Նիշիք

Որո՞նք են կոչվում շաղկապներ:

Ի՞նչ իմաստ են արտօնայտում շաղկապները՝ նյութակա՞ն,  
քերականակա՞ն, թե՞ վերաբերմունքային:  
Քանի՞ տեսակ են լինում շաղկապները:

**Եթե** արևը չխոնարհվեր դեպի մայրամուտ, նա առանց հոգմության երկար կմնար այդ դիրքով (*Վ. Ռ.*):

Այստեղ եթե շաղկապը արևը չխոնարհվեր մայրամուտ ստորադաս (երկրորդական) նախադասությունը կապում է նա առանց հոգնության երկար կմնար այդ դիրքով գերադաս (զլխավոր) նախադասությանը:

**Ստորադասական** են այն շաղկապները, որոնք բարդ նախադասության մեջ ստորադաս (երկրորդական) նախադասությունը կապում են գերադաս (զլխավոր) նախադասությանը:

### Օրինակ՝

Եկա, որ այստեղ ձեզ համար այսօր  
Հրեղեն խոսքեր կրեմ ու խնդում (*Վ. Տ.*):

Այս նախադասության մեջ որ շաղկապը ստորադաս նախադասությունը կապում է **եկա** գերադաս նախադասությանը:

**Եթե, որ** բառերը ստորադասական շաղկապներ են:

Ստորադասական շաղկապները լինում են՝

### ա) մեմաղիք

որ, թե, եթե, որպեսզի, որովհետև, թեև, թեկուզ, թեպետք, թեպետև, մինչ, մինչև, մինչդեռ, չնայած, քան, **ինչպես նաև՝** թե որ, թե չէ, թեկուզ և, քան թե, մինչև որ, հենց որ, եթե ոչ, քանի որ, քանի դեռ, չնայած որ և այլն, որոնք դրվում են ստորադաս նախադասության կազմում:

### Օրինակ՝

Արամին քվաց, **թե** եղբայրը ամաչում է մարդկանց ներկայությամբ խոսել:

Նա զայրացած մոտեցավ պատուհանին, **որովհետև** ականջ ծակող ճայթյունը կրկնվեց:

### բ) զուգադիք

Եթե... ապա, չնայած (որ)... քայց (սակայն), թեև... քայց, թեև... սակայն,

թեկուզ (և)... բայց, թեպես... այնուամենայնիվ, որովհետև... ուստի, քանի որ... ուստի (ուրեմն) և այլն. սրանց դեպքում ստորադաս շաղկապը դրվում է ստորադաս (Երկրորդական) նախադասության կազմում, իսկ համադաս բաղադրիչ շաղկապը՝ գերադասում:

**Օրինակ՝**

**Թեկուզ** երկար բանավիճեցին, **բայց** լնդիանուր հայտարարի չեկան:

**Եթե** խոստումներիդ գոնե փոքր մասը կատարես, **ապա** ես կփոխեմ իմ կարծիքը քո հանդեպ:

Մենադիր ստորադասական շաղկապները դրվում են երկրորդական նախադասության սկզբում, բացի **թե չէ** շաղկապից, որը միշտ դրվում է նախադասության վերջում:

**Օրինակներ՝**

Տիրիքին թվաց, **թե** երազը շարունակվում է:

**Եթե** չտեսնեի նրա մտահոգ դեմքը, ոչինչ չի հասկանա:

**Նախքան** մատուռ կմտներ, մի քանի անգամ խաչակնքեց:

Ներսիկը եղբորս հետ ծանոքացավ **թե չէ**, վաս սովորություններին վերջ տվեց:

### Դիշի՛ր

Շաղկապները նախադասության անդամ չեն լինում:

**Օրինակ՝**

Ես ինչ անեմ, **որ** երկարի ջրերն լնկած կյանքդ վիսրուն (Ա. Վ.):

### Առաջադրանիւր

**Ա** Տրված բազմաբարդ նախադասություններում գտիր և դուքս գրիր երկրորդական նախադասությունները և դրոշիր, **թե** դրամք գլխավորի ո՞ր անդամին են փոխարինում:

Դա արդեն նշան էր, որ նախարարներն այլևս անելիք չունեն այստեղ (Գ. Հ.):

Այս մի թասը՝ **նրանց** կենաց,

**Ովքեր** կյանքում լնդունում են

Ու տանում են **ամեն** հարված,

Բայց մնում են էլի՛ կյանքին սիրահարված (Պ. Ս.):

**Սեմք** շարունակ կրկնում ենք նրանց խոսքերը, ովքեր տարիներ շարունակ մեզ անտրադունց ու սիրով սովորեցրել են:

Ես կարծում եմ՝ չկա **որևէ** առիթ, որ ինձ չվստահես ու կասկածես:

Ցուցահանդեսում ներկայացվեցին նրանց գործերը, ովքեր բացառապես ձեռքով էին աշխատել:

Ամեն առավոտ փողոցից լսվում էր նրա կանչը, ով կաթ ու մածուն էր վաճառում:

**¶ Նուրս գրիր ընդգծված անդամները՝ ենթարկելով ձևաբանական և շարահյուսական վերլուծության:**

**¶ Կազմիր նախադասություններ մենադիր և զուգադիր ստորադասական շաղկապներով:**

### Ի մ ա ց հ՝ ր

Որոշ ստորադասական շաղկապներ կարող են կիրառվել նաև որպես համադասական շաղկապ:

Այդպիսի շաղկապներից են **թե, թե չե, եթե...ապա, մինչդեռ** և այլն:

### Դ ա մ ե մ ա ս հ՝ ր

Եթե անձք դադարի, ապա դուրս կգանք զբոսնելու:

Եթե մայրը ներում էր նրա խենթոթյունները, ապա հայրը սաստիկ պրտեղում էր:

Նա շարունակ հարցնում էր, **թե ինչ եմ անում:**

Եվ ծառե՞րն են շատ այս լեռնակղզում,

**Թե՞ վեր ծառացած սուրբ խաչարերը** (Պ. Ա):

### Դ ի շ ի՝ ր

Երբ մինչդեռ-ը գործածվում է բարդ նախադասության առաջին բաղադրիչ նախադասության մեջ, արտահայտում է ստորադասական շաղկապի իմաստ:

**Օրինակ՝**

**Մինչդեռ մենք զրոյանում եիմք,** նրանք վաղուց մտել էին անկողին:

Երկրորդ բաղադրիչ նախադասության մեջ հանդես գալիս **մինչդեռ-ը** կապակցում է համադաս նախադասություններ:

**Օրինակ՝**

Ես մաքրեցի ողջ տունը, **մինչդեռ ընկերութիւն մատը մատին շնփեց:**

Եթե բարդ նախադասությունը արտահայտում է անուղղակի հարցում, ապա **թե-ն** կատարում է համադասական շաղկապի դեր:

**Օրինակներ՝ Նա՞ է գրում ինձ, թե՞ ես եմ զրում իմ հարազատին,** ինքս էլ չգիտեմ (Պ. Ա.):

Մարդու ժպտաց աղավնիների բարտոցի վրա, **թե՞ զերմություն զգաց և հստակ ձայնով սկսեց իր պարզ զրույցը** (Ը. Վ.):

**Թե չէ** -ն գործածվում է նաև իբրև համադասական շաղկապ, և որպես այդպիսին դրվում է երկրորդ համադաս նախադասության սկզբում:

**Օրինակ՝**

Լոիր, **թե չէ** ես հիմա լաց կլինեմ:

### Վ ա ր ժ ո ւ թ յ ո ւ ն ս ե ր և ա ռ ա ջ ա դ ր ա ն ս ե ր

**ա Որոշիր՝ տրված նախադասություններում թե** շաղկապը համադասակա՞՞ն, թե՞ ստորադասական հարաբերություն է կապակցում:

Հա՞յրս է ինձ ննան, թե՞ ես իլեն, հաստատ չզիտեմ:

Մտքին թե մի քան դրեց, անպայման կանի:

Երկու լնկեր վիճեցին. մի լնկերը չէր ուզում մեկնել այդ վայրից, մյուսը թե՝ պիտի մեկնենք:

Թե աչքերս քեզ որոնեն, ես կփակեմ նոր կոպերով:

Ամառ թե ձմեռ, գիշեր թե ցերեկ նա միշտ իր այզում էր, իր ծառերի հետ: Պատկերացնում եմ, թե ինչ հաջողություն ենք ունենալու:

Թե խոսքերս չլսես, քեզ մեծ վճառ կգա:

Հարցնում էին, թե ինչ եմ վինտրում այս վայրերում:

Թե՛ երեկ եմ նրան տեսել, թե՛ այսօր եմ նորից նրան այցելելու, քայց չեմ կարծում, որ ինձ կլսի:

Չէի հասկանում՝ լսո՞ւմ էր ինձ, թե՞ ցույց էր տալիս, որ լսում է:

**թ Ծնողներս արագ կարգավորեցին իրենց բոլոր գործերը գերադաս նախադասությանը տարբեր դիրքերում ավելացրո՛ երկրորդական նախադասություններ՝ ստորադասական տարբեր շաղկապներով կապակցելով:**

### Ա ռ ա ջ ա դ ր ա ն ս ե ր

**ա Կազմիր մենադիր շաղկապներով կապակցված իինգ քարդ ստորադասական նախադասություն:**

**թ Կազմիր գուգադիր շաղկապներով կապակցված իինգ քարդ ստորադասական նախադասություն:**

**զ Կազմիր նախադասություններ թե չէ, եթե...ապա, մինչդեռ շաղկապների՝ թե համադասական, թե՝ ստորադասական նշանակությանք:**

## Ի Մ Ա Գ Ի Ռ

Մի շարք բառեր հանդես են գալիս թե՝ իբրև կապ, թե՝ իբրև շաղկապ. դրանք են՝ **մինչ, մինչև, նախքան, չնայած, փոխանակ** և այլն:

### Օրինակներ՝

**Մինչ** (կապ) քո գալը նրանք բոլոր հարցերը կարգավորել են:

**Մինչ** (շաղկապ) նա կգար, բոլոր հարցերը կարգավորվեցին:

**Մինչև** (կապ) հանդիպման ավարտը նա ոչ մի լուրջ քայլ չկատարեց:

**Մինչև** (շաղկապ) նա չեկավ, վեճր չդադարեց:

**Չնայած** (կապ) տրամադրություն չունենալուն՝ գնաց այդ միջոցառմանը:

**Չնայած** (շաղկապ) տրամադրություն չուներ, բայց գնաց այդ միջոցառմանը:

**Նախքան** (կապ) նրան տեսնելը մի լավ ծանրութեքև արեց իրադրությունը:

**Նախքան** (շաղկապ) նրան կտեսներ, մի լավ ծանրութեքև արեց իրադրությունը:

**Փոխանակ** (կապ) մի բան ասելու՝ լուր նստել էր:

**Փոխանակ** (շաղկապ) մի բան ասեր, լուր նստել էր:

## Կ Ա Ր Ժ Ո Ւ Բ Ե Ր Ը Ն Ա Ր Ա Ր Ե Ր

**ա** Առանձնացրու բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունները՝ ուշադրություն դարձնելով կապակցման միջոցներին:

**բ** Որոշիր, թե երկրորդականը զիսավորի ո՞ր անդամին է փոխարինում:

Սենք հայ էինք ծնվել այս երկնի տակ, այստե՛ն,

Մինչդեռ երկնի տակ հայրենիքը հայի

Ամեն ծնվողի հետ ստանում էր նոր տեսք:

Եվ ցա՞վն է արդյոք վտանգավորը,

Թե՞ հենց այն դեղը,

Որով ձգտում ենք ցավը դարմանել:

Մաքրություն է պետք՝ ժպիտի՛ ձեռվ,

Որ մտնենք նրա տաք քաղցրության մեջ,

Ինչպես մեղուն է փեթակն իր մտանում:

Ես խռովել եմ նաև աշխարհից,  
Եկ ու վերստին հաշտեցրո՞ւ դու մեզ,  
Թե չե ես այսպես ապրել չեմ կարող  
(Դ.Մ.):

Երազիս տեսա՝ օրո՞ք ու շորո՞ք  
Քարվանն էր անցնում զնգալով անուշ...

Երբ բաց եղան գարնան կանաչ դռները,  
Ընար դառան աղբյուրները Բինգյոլի...

Իմ ընկերները իմ վեհ մըտքերն են,  
Որ վեհ թևերով անհունն են պատում (Ա/

**Նկար**

## Կառակցությունների շարան

Սովորիր և գործածիր նախադասություններում:

օդ

**օդային ամրոց կառուցել** – անիրազործելի ծրագրերով ապրել  
օդ ու ջրի պես – կենսականորեն անիրաժեշտ  
օդով սննվել – ապրուստի սիջոցներից գուրկ լինել  
օդից կախված լինել – չիրազործվելու հետանկար ունենալ  
օդում կրակել – ապարայում, աննպատակ, զոր խոսքեր ասել  
օդը մաքրել – ասվում է վաստ մարդու համար, որ հեռանա, ազատի  
բոլորին իր ներկայութունից

## Լսենք մեծերին

Լինել լավ մարդ նշանակում է ոչ միայն շամել անարդար բաներ, այլև  
այդ բանը չցանկանալ:

Դիմումիցից

## **Ստորադասական շաղկապների իմաստային հարաբերությունները**

Ստորադասական շաղկապները ոչ միայն շաղկապում են, այլ նաև ճշտում են գերադաս և ստորադաս բաղադրիչ նախադասությունների միջև դրսերփող իմաստային հարաբերությունները:

Գերադաս նախադասություններին ստորադաս բաղադրիչ նախադասությունները կապակցվում են տարբեր հարաբերություններով.

**Ենթակայական,** եթե գերադաս նախադասության ենթական արտահայտված է ստորադաս նախադասությամբ, **ինչպես՝**

**Ինձ քվաց, քե հեռվից ձայներ եմ լսում:**

**Ստորոգելիսական,** եթե գերադաս նախադասության ստորոգելին արտահայտված է ստորադաս նախադասությամբ, **ինչպես՝**

**Ծնողների ողջ մտահոգությունն այն էր, որ իրենց զավակը լավ ուսում ստանար:**

**Որոշային, հատկացուցչային և քացահատչային,** եթե գերադաս նախադասության այս անդամները արտահայտված են ստորադաս նախադասությամբ, **ինչպես՝**

**Երիտասարդը, որ զրավել էր բոլորի ուշադրությունը, շատ աննկատ հեռացավ:**

**Ծերտնին ուզում էր մտապահել նրա դեմքը, ով իրեն օգնեց տունդարձի ճանապարհին:**

**Մենք, որ միշտ կարևորում ենք քո խոսքը, անպայման հետազոտմ կառաջնորդվենք Զեր խորհուրդներով:**

**Խնդրային,** եթե գերադաս նախադասության խնդիրը արտահայտված է ստորադաս նախադասությամբ, **ինչպես՝**

**Պառավ Մարանը ուզում էր, որ տան մաքրությունը լիներ անթերի:**

**Պարագայական,** եթե գերադաս նախադասության պարագան արտահայտված է ստորադաս նախադասությամբ, **ինչպես՝**

**Չնայած լրոյսը բացվել էր, բայց նա չէր շտապում աշխատանքի:**

Այս բոլոր հարաբերություններն իրականացվում են

- ա) ստորադասական շաղկապներով,**
- բ) հարաբերական դերանուններով ու հարաբերյալներով,**
- գ) շարահարությամբ:**

### Առաջադրանքներ

**ա) Տրված քազմաբարդ նախադասություններում գտի՞ր և դո՛րս գրիր երկրորդական նախադասությունները՝ նշելով կապակցման միջոցները:**

Եվ Հայր մարդպատը, որ կյանքում հազար ու մի բան էր տեսել մինչև այս տարիքին հասնելը, մասնակցել հազար ու մի անազնիվ գործարքի, նա, որ ստվոր էր ոչնչով զգարմանալ, ոչնչից շապշել և ոչ մի բանից չխորշել, հիմա մի տեսակ կեղտոտված համարեց իրեն (*Դ. Զ.*):

Ալեքսանդրը, որ արդեն վերագտել էր նախկին անմարդկային դաժանությունը, նկատելով իմ զուապ մերժումը, անմիջապես զոռաց, թե հավանորեն ես սիրում եմ միայն ուսատ-լիխում կամ ծիծեռնակի բույն (*Ա. Ա.*):

Թվաց, թե վարունզի քաղի վրայից ժապում էին դեղին ծաղիկները (*Վ. Ա.*):

Արամը, որ կանչել է տվել **Փառենին**, նատած է քարին՝ ծնկներն իրարից **հեռու**, աջ ձեռքը դրել է սրի պատյանին և նայում է ընկերոջ՝ **Կարոյի** աչքերին, որոնք կարող են լեռներ բնողգրկել (*Մի. Ա.*):

Ու նոքա, որ սիրեցին-սիրտըս նրանց չըտվի,

Գնացին ու չըդարձան, ու **ինձ** ոչինչ չըմնաց (*Ա. Տ.*):

Ես՝ **որպես ծաղիկն Արազի ափին**,  
Նայում ջրերին, կարոտում եմ դեռ,  
Դուք, որ հեռացաք այն սև օրերին,  
Դուք չե՞ք կարոտում, իմ հեռավորներ,  
Իմ պանդուխտ հայեր (*Հ. Ը.*):

Ո՞ւ է Արարիչը,  
Որ խեղբեղով մթից  
Գոռաց.

«Եղիցի լույս...» (*Վ. Դ.*):

Այն, որ **են ին**, որ իմն էր առաջ,  
Արդեն չի հառնի և ոչ մի գրքում... (*Ե. Զ.*)

Նկար  
Արաքսի  
ափին

Ու ողջ դաշտի մեջ մի տուն կա միայն,

- Եվ Հայաստանն է միակ տունը պերճ (Հ. Շ.):
- թ** Գլխավորի ո՞ր անդամին են լրացնում այդ երկրորդականները.  
փակագծում զիիր հարցը:
- #թ** Ի՞նչ պաշտոն են կատարում տրված նախադասություններում  
ընդգծված անդամները:

Ըստ իմաստի ստորադասական շաղկապները լինում են՝

**ա) մեմիմաստ**

**թ) բազմիմաստ**

Սենիմաստ շաղկապները սովորաբար կապակցում են մեկ բնույթի երկրորդական նախադասություն, **ինչպես՝ քանի որ, թեև, որովհետև,** **նախքան** և այլն:

Բազմիմաստ շաղկապները կապակցում են տարբեր իմաստային հարաբերություններ, **ինչպես՝ որ** շաղկապը:

**Օրինակ՝**

Բոլոր անհանգստացնում եր այն, **որ** Արմենը խիստ անտարբեր եր դարձել ամեն ինչի նկատմամբ:

**Դուք՝ որ** այդ մասին տեղեկացրել էիք տնօրենին, հասա՞ք ինչ-որ արդյունքի:

Կարծում եմ, **որ** նա չի մասնակցի մեր քննարկումներին:

Բոլորովին կարիք չկա, **որ** դու անհանգստանաս այդ երիտասարդի համար:

### Առաջադրանի և հարց

**ա) Դուքս զրիր երկրորդական նախադասությունները, կապակցման միջոցները:**

**թ** Գլխավորի ո՞ր անդամին են լրացնում կամ փոխարինում դրանք:

Հարևանները մտահոգ պատմում են, որ զիշերը կասկածելի ձայներ են լսել:

Անվերջ հարցնում եր, թե իր հետ ինչպես կվարվեն այդ դեպքից հետո:

Ես շարունակում եմ լսել այն, ինչ ինձ վաղուց արդեն չեմ հետաքրքրում:

Ես հասկացա ու զիտեմ, որ աշխարհը մի

Երգ է. ինչեղ, իրաշունչ- իրաշունչ քամի...

Բայց ես զիտեմ, որ սիրեցի քեզ մի օր,

Երբ հասկացա, որ աշխարհում դու չկաս,

Բայց երազի ուղիներով հեռավոր

Դու մի զիշեր պիտի իջնե՞ս, պիտի գաս (Եղ. Ջ.):

Ոստիկանները հարցուփորձ արին նաև նրանց մասին, թե ովքեր են վերջին անգամ զյուղից հեռացել:

Ամենից շատ խոսում էին նրանից, որ այդ տղան իրենց շատ էր մտահոգում:

Այն մասին, թե ինչպես են շարունակելու ապրել, հետաքրքրվում էին բոլորը:

Բոլորն էին պատճում այն մասին, թե ինչ սխրանքներ է կատարել նա կովի դաշտում:

**Փորձի՛ր իիշել շաղկապական մի քանի կապակցական կաղասպար.**

❖ **Մինչ, մինչև (որ), թե չե, մինչդեռ, նախքան, քանի, քանի դեռ**

շաղկապներով կապակցվում են այն երկրորդական նախադասությունները, որոնք արտահայտում են գերադաս նախադասության ստորոգյալի գործողության ժամանակը:

❖ **Հենց (որ)**

**Օրինակներ՝**

**Հենց ոք** արջի կիանդիպես, ուժգին բղավի՛ր:

Նստում էինք և սպասում

**Մինչև** պապը զար,

**Մինչև** բակում Ծաղիկ եղան

Չանգը ծլնօքար (Հ. Ա.):

**Մինչ, թե չե, մինչդեռ** շաղկապներով երկրորդականները գերադաս նախադասությանի կապակցվում են առաջադաս ոլիքով, **ինչպես՝**

Արմենը Կարենի հետ ընկերացավ **թե չե**, սկսեց այլ կերպ մտածել:

**Մինչ** դու այստեղ գոր ժամանակ ես վատնում, ընկերներդ ավարտին են հասցնում իրենց գործը:

**Մինչդեռ** մենք տոնում էինք մեր բոնցքամարտիկի հաղթանակը, նրա հակառակորդը լուրջ Վնասվածք էր ստացել:

### Դիշի՛ր

Եթե **մինչդեռ** շաղկապը հանդես գա երկրորդ բաղադրիչ նախադասության մեջ, կստացվի բարդ համադասական նախադասություն, **ինչպես՝**

Սենք տոնում էինք մեր բոնցքամարտիկի հաղթանակը, **մինչդեռ** նրա հակառակորդը լուրջ Վնասվածք էր ստացել:

### Առաջադրանիւր և կարծություններ

**ա** Կազմի՞ր նախադասություններ մինչև որ, քանի, քանի դեռ, նախքան շաղկապներով:

**բ** Քո ընտրած թերթից կամ անսագրից դուքս գրի՞ր բարդ ստորադասական նախադասություններ՝ որոշելով կապակցման միջոցները:

**գ** Կետերի փոխարեն տեղադրիր համապատասխան կապակցման միջոցը՝

երբ, մինչ, մինչև, մայրան, իենց որ:

Բավկական առաջացել էինք, ... քեզի Երանոսը ձեռնափայտի թերևն հարվածով ջորու գլուխը շրջեց:

Հացկերույթը նույն էր վերջանալուն, .... սենյակ մտավ խուզած բեղերով, շարժուն աչքերով մի երիտասարդ:

... անցորդը կրերվեր, նա շալը քաշեց երեսին ու կպավ մութ պատին:

Բայց ահա մի անգամ լուսադեմին, ... հերթական մորթը պետք է տեղի ունենար, ներին իրաժարվում է ոչխարի առաջն ընկնել:

.... սկսվում է անձրևը, և մարդիկ նրանից պաշտպանվելու համար ծածկերի տակ են վագում, ես դուրս եմ գալիս ու քայլում բաց երկնքի տակ:

Եվ ... հասել է մեր գյուղի թիկունքը փակող ցածր սարի կատարին, Դիլիջանի հովիտը նրա դեմ է ելել իր ողջ շքեղությամբ՝ անձրևից լվացված ոսկեգույն արտեր, հնձի հասած ծաղկուն մարգագետիններ:

### Սեղագործական աշխատանիւր

Կազմի՞ր կապակցված խոսք՝ «Ես չեմ ցանկանում ստել» վերնագրով՝ գործածելով ստորադասական շաղկապներ:

Ջանի որ, որովհետև, քանզի, որովհետև..ուստի, այն պատճառով... որ շաղկապներով կապակցվում են այն երկրորդական նախադասությունները, որոնք արտահայտում են գերադաս նախադասության ստորոգյալի գործողության պատճառը:

**Օրինակներ՝**

Ես չեմ ցանկանում հանդիպել այդ մարդուն, քանի որ ներքին քնազրով գգում եմ նրա եռոթյունը:

### Առաջադրանիւր

**ա** Ըստգծի՞ր երկրորդական նախադասությունը՝ փակագծում նշելով գլխավորի թելադրած հարցը:

Որովհետև վայրի ոչխարն ու այծը ինձնից ավելի սուր լսողություն ու հոտառություն ունեն, ուստի նրանք իմ ներկայությունը ավելի շուտ են զգում:

Սուլլանը ձգտում էր Սասունի հարցը օր առաջ լուծել, քանի որ օսմանյան կայսրության տարածքում սպառնալից չափերով ծավալվում էին բնդիմադիր շարժումներ:

Հենց դադարում էր փոթորիկը և արևը դուրս է նայում ամպերի տակից, զոլորշին բարձրանում է մեր վրայից, արագ չորանում են մեր քրջված շորերը:

Հայ առևտրականը իր ապրանքը սպառելու համար չէր կարող դրանք գյուղեր տանել, որովհետև ճանապարհին կողոպտվելու վտանգ կար:

Սուլլանի զինվորները չին կարողանում զրբի հետևից հասմել այն պատճառով, որ ճիերը մինչև զավակները խրվում էին ճյան մեջ:

**Մինչ** դու գնացիր և երկիրն ամբողջ քեզ հետ տարար,

Ես ավերակներին ինչպե՞ս քագավորեմ (*Խոր*):

**Բ** Առանձնացրո՛ կապակցման միջոցները և նշի՛ր՝ մենադի՞ր, թե՞ զոգադիք են:

**Գ** Կազմի՛ր կամ գեղարվեստական գրականությունից դուրս գրիր նախադասություններ պատճառի հարաբերություն արտահայտող շաղկապնիով:

❖ **Որպեսզի,** որ շաղկապներով կապակցվում են այն երկրորդական նախադասությունները, որոնք արտահայտում են գերադաս նախադասության ստորոգյալի գործողության նպատակը:

**Օրինակներ՝**

Կուգեմ ծաղկի պես բուսնել ծեր ափին,

**Որ** միշտ ծեզ նայեմ, հայրենի՛ ջրեր... (Հ. Ծ.):

Չույրը շրջեց գլուխը, **որպեսզի** եղբայրը չնկատի իր դառն արցունքները:

### Դիշի՛ր

#### Ճիշտ

Անհրաժեշտ է, **որ** իմանաք այդ ամենը:

Ես ուզում եմ, **որ** դուք լավ սովորեք:

Մենք ցանկանում ենք, **որ** բերքը առատ լինի:

#### Սխալ

Անհրաժեշտ է, **որպեսզի** իմանաք այդ ամենը:

Ես ուզում եմ, **որպեսզի** դուք լավ սովորեք:

Մենք ցանկանում ենք, **որպեսզի** բերքը առատ լինի:

## Ս ո ա ջ ա դ ր ա ն գ լ ե ր

**❖** Կազմի՞ր կամ գեղարվեստական գրականությունից դո՞ւրս գրիր նախադասություններ նպատակի հարաբերություն արտահայտող շաղկապներվ:

**❖** Որոշի՞ր երկրորդական նախադասությունները՝ ընդգծելով կապակցման միջոցները:

Այսր մենք ծնվեցինք, որ ավելի ազնիվ պահեինք մեր ազնիվ հողը: Մենք ծնվեցինք, որ մեր միջից հանեինք աղակալած զայրույթը: Մենք ծնվեցինք, որ մեր հիշատակներն զգան՝ մենք ծնվել ենք ու մենք էլ պիտի դառնանք բարի հիշատակներ...

Հիմա մորս հետ մեր հիմ զորգերը լցնում ենք լեռնային գետակն ու մահակով հարվածներ տալիս, որպեսզի մաքրվի՝ շըրպ, շըրպ, շըրպ (*Հիշ Ա.*):

❖ Եթե, եթե... ապա, եթե միայն, միայն թե, թե, թե որ, որ, այն պայմանով... որ շաղկապներով կապակցվում են այն երկրորդական նախադասությունները, որոնք արտահայտում են գերադաս նախադասության ստորոգյալի գործողության պայմանը՝

**Օրինակներ՝**

**Եթե աշխարհը նույնն էր մնալու**

**Եթե քո ջանքից**

**Նրա թեորը չէր թերևանալու,**

**Էլ ո՞վ էր ասում,**

**Որ այնքան ծանր հոգսերը նրա**

**Առնեիր քո քույլ ուսերի վրա** (*Հ. Ա.*):

Հաճախ եթե-ն լնկնում է որ շաղկապից հետո, **ինչպես՝**

Ըս վախենում էի, որ եթե խուզարկվեմ, իմ փոսն էլ պատրաստել կտա (բրգմ.):

Նման կառույցներում որ շաղկապին անմիջապես միջադասվել է պայմանի պարագա երկրորդականը՝ **եթե խուզարկվեմ**, իսկ որ-ի շարունակությունն է իմ փոսն էլ պատրաստել կտա, որի բնույթը պատճառի պարագա է:

## Ս ո ա ջ ա դ ր ա ն գ լ ե ր

**❖** Կազմի՞ր կամ գեղարվեստական գրականությունից դո՞ւրս գրիր նախադասություններ պայմանի հարաբերություն արտահայտող շաղկապներվ:

**▶ Տրված նախադասություններում ընդգծիր կապակցման միջոցները՝ նշելով, թե ինաստային ինչ հարաբերություն են դրանք արտահայտում.**

Եթե մեկն այդ պահին մոտենար նրա ափին և ուշադիր նայեր ջրերի խորքը, կտեսներ մեծ եռուզեն՝ մի խառիճաղաղաց իրարանցում:

Առյուծն ու վագրո, եթե ուզենան, մեկ-երկու օրում կոչնչացնեն անտառի բոլոր բույլ կենդանիներին:

Եթե քրդերին չհաջողվի հայերին ծնկի բերել, ապա մարտի մեջ կմտնի կանոնավոր բանակը:

Եթե մեկը տասր տարի օգտագործում էր մի արոտավայր, ապա այդ տարածքը այլս դառնում էր նրա սեփականությունը:

Ու մինչ ներկաները կրոլորեին նրա շորջը, ու մինչ բոլորը կսպասեին նրա երգին, երդիկից ներս ընկած արեաշողի ոսկե խուրձի տակ աղամանդի պես ճառագայթող քամանչան ասես սրտի խորժից մեղմիկ հառաչեց ու հառաջանքը տարածվեց շորջբոլորը (Հ. Պ.):

### ❖ **Թեև, թեաւետ/և, թեկուզ/և, չնայած/ոք/, փոխանակ**

Այս շաղկապներով կապակցվում են այն երկրորդական նախադասությունները, որոնք արտահայտում են գերադաս գերադաս նախադասության ստորոգյալի գործողության կատարման հիմունքն ու հակառակ հիմունքը: Գերադաս և ստորադաս բաղադրիչ նախադասությունները իրար կապակցվում են ավելի հաճախ գուգադիր շաղկապներով:

### **Օրինակներ՝**

**Չնայած** փոտրակը ծածկված էր թաց կանաչով, **սակայն** այնուեղ տաք էր, թմրելու աստիճան տաք ու հաճելի (Հ. Պ.):

**Թեև** օրվա չափաբաժն դեղն ընդունել էր, **բայց** իրեն դարձյալ լավ չէր զգում:

### Առաջադրանքներ

**▶ Տրված նախադասություններում ընդգծիր կապակցման միջոցները՝ նշելով, թե ինաստային ինչ հարաբերություն են դրանք արտահայտում.**

Թեև հեռավոր սարերի գոգերում ձյունը դեռ նստած էր բամբակի նման, բայց ամենուրեք կանաչ էր ու ծաղիկ (Հ. Պ.):

Ես ձայն չեմ հանում, թեև դա ինձ ցավ էր պատճառում:

Թեավետ ջրերը ցամաքել են, բայց աղբյուրի տեղը մինչև օրս էլ կա:

Չնայած որ սաստիկ հոգնած էր, Ներսիկը մեկ-մեկ գրավվում էր ճանապարհի երկու կողմերում երևացող ծաղիկներով:

Չնայած պառավն ինձ զգուշացրեց Շամբրամի «ուղտի քարերից», բայց ես մոլորդեցի Նեմրութի ավագարլուրների մեջ:

**¶** Կազմիր կամ զեղարվեառական գրականությունից դուքս օրիր նախադասություններ պայմանի հարաբերություն արտահայտող շաղկապներով:

**գ** Տրված նախադասություններում գտիր և որոշիր՝ կապակցման միջոցները համադա՞ս, թե՞ ստորադաս բաղադրիչներ են կապակցել:

Քարի՞ խփեցի, թե՞ հարված կպավ մի ծառի, չեմ հիշում: Հասկանում էի, որ դրանով քենիս ինձ է պատժում: Եթե որսկան Վաշագը մի հրաշրով զլուխը վեր քաշեր ու տեսներ իր սիրած Խուատուֆը վերակենդանացած այս կտավի վրա, կզոհար իր տված պատժի համար: Ասի՞ մի քիչ քննմ, հետո շարունակեմ ճանապարհ: Աքյորը, շատ անհանգստացած լինելով հանդերձ, իրեն պահում էր կտանգի սահմաններից դուքս, մինչդեռ մայր բաղը մեզ զարմացրեց իր անձնազնությամբ: Մինչ Հարությունը խոսում էր այդ ժայռերում մի ժամանակ պաշարված մեր նախնիների մասին, մեր մեքենան իջավ բերդի ստորոտի (Վ. Շ.):

## Կադակությունների շարան

Սովորիր և գործածիր նախադասություններում:

### արև

արև առնել մեկի վրա – որևէ անձի համար լավ, հաջող օրեր սկսվել

արև լինի՝ մարդու վրա չի ծագի – չկամ, անբարյացակամ մարդու մասին

արևը առնել – մեկին կյանքից զրկել

արևը բաշխել – մեկի կյանքը խնայել

արեր վատ տեղ է մայր մտել – խոսելու կամ գործելու համար

աննպաստ պայմաններ լինել

արևի ապրի – բարեմաղթանքի արտահայտություն, օրհնանք

## Լենք մեծերին

Եթե ինձ հարցնեիմ, թե մոլորակի վրա որտեղ կարելի է առավել շատ հրաշքների հանդիպել, ես առաջինը կտայի Հայաստանի անունը:

Մոխունից Քեներ

## 2. Հարաբերական դերանուններ և հարաբերյալներ



**Երբ** մանկությունս հավիտյան չվեց ժիթեռների եես իմ թրթիռ գարնան,  
**Երբ** մանուկ կյանքիս կոկոնից բացվեց Ծաղիկն իմ աճեղով պատանեկության,  
 Չզիտեմ ինչու պատանի ոգիս  
Երանի տվեց մանուկ անցյալիս (Հ. 6.):

Բարդ ստորադասական նախադասություններում գերադասը ստորադասին կապակցվում է նաև **հարաբերական դերանուններով**: Վերջինս հանդես է գալիս երկրորդական նախադասության մեջ:

### Օրինակներ՝

**Ով** ներս էր մտնում, մեղքը զցում էր պատանու վրա:

**Երբ** նրան տեսնես, բարենենք ի հաղորդիր:

Իմ ձեռքն ընկան այն բորբոք, **որոնցով** կարող էի գործ շարունակել:

### Քարց

**Որո՞նք** են կոչվում հարաբերական դերանուններ և ի՞նչ են ցույց տալիս:

Հարաբերական դերանուններն են՝ **ով**, **ինչ**, **ինչպիսի**, **ինչքան**, **ինչչափ**, **ինչպես**, **որ**, **որքան**, **որպիսի**, **որերորդ**, **որտեղ**, **երբ**, **ուր**, **քանի**, **քանիսը**, **քանիերորդ**:

Հարաբերական դերանունները հաճախ հանդես են գալիս որ քարմատար շալկապով, **ինչպես** **ինչ որ**, **երբ որ**, **ինչպես որ**, **ուր որ** և այլն:

Գերադաս նախադասության մեջ հաճախ առկա է լինում **հարաբերյալ**, որը գիտավոր նախադասության մեջ կատարում է շարահյուսական պաշտոն: Այդ պաշտոնն էլ հենց արտահայտված է լինում երկրորդական նախադասությամբ:

Որպես հարաբերյալներ մեծ մասամբ հանդես են գալիս **այն**, **այնպիսի**, **այնտեղ**, **այնքան**, **այնչափ**, **այնպես**, **նա** ցուցական դերանունները, որոնք իրենց իմաստով փոխարինում են գոյականին, ածականին, թվականին, մակրային:

### Իմացի՛ր

Եթե զիսավորում կա հարաբերյալ, ապա այդ հարաբերյալն ու երկրորդական նախադասությունը նույն պաշտոնն են կատարում:

### Օրինակ՝

Վերջապես մենք կանգնեցինք այն բարձունքի գլխին, որտեղից բացվում էր մի հետաքրքիր տեսարան:

Տրված օրինակում գլխավոր նախադասության մեջ առկա այն ցուցական դերանունը հուշում է, որ երկրորդականը փոխարինում է զլխավորի որոշչին: Այս դեպքում արդեն ունենում ենք հարաբերյալ-հարաբերական դերանուն կապակցական կադապարը:

Գլխավորում հարաբերյալի առկայությունը գերադաս նախադասությանը զրկում է ինքնուրույնությունից:

### Օրինակ՝

Սա այն ճանապարհն է, որն այդպես էլ չի վերանորոգվում:

**Այնպիսի** քախիծ տեսա կենդանու աչքերում, որ փշաքաղվեցի:

### Իմացի՛ր

Առանց հարաբերյալի պարագայական հարաբերություն արտահայտելիս գերադասը լիարժեք անկախություն ունի:

### Օրինակ՝

**Մենք կգանք տուն,** երբ մութի դեռ դնկած չի լինի:

Բերված օրինակներում՝ **Սա այն ճանապարհն է, Այնպիսի քախիծ տեսա կենդանու աչքերում,** գերադաս նախախադասությունները չեն կարող ինքնուրույն բնկալվել, քանի որ նրանցում առկա են այն, այնպիսի հարաբերյալները, մինչդեռ երկրորդը՝ **Մենք կգանք տուն,** ունի հարաբերական անկախություն, երկրորդականը չի ենթադրվում:

### Առաջադրանք

**Ա** Ընդգծի՛ր երկրորդական նախադասությունները և որոշի՛ր, թե գլխավորի որ անդամին են նրանք լրացնում:

**Բ** Որոշի՛ր յուրաքանչյուր նախադասության կապակցական կադապարը:

Երանի՛ նրան, ով իր անձը զոհաբերում է հանուն հայրենիքի:

Հազար ափսոս նրանց, ովքեր չապրեցին մինչև այս երջանիկ ժամանակները:

Իսկական բժիշկը զնահատվում է նրանցից, ովքեր նրա մեջ տեսնում են նվիրյալ ու անձնազրի մարդուն:

Տիկին Հակոբյանը հարգված է նրանց կողմից, ովքեր քիչ թե շատ նրան ճանաչում են:

Խոսքս վերաբերում է հատկապես նրանց, ովքեր գործի հանդեպ հետաքրքրություն չեն ցուցաբերում:

Ծերտնին իր ողջ կյանքն ապրեց նրանց հետ, ովքեր միշտ զնահատում էին իր փորձառությունն ու իմաստությունը:

Քայլի՞ր նրա հետ, ով դժվար պահին քեզ չի լրում:

Դու անմտորեն հետացար նրանից, ով դժվար պահերին քեզ միշտ սատար էր կանգնել:

**Փորձի՞ր իիշել հարաբերյալ-հարաբերական մի քանի կապակցական կաղապար.**

- ❖ Այնտեղ... որտեղ, որ
- ❖ Այնտեղից... որտեղից, որտեղ, որ
- ❖ Այնտեղով... որտեղով

Այս կապակցական կաղապարով երկրորդական նախադասությունը արտահայտում է զերադաս զերադաս նախադասության ստորոգյալի գործողության տեղը:

**Օրինակներ՝**

Թաքնվեց այնտեղ, որ (որտեղ) նրան ոչ ոք չէր կարող գտնել:

### Դիշի՞ր

Ուստերենի ցու-ին (նշում է բուն տեղի հարաբերություն) համարժեք է և որտեղ -ը, և որ-ը, ուստերենի կուծա-ին (նշում է ուղղություն) համարժեք է միայն որ-ը:

### Առաջադրանք

**■ Տրված նախադասություններում ընդգծիր կապակցման միջոցները՝ նշելով, թե ինստային ինչ հարաբերություն են դրանք արտահայտում.**

Տղաները պառկում էին այնտեղ, որտեղ արևի ճառագայթները հասցրել էին տաքացնել:

Չբռաշրջիկները արշավը սկսեցին այնտեղից, որտեղ երեկ կանգ էին առել:

Չորքը անցավ շրջափակման օղակը այնտեղով, ուր մարդկային ոտք, թվում էր, չէր դիպել:

Արշավախմբի անդամներն սահմանը հատեցին այնտեղով, որտեղով սովորաբար միայն փորձառու և մարզված լեռնարշավորդներն էին անցնում:

**▶ Կազմի՞ր նախադասություններ տրված կապակցական կաղապարներով:**

այն ժամանակ...երք, այնտեղ...ուր, այն դեպքում, երք

- ❖ Այնպես... որ, թե
- ❖ Այնպես... ինչպես (որ), ինչ ձևով, ինչ կերպ, ոնց որ, ասես (թե), կարծես (թե)

Այս կապակցական կաղապարով երկրորդական նախադասությունը արտահայտում է գերադաս նախադասության ստորոգյալի գործողության ձևը:

### Օրինակներ՝

Նա ամուսնուն **այնպես** էր ցույց տալիս, թե ինքը ոչինչ չի իմացել, և վաղուց արդեն մոռացել է իրենց ընդհարումը:

Դա օգոստոսին էր, բայց **այնպես** ցուրտ էր մեր սարերում, որ շնորհանգամ դողում էին իրենց բներում:

Սակայն Լևոնը այդ առավոտ ծովափ գնաց **այնպես** զգույշ, որ ձկնորսներն իրեն չտեսնեն և չկանչեն՝ թոռ կարկատելու:

### Առաջադրանք

Կազմի՛ր նախադասություններ տրված կապակցական կաղապարներով:

- ❖ Այնքան... որ,
- ❖ Այնքան... որքան, ինչքան, ինչչափ, մինչև/որ/

Այս կապակցական կաղապարներով երկրորդական նախադասությունը արտահայտում է գերադաս նախադասության ստորոգյալի գործողության չափն ու քանակը:

Վերցնենք հետևյալ օրինակը՝

Դու **այնքան** խմի՛ր, **որ** առյուծ հեծնես,  
Որ առյուծ հեծնես, ուր ուզես, տանի,  
Այս, ոչ թե **այնքան**, **որ** ձիղ կորցնես,  
Նև գինին մորդ էլ մտրիցդ հանի (Հ. Ծ.):

Տրված օրինակում գերադաս նախադասությունները՝ **Դու այնքան խմիր և Այս, ոչ թե այնքան**, ստորադասներին կապակցվել են **այնքան-որ** հարաբերյալ-շաղկապ կապակցական կաղապարով:

**Որքան էլ մարդիկ աշխատում էին հանգնել կրակը**, այնքան այն բորբոքվելով ավելի էր տարածվում:

Այդ մարդիկ ինձ այնքան տարան ու բերեցին, որ ես հոգմեցի **քարափից քարափի գնալուց**, մի հանդից մյուսը վազելուց:

**Որքան հեռացա Կարմիր ծառից և Զանգակ սարից**, այնքան Գուտգուռայի գոռոցը նվազեց:

**Այնքան** սրան-նրան խարեց, մինչև բռնորդ նրանից երես թեքեցին:  
Հողը վարեց ողջ գիշեր այնքան, մինչև որ գործն ավարտին հասցրեց:

### Կ ռ ա ջ ա դ ր ա ն տ

**Կազմի՛ր նախադասություններ** տրված կապակցական կաղապարներով:


### Վ ա ր գ ժ ո ւ թ յ ո ւ ն

**ա** Տրված նախադասություններում գտի՛ր և ցույց տուր՝ որն է հարաբերյալ, որը՝ ոչ:

Գարունը այնքան ծառիկ է վառել,  
Գարունը այնպես պայծառ է կրկին.  
Ուզում եմ մեկին քննչորեն սիրել,  
Ուզում եմ անոշ փայփայել մեկին:

Եվ իմ սրտի մեջ, այն խավարում էլ,  
Սի քաղցր վիշտ է մեղմաբար խոսում.  
Մեկը այնտեղ իր հեռուն է վառել,  
Որպես երկինքը ջրի աղմասում:

Այնպես անլույս է այսօր  
Սոսպոտը լուսացել,-  
Սիրտը՝ հիվանդ ու աճզոր,  
Անլուսությամբ է լցվել (Վ. Տ.)



ՄԻՐ ՄԵՐԾԵՍ, «ՎԱՐԴԻ ԹՐՈ»

Բայց նրանք կյանքում միշտ էլ ծնվում են լոկ այն պատճառով,  
Որ անչափ շատ են սպասել նրանց:

Նրանք ծնվում են, որ ապացուցեն,  
Թե այնտեղ է լոկ սխրանքն ակսում,  
Ուր վերջանում է ամեն մի հնար:

Նա եկավ, որ մեզ վերադարձընի  
Այն, ինչ խել էր նույն բախտը երեկ (Դ. Մ.):

Բայց շուրջս այնպես գունատ էր, տկար,  
Խոսքեր չկային, ու արև չկար:

Պանդուխտների նման այն, որ հեռացել են վաղուց-  
Տուն են դառնում նորից նոր-օրերս հին ու անցած:

Նստել ես լուռ ու տխուր, իին օրերն ես հիշում այն,  
Որ եկել են ու անցել, մայր իմ անուշ ու անգին (Ե. Չ.)

**▶ Տարբերակի՞ր որ շաղկապի և որ հարաբերական դերանվան գործածությունները և որոշի՞ր ստորադաս նախադասությունների շարադասությունը:**

Վերի գյուղի ուսուցիչն ասել է, որ պատերազմը շուտ չի վերջանա: Նստելու, որ իս սրտի ծանրությունն այդ մոայ ձորերն էին: Նա հավատուն էր, որ երեկոյան զանգերի հետ երկնային մի օրինություն քրթություն ներս է մտնում ու քսվում իին տան սևացած քարերին, նրա այրվող օջախին (Հ. Վ.):

Հարձակման պահին Սողոմոնը չհասցրեց տեսնել այն գնդացրորդին, որ ընկավ իր զնդակից (Ք. Վ.):

Գնահատելին այն էր, որ Վարդգեաը իր գործը կատարում էր ամենայն բժախնդությամբ:

Մեզ բոլորիս անշուշտ մտահոգում էր, որ նա օրերով լոռում էր և բացառակ ոչ մի բառ չէր արտասանում:

Տղան, որ կուչ էր եկել թախատի մի անկյունում, ուշադիր հետևում էր մեծերի խոսքին, որ հանկարծ մի բառ բաց չթողնի:

## Կադակցությունների շարան

Սովորի՛ր և գործածի՛ր նախադասություններում

### Երկինք

Երկնքում սավառնել – երազմերով ապեկել

Երկնքից աստղեր վայր բերել – շատ հնարագետ լինել

Երկնքի աչքեր – աստղեր

Երկնային ջահ – արև

Երկնքի և երկրի միջև ապրել – օքնան, հանգրվան շունենալ

Երկնային քազակոր – Աստված

Երկնքից երկիր բնկնել – պատրամքներից ազատվել

### Լսենք մեծերին

Չկա մարդ, որմ ազատությունը չսիրի, սակայն արդարամիտն այն պահանջում է բոլորի համար, անարդարամիտը՝ միայն իր համար:

Վյուղին

### 3. ԱՆՇԱԴԿԱՎ ԿԱՊԱԿցՈՒՄ

Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների կապակցման մյուս եղանակը անշադկավ կապակցումն է՝ շարահարությունը: Այս կապակցություններում հիմնական ուշադրությունը պետք է դարձնել հնչերանգին և բայ-ստորոգյալների եղանակաժամանակային ձևերի հարաբերակցությանը:

### **ԶԵՂՅՎԱԾ ՉԱԴԿԱՓՈՎ ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

**Ասում են՝ ուռին**

**Աղջիկ էր ինձ պես... (Հ. Թ.)**

Բերված օրինակում բարդ ստորադասական նախադասության գերադասը՝ **Ասում են**, կապակցվել է ստորադաս նախադասությանը՝ **ուռին աղջիկ էր ինձ պես**, շարահարությամբ:

Շարահարությամբ կապակցված բարդ ստորադասական նախադասություններում էական դեր է կատարում հնչերանգը, որը լինում է՝

**նախազգուշական, ինչպես՝**

**Գաս՝ կզնանք:**

**ստորադասման, ինչպես՝**

**Բացատրի՛ր՝ հասկանամ:**

Բարդ ստորադասական նախադասություններում հաճախ զեղչվում են ստորադասական շադկապահները՝ **ոք, քե, եքե**, հարաբերական ինչ դերանունը, և զեղչված շադկապահ փոխարեն դրվում է բուք:

**Օրինակներ՝**

**Թվում էր՝ /թե/ չորացել էր եիշողության հորդաբուխ աղբյուրը:**

**Արդեն երեք շաբաթ էր՝ /ինչ/ գործ չկար:**

**Այս քանի օր է՝ /ինչ/ լարված հետևում ենք դեպքերի ընթացքին:**

**Ասում էին՝ /որ/ ոչ ոք իմ գոյության մասին չզիտեր, ու ոչ ոքի պետք չէր՝ /թե/ ես կամ , քե չկամ:**

Հաճախ ստորադաս նախադասությունը գործածվում է առաջադաս, **ինչպես՝**

**/Եքե/ Ծաղիկը, ծառը չիմեն՝ նարդը կիսելազարվի:**

**/Ո՞ն/ Խեղացի՞ էր նա՝ չեմ կարող ասել:**

## Վարժություններ և առաջադրանքներ

**ա** Կազմի՞ր անշաղկապ բարդ ստորադասական նախադասություններ, որոնցում գեղչված են ստորադասական շաղկապները:

**բ** Տրված նախադասություններում որոշի՞ր գերադաս և ստորադաս նախադասությունները, որոշի՞ր

կապակցման միջոցները:

Տեր Հարությունը քացատրում էր, որ հայոց տառերը կարմիր են, քանզի սուրբ Մաշտոցը իր սրտից է հանել ի լույս: Եվ կարմիր են, քանզի սրբազն կոխվների են մասնակից եղել: Եվ ասեղնազործում էր հանդարտիկ, հեռվից ու մոտիկից ուշադիր զննելով, երբեմն այնպես վերացած, որ իրենց քվում էր, թե հայոց տառերը նոր-նոր հորինվում են, և տեր Հարությունն է ստեղծողը:

Գյուղում բոլորը զիտեին, որ տեր Հարությունը ճերմակ պաստառին կարմիր տառեր է ասեղնազործում՝ որպես հիշատակ այն ուսուցչի, որին սուլթանը կախաղան է հանել: **Մահապարտ այդ ուսուցիչն է հայոց այբուբենը հանգավորել** այսպես.

— Այր, թե՞ն, զի՞մ, Ե՛լ, Հովակիմ...

Ներդաշնակել է այնպես, որ երեխաները շուտ սովորեն այրութենը և բոլորովին չմոռանան: Ասում էին նաև, որ տեր Հարությունը շուտով **Հնդու աշխարհ** պետք է գնա, և գրերը տանելու է Հնդու աշխարհի հայերին:

Եթե ուրիշները տառերն ասեղնազործում էին՝ աշխարհի ծայրը հասած մի պանդուխտ հայի ուղարկելու, ապա տեր Հարությունը գրերն ուղարկելու է սուլթանին նվեր: Այո՛, այո՛. նվեր սուլթանին՝ ի հեճուկս...

— Դու մշեցի ուսուցչին կախաղան հանեցիր, իսկ սուրբ Մաշտոցի զրին ի՞նչ կարող ես ասել:

Հետո մի մամիկ լուր տարածեց, թե տեր Հարությունը երազ է տեսել երազում ճերմակ ձիավոր **Սուրբ Սարգիսը** հայտնվել է ու ասել՝ շուտով ջրհեղեղ է լինելու (*Մ. Գ.*):

**Նկար - տառեր,  
գորելեն**

- գ** Ի՞նչ խոսքի մաս են հետևյալ բառերը՝ ըստ տրված տեքստում գործածության՝ բոլորը, բանզի, երբեմն, նոր-նոր, որպես, որին, այո՛, ի հեճուկ:
- թ** Վերլուծի՛ր ընդգծված բառակապակցությունները:
- ո** Կազմի՛ր բարդ ստորադասական նախադասություններ զրո-հարաբերական դերանուն, հարաբերյալ-հարաբերական և հարաբերյալ-շաղկապ կապակցական կադապարներով:
- ե** Համապատասխանեցրո՛ւ տրված կապակցությունները և ստացի՛ր առածներ:

Սի թելր քաշես

Լուն գլխից լնկնի

Կալից ինչ խելր տեսանք

Կրակ տամ

Հավ չի դառեն

Խանձահոտ չի զա

ոսկի ձվեր է ածում

հազար կարկատան կթափւի

հազար կտոր կլինի

կալատակից ինչ տեսնենք

- գ** Որոշի՛ր կապակցման միջոցները և կետադրի՛ր, վերականգնի՛ր համապատասխան շաղկապը:

### Ս Ե Ղ Ծ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ա Ա Վ Ը Ա Ս Ա Ֆ

Ընտրի՛ր տրված թեմաներից որևէ մեկը և շարունակի՛ր իբրև կապակցված խոսք.

1. Ես սիրում եմ նորած հազմնվել, թեև մեծ հնարավորություններ չունեմ զգեստապահարան շարունակ բարմացնելու: Ուստի...

2. Իմքն էլ չմկատեց, թե ինչպես հայտնվեց իրենից տարիքով մեծ այդ տղաների շրջապատում՝ շրեղ մերենաներով ու բանկարժեք մի քանի հեռախոս գրպաններում: Սկզբում հաճելի էր, բայց կամաց-կամաց...

3. Տամիկը վատառողջ էր, փող չկար դեղ գմելու: Չնայած մայրը ողջ օրը վազրի մեջ էր, բայց շատ բան չէր հասցնում: Բայց արտասահման մեկնած հայրիկից վաղուց լուր չկար: Պետք էր աշխատանք գտնել ու...

## Կ ա դ ա կ ց ու թ յ ու ն ա ն ե ր ի տ ա ր ա ն

Սովորի՛ր և գործածի՛ր նախադասություններում:

սիրաց

սիրաց վկայել – նախազգալ, գուշակել

սիրաց դոդ բնկնել – ահարեկվել, վախենալ

- սիրտը ելնել** – հուզվել, զգացվել, նաև՝ բարկանալ  
**սիրտը կարծրանալ** – անտարբեր դառնալ ցավի հանդես, նաև՝  
 անխիղճ, չզիջող դառնայ  
**սիրտը հովանալ** – ցանկությունը կատարված տեսմելով՝  
 բավարարություն զգալ  
**սիրտը կուշ գալ** – մեծ հուզմունք՝ ցավ զգալ

### Առաջադրանք

Դու ևս գրի՛ր դարձվածքներ սիրտ բառով և բացատրի՛ր:

### Անակնկալ հարց

Իսկ դու կարո՞ղ ես մի փոքրիկ ստեղծագործություն հորինել սրտի մասին:

## **Ստորադաս նախադասության շարադասությունն ու կետադրությունը**

Բարդ ստորադասական նախադասություններում երկրորդական նախադասությունը գերադասի նկատմամբ հանդես է գալիս՝

### **ա) առաջադաս՝**

**Եթե սեր չկա, ինչի՞ համար**

Պիտի չարչարվեմ չար աշխարհում (*Վ. Տ.*):

**Եթե նա ժպտում էր, նրա կապույտ աչքերը փոքրանում էին (*Ա.Գ. Դ.*):**

### **բ) միջադաս՝**

Քիչ հետո, եթե արևը կսկսի այրել, քրտնեցնել մինչև իսկ ավագները, ձկները ջրերի խորքից վեր կբարձրանան ու կցատկուեն՝ պսպղացնելով արձարյա թեփուկները:

Այս բաժակը անշունչ, որ լուս նայում է ինձ,

Սերք ուրախ է լինում ու մերք տիրաբախիծ (*Գ. Մ.*):

### **գ) վերջադաս՝**

Ես սիրում եմ այնպես ամնապատակ ու խենք,

**Ինչպես սիրած զյոքի հերոսին են սիրում (*Ա.Գ.*):**

Սահակը պարզամտությամբ պատմում էր այն, ինչ լսել եր գյուղում՝ աղբյուրի մոտ (*Վ. Տ.*):

Բարդ ստորադասական նախադասություններում կան կառույցներ, որոնք պարտադիր թելադրում են գլխավորի և երկրորդականի շարադասության տվյալ դիրքը:

Ասենք՝

**ա)** ստորոգելի երկրորդականները պարտադիր հաջորդում են գերադաս նախադասությանը և անմիջապես հաջորդում են գլխավորի ստորոգյալին:

**Օրինակ՝**

Ծերունու ժառանգմերը նրանք էին, ովքեր գործել էին իրենց խղճի թելադրանքով:

Չո ցանկացածը այն է, որ ես չմիջանտեմ դեպքերի ընթացքին:

**բ)** բացահայտիչ երկրորդականները միշտ հաջորդում են գլխավորում առկա բացահայտյալին՝ նայած թե գլխավորում որտեղ է այն տեղակայվում, **ինչպես՝**

**Գևորգը, որը հմտութարքին է,** շատ գեղեցիկ երկարե դարպասներ է պատրաստում:

Շատ գեղեցիկ երկարե դարպասներ է պատրաստում **Գևորգը, որը հմտութարքին է:**

**զ)** Երկրորդականը միշտ վերջադաս է դրվում, եթե լրացնում է գլխավորի ոչ թե մեկ անդամի, այլ ամբողջ նախադասությանը. նման դեպքերում այն ունենում է **ինտուանքի երանք:**

### Դիմում

Ստորադաս նախադասությունը գերադաս նախադասությանը միացնող շաղկապից կամ հարաբերական դերանունից առաջ անպայման դրվում է ստորակետ:

Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ գեղշված է ստորադասական շաղկապը:

### Կարծություններ

**ա)** Կետարքիր տրված նախադասությունները և նշիր կապակցման միջոցները:

**բ)** Գտիր գերադաս նախադասությունները և նրանցում տեղադրիր երկրորդականին վերաբերող համապատասխան հարցը:

Ես չեմ հիշում որ թեորի Նահապետը երբեմ այդպես երկար խոսեր և այդպիսի խոսքերով դիմեր հարազատներին... (Հր. Ք.)

Արդյոք գիտե՞՞ր նա որ ինքը դոդանջուն անտառների ազատ երեխան է եղել որ իր մայրը այնտեղ է կաք տվել իրեն որ այնտեղ է իր հայրը եղջուրները խփել կաղնիներին: Արդյոք գիտե՞՞ր որ այդ խուլ շառաչը անո՞ւշ-ա-

Առաջ օրորել է իրեն առաջին անգամ և ո՞վ զիտե գուցե երազներ է քերել իրեն սիրուն երազներ... (Ավ. Իս.)

Գարնան ջինջ երկնքի վրայով սահում էր մի սպիտակ ամայ ասես արար աշխարհին հպարտությամբ ցույց էր տալիս որ անհաս բարձունքում լողանում է արևի շողերի մեջ:

Ինձ թվում էր թե ես նրան էլ չեմ տեսնելու:

Հավ հիշում եմ Ծուտիկին որ միշտ դպրոց էր գալիս հոր մեծ փափախը զլսին և երկար հնամաշ տրեխներով: Որք էր Ծուտիկը լոիկ-մնջիկ մի երեխա որին բոլորը սիրում էին... Զիապանի կանչը ինձ իխեցրեց որ ժամանակն է երաժեշտ տալու... Ի՞նչ էր ասում նրա համար դժվա՞ր էր որ ես հեռանում եմ Զորագյուղից... Երբ րնկերս լոեց ինձ թվաց գետակը նույն հանգով է պատմում, խոսում է նոյն կերպ ինչպես նա որ մեջքին ընկած փակ աչքերը երկնքին անզիր ասում էր մի ծանոք պատմություն... (Ակ. Բ.):

## ԿՐԿՆՈՂԱԿԱՆ

### Ա մ փ ո փ ի չ հ ա ր ց ե ր

Ո՞րն է կոչվում բարդ նախադասություն:

Ո՞րն է կոչվում բարդ համադասական նախադասություն. որո՞նք են համադասական նախադասությունների կապակցման միջոցները:

Ո՞րն է կոչվում բարդ ստորադասական նախադասություն. որո՞նք են ստորադասական նախադասությունների կապակցման միջոցները:

### S t f u s a | ի ս ա ս ի ս ա ն ֆ ս ե ր

1.

#### Մարգարիտ ու Վրիփորը

Ծովի երեսն է փրփուրը ելնում

Փայլիկում մի պահ որպես մարգարիտ

Սինչ մարգարիտը խորքում է լինում

Խորքից է ծնվում գանձը ճշմարիտ:

Բայց այսպես խոսեց փրփուրն այդ մասին

– Ինչո՞ւ տեղ չունես ծովի երեսին

Թե մարգարիտ ես... Ել ի՞նչ մարգարիտ

Ես եմ մայր ծովի գանձը ճշմարիտ

Որ միշտ ջրերի երեսն է ելնում

Ակար

Ու ես եմ փայլում  
Կյանքը վայելում...

Բայց իր վայելքը երկար չտևեց  
Սի քամի ելավ փրփուրը ցրվեց  
Հետքն էլ չմնաց ծովի երեսին...  
Սինչ մարգարիտը երբ խորքից հանվեց  
Ձեռքեձեռք խլվեց Գաճճ է գաճճ ասին  
Ահա՝ մայր ծովի միակ փառքը մեծ:  
... Մարդիկ կան որոնք փրփուրի նման  
Սիշտ կյանքի ծովի երեսն են ելնում  
Բայց խորքում որքա՞ն  
Մարգարիտներ կան  
Որոնց փառքը դեռ փրփուրն է խլում (Հ. Շ.):

### Առաջադրանիներ

**զ** Մեկնարանին առակի նմբատեքստը քո ընկալմամբ՝ օգտվելով բանաստեղծի հուշումից:

**ա** Կետադրի՞ն տրված առակը:

**թ** Գտի՞ր բարդ առորադասական նախադասությունները և ընդգծի՞ր երկրորդականները:

**զ** Գտի՞ր բարդ համադասական նախադասությունները՝ նշելով բաղադրիչ նախադասությունների քանակը:

**2.**

Սի ժամանակ կարծում էի արագիլներն են գարուն բերում: Կանգնում էի մեր բակում ցեխոտ մատներով սուլում ու ողունում էի նրանց գալուստը... Մեր բաղչում բա-բակագտիչ գործարան կար կարմիր-կարմիր տանիքով: Ահա հենց այդ կարմիր տանիքի վրա էր հյուսված արագիլների զա-բյուղածն բույնը: Ամեն զարնան սկզբին ուղիղ քաղաքի վերևում Աֆրիկայից թե մի այլ տեղից գալիս էին արագիլներն ու պտտվում: Սկզբում



պտույտների շրջանը մեծ էր կկոցում էի աչքերս գտնելու նրանց ամպերի ճերմակ փ-փուրների մեջ: Հետո շրջանը փոքրանում էր... Ասես ներ-և ից մեկը անընդիատ փաթարում կա-ճացնում էր նրանց ոտքերից կապված թելը: Եվ այս ան-ամ նրանք պտտվում էին լայն բնի շորջը: Երբ արդեն կանգնում էին տանիքին թվում էր նրանք ոտքեր չունեն: Ոտքերը կամիր էին տանիքը նոյնպես: Մայր արագիլը երկար կտուցով կամքում էր ինքն իրեն հարդարում զզզզված կե-տից փոշոտված փետուրները: Իսկ արուն գործարար տղամարդկային հայացքով զննում էր շրջապատը որևէ փոփոխություն չի՝ եղել ձմեռվա ընթացքում: Այդ օրվանից ճերմակում էին ծիրանենիները կարճահասակ քալենիները հետո դեղձենիներն էին ներկուտվում նուր-քափանցիկ ծաղիկներով: Այդ օրվանից ես մի ծառից մյուսն էի թռչում խեժ գտնելու: Այդ օրվանից հար-ան աղջիկները կարմիր դեղին կապույտ գոգնոցները սպիտակ ոտքերի արանքներում խճճելով դաշտ էին զնում քանջար քաղելու խկ ողջ գիշերները տանիքն էին ճանկ-ում մռնո կատուները: Եվ մեր խաղերն էին սկսվում գարնանային խաղերը: Այսպես էր գարունը գալիս: Արագիլներն էին բերում:

(բայր Վ. Հովհաննեսի)

### Րարցեր և առաջադրանքներ

#### **Ա**

**#ա** Լրացրո՞ւ բաց քողած տառերը:

**Բ** Վերնագրի՞ր տրված արձակ տեքստը:

**Կ** Քանի՞ պարբերություն է հնարավոր առանձնացնել տեքստում:

#### **Ը**

**Ա** Առանձին դուրս գրիր պարզ և բարդ նախադասությունները:

**Ա** Առանձնացրո՞ւ բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունները՝ նշելով կապակցման միջոցները:

**Բ** Նշի՞ր երկրորդական նախադասությունների շարադասությունը:

**Գ** Կետադրի՞ր տրված բնագիրը՝ նշելով կետադրական կանոնները:

**Դ** Դուրս գրիր դերքայական դարձվածները՝ նշելով նրանց շարահյուսական պաշտոնը:

### Առաջադրանքներ

**Ա** Տրված առածներում տեղադրի՞ր համապատասխան շաղկապը:

... ցամաք առուն ջուր գա, գորսի աջքը դուրս կգա: ... ոչխարներին խուզում են, զառների մարմնով լրող է անցնում: ... գնում, կենացները քաղցրա-

նում են: ... երեխան լաց չլինի, մայրը նրան կուրծք չի տա: ... պատը կասի, նա էլ կլսի: ... աղը հասավ, մատաղը վերջացավ: ... սոխ չես կերել, սիրտդ ինչո՞ւ է մրմռում:

**▶ Քացատրի՛ր առածների ու ասացվածքների իմաստը:**

### Առաջադրանք

Տրված կապակցական կադապարներով կազմի՛ր կամ դր' զրիր գեղարվեառական գրականությունից բարդ սոռրադասական նախադասություններ:

### Հարցեր և կարծություններ

**ա** Տրված նախադասություններում գտի՛ր և դր' զրիր երկրորդական նախադասությունները:

**բ** Գլխավորի ո՞ր անդամին են փոխարինում այդ նախադասությունները:

**գ** Որոշի՛ր կապակցման միջոցները:

Թվում է՝ լեռների լոռությունն է իջել, և Արամի նստած քարից լոռություն է բարձրանում (*Ար. Աշ.*)

**Ծովանին** թվաց, որ նրանք վազում են բռչունների հետևից, բայց **զարմանքով** նկատեց, որ մոտենում են իրենց (*Ար. Զ.*):

Պարզ լսվում էր, որ այնտեղ՝ անտառում, **դարավոր** կաղնիներն ու վայրի ընկուզենիները ճակատում էին հողմի դեմ, աղմկում և գուռում: Եվ քամին անընդհատ բերում էր անտառի այդ լիակուրծք խշշոցն ու մոռնչը, ու թվում էր, թե իրենց մեր դռան առջև է աղմկահույզ, հողմածեծ անտառը (*Ար. Դս.*):

Ու այն, ինչ չէր արել բուրքական փնթի իրետանին, արեց մեն մի բառ... (*Ք. Ա.*):

Թվում էր, թե ամեն ինչ ձայն էր արձակում (*Դ. Զ.*):

Բայց **հայտնի էր**, որ այդ հոյիկի ներսում **քոնիք** չէր եղել... Թվում էր, թե իսկայական ծաղկած մի այգի է շարժվում տեղից՝ **տարածվելու ամբողջ աշխարհով մեկ** (*Հ. Բ.*):

Թվում է՝ լսում են ես քո շունչը,

Թվում է՝ ինձ մոտ ես դու էլի,

Թվում է՝ քո ամեն մի շշունջը

Իջնում է խաղաղ այս **սողերին** (*Գ. Ա.*):

Եվ պարզ է իհմա, հստակ ու որոշ,

Որ չե՞ն էլ կարող քեզ **մեզնից** խլել,

Ինչպես չեն կարող խել մի դրոշ... (Դ. Մ-սի)

Եվ թվում է, որ ամեզք է ամեն ինչ-  
Որ ողջ կյանքը է նի ամսահնան քաղցր նինջ...

Ու թվում է, թվում, որ դու չես  
Արևող ժայռով ակնարկուն,  
Որ ուրիշ լույսով եմ դյութված ես,  
Որ քեզ չեմ, ուրիշին եմ երգում... (Վ. Տ.)

Ով քաղաքից էր հեռավոր, ուր մատախուղ էր անորոշ,  
Նա բերել էր թոքախտափոր սիրտը՝ որպես կարմիր դրոշ...  
Ով եկել էր ստեպներից, ուր ապրում էր որպես գերի,  
Բերել էր իր լուրք աշքերում լայնությունը ստեպների...

Ինչ որ լավ է՝ վառվում է ու վառում,  
Ինչ որ լավ է՝ միշտ վառ կմնա.  
Այս արև, այս վառ աշխարհում  
Քանի կաս՝ վառվի՛ր ու գնա՛ (Ե. Չ.).

#### Վ ա ր ժ ո ւ թ յ ո ւ ն

**ա** Լրացրո՞ւ տրված զլսավորները երկողորդականներով և ուշադրություն դարձրո՞ւ, թե դրանք զլսավորի որ անդամին են փոխարինում:

Ինձ շատ է անհանգստացնում այն, ...  
Ծնողներին խիստ վշտացրեց այն, ...  
Սիանգամից պարզվեց, ...  
Եվ կատարվեց այն, ...  
.... երկու ուրով փոսն է ընկնում:  
Ամեն ինչից երևում էր, ...  
Բոլորի համար էլ հաճելի է, ...  
Հայտնի է,...  
Այս ամենից հետո ենթադրվում է, ...

**բ** Սովորի՛ր կապակցական մի քանի կաղապար, որոնք փոխարինում են գերադաս նախադասության ստորոգելիին:

❖ հարաբերյալ-շաղկապ

Ծնողի միակ ցանկությունն այն է, որ իր զավակը կյանքում լավ մարդ դառնա:

❖ **հարաբելյալ-հարաբերական**

Մեր ուսուցիչները նրանք են, որոնք սովորեցնելու հետ մեկտեղ նաև մեզ ընկեր են:

Եվ վերջապես Արամը դարձավ այն, ինչ նրա համար նախատեսել էր ճակատագիրը:

Հայրենասիրությունը այն է, որ հայերը ամենուր իրար պատկանեն և միասին՝ հայրենիքին (Աշ. Դո.):

**Առաջադրանք**

Տրված կապակցական կաղապարներով կազմիր կամ դուրս գրիր գեղարվեստական գրականությունից բարդ ստրադալական նախադասություններ:

**Վարժություն**

■ Տրված նախադասություններում գտիր և դուրս գրիր երկրորդական նախադասությունները:

❖ **Նշի՛ր կապակցման միջոցները:**

**Տաճառերի** ուզածն էլ հենց այն էր, որ մենք ազատեինք այդ բնակարանը, որը նրանք հավանաբար վարձով էին տալու ավելի քանի ամսական վճարով: Նրա տիխուրությունը այնպիսին էր, որ ակամա վարակում էր բոլորին ու ստիպում մատնվել անգործության: Երիտասարդո, ոյոր վաղուց ապրում էր մեր քակում, կարծ ժամանակում դարձել էր այնպիսին, որ հարևանները օրինակ էին բերում միմիայն նրան: Բայց ամենից արտասովորը այն էր, որ նա ոչ մի քայլով չէր հիշեցնում այն մարտուն, որից բոլորը խուսափում էին:

Ես **այն** եմ եղել, ինչ որ եղել եմ,  
Չեմ հասել երբեք քո **որոնածին...** (Հ. Ա.)

Չո օրորանն այն է, ուր որ  
Հողմերից է լսում օրոր  
Արծվածագն իր քարափին,  
**Ուր** ձյուների թագն է արփին (Հ. Ծ.):

Եվ եքե մենք այսօր կոտրատում ենք այն մերք,  
Այդ նրանից է, որ ուզում ենք **մեր**  
Նոր խոհերի վրա ժանգ չչոքի (Ա. Զ.):

**Արտերի մեջ** նրանք էին, որ գողացել էին խաչքարը, մարել էին օջախները (Վ. Ա.):

Փառենք նաև է, ով խսկույն ցույց կտս Բաշտանց Սեթի գերեզմանաքարը (Ա. Ա.):

**#զ** Դուքս գրիր ընդգծված անդամները և որոշիր՝ ինչ պաշտոն են կատարում:

**#դ** Ձևաբանորեն վերլուծի՛ր ազատեհներ, հավանաբար, միմիայն բառերը:

#### Վ ա ր ժ ո ւ թ յ ո ւ ն

**ա** Տրված բարդ ստորադասական նախադասություններում գտի՛ր և դուքս գրիր երկրորդական նախադասությունները:

**բ** Գերադաս նախադասության ո՞ր անդամին են լրացնում դրանք. ձևակերպի՛ր հարցը:

Գայանեն մի թերև արդուկեց մետաքս գեղեցիկ վերնաշապիկս, որ հաստուկ կարված էր այս իրադարձության առթիվ...

...Նա սկսուելի վրայից ընտրում էր այն կտորները, որոնք լավ էին ներծծել շաբարաջուրը և ավելի էին կարմրել ջեռոցի մեջ: Մի խոսքով, այն կտորները, որոնք հայկական սովորությամբ պահպում էին հյուրերին: Նա մի մեծ քիթեյյա դատարկ տուփի մեջ տեղավորեց մեր ընտիր թխվածքը, որ պետք է նվիրեի տաճարի հրատակուն...

Չույզ դուները բացվում էին շատ ընդարձակ մի սենյակի վրա, որը միանում էր մի ուրիշ՝ ավելի փոքր սենյակի...

Գուցե պարզապես երես առած տղայի համար ես խաղալիք էի, որ Ալեքսանդրը միացրել էր իր Էլեկտրաշարժին, որպեսզի ընկերներին նատուցեր իրեն լրացնից զվարճություն (Ա. Ա.):

#### Վ ա ր ժ ո ւ թ յ ո ւ ն ս ե

**ա** Տրված շափածո հատվածներից գտի՛ր և դուքս գրիր երկրորդական նախադասությունները:

**բ** Որոշիր կապակցման միջոցները և շարադասությունը:

Որտե՞ղ է ընկած

Այս քարը հիմի,

Որ հողիս վրա

Ծիրիմ պիտ լինի (Ա. Հ.):

Այս բաժակը անշունչ, որ լուր նայում է ինձ,  
Սերթ ուրախ է լինում ու մերթ տխրաթախիծ... (Գ. Մ.):

Չեզ հետ այս պահին գրուցել եք պետք  
Սիայն նախողորիվ ոսկեղենիկով  
Եվ պետք եք գրել այն երկաթագիր տառերով միայն,  
Որոնց կերպը դու առել ես գուցե  
Հին գործիքներից մեր դարրինների  
Եվ այն կեռերից ամենատարբեր,  
Որոնցից զեն ու զարդ էին կախում... (Գ. Մ.):

Լսե՞լ ես արյոց այս երգը քնքուշ,  
Որ մեղմակարկաչ խոսում է չորս դիմ,  
Իրար է խառնուս երազ ու վերիուշ  
Ու սիրտը պարզում քարին ու խոտին... (Ա. Տ.):

#### Վ ա ր ժ ո ւ թ յ ո ւ ն

**ա Գտիիր երկրորդականները. գլխավորի ո՞ր անդամին են փոխարինում դրանք:**

**բ Դուրս գրիր կապակցման միջոցները:**

Ֆետրե գլխարկով մարդը կուացավ, պոկեց ալպիական մանուշակը և դրեց տեսորի այն թերթի արանքը, որի վրա նկարված էր եռոտանին և այն բարակիրան կինը:

Հնձվորը **ցերեկվա** ճարդն էր, որին **երրորդ** ձիավորը պատմել էր բերդի գանձերի մասին:

Նա հասավ **առաջին** վրանին, ոտքով զարկեց շանը, որ, պոչը շարժելով, առաջ էր վագել տիրոջը դիմավորելու:

Ես մատներով տրորում եմ կավր, **ամենահին նյութը**, որ կա այս տափա-րակում:

Հանկարծ գնդակների տարափ տեղաց եղեգնուտների կողմից, որտեղ սպիտակ ձիավորների դեմ ամրացել էին մի խումբ **ապստամք** գյուղացի-ներ:

Նա դեպի քաղաքն է նայում, դեպի գյուղի ճանապարհը, որով անցնում են այգիներից և արտերից վերադարձող հոգնած մարդիկ (Ա. Վ.):

Այդպես զնաց մինչև ձորակը, որտեղից գալիս էր քարեքար դիպչող

Վտակի խշողը:

Ու Շուշանն արագ, անխոս ու թափով, այնպիսի թափով, որով միայն նա էր քայլում ու շարժվում, մոտեցավ վերարկուին:

**Միակ** մարդը, որ լնկերություն էր անում հետս, արխազ անտառապահն էր: Նա մեկն էր այն մարդկանցից, որ կարծես թե անտառից, բնությունից էր ծնվել: Անտառի ծառերի հետ վեր էին բարձրանում և ժայռերը, որոնց կրծքին բուսել էին **բազկատարած** եղևնիներ, որոնք, թվում էր, ահա պիտի թոշեն: Խակ ծորի միջով հոսում էր **ջիճ** վտակը, որի ջրերի տակ ավազը պսպղում էր ոսկու փոշով, և ուր քարերը կարելի էր համրել մեկ-մեկ (*Աղ. Ձ.*):


**#9** Ընդգծված քառերը արտագրի՞՝ ենթարկելով քառակազմական, ձևաբանական և շարահյուսական վերլուծության:

#### Առաջադրանքներ

**ա** Կարդա՝ քանաստեղծությունը ճիշտ առողանությամբ:

**բ** Իուրա գրիր երկրորդական նախարարատթյունները և որոշի՞ր դրանց կազմությունը՝ միակա՞զմ, թե՞ երկկազմ, համառո՞տ, թե՞ լնդարձակ:

Սինչ անգամ մեր ձկները՝  
Սեր սևանյան կարմրախաւ՝ յտը,  
Սեր իշխաւ՝ նը,  
Սեր բախտաւ՝ կր,  
Կարիլներն են կրում կարծես  
Սեր դարավոր առատ արյան,  
Որ հեղվել է,  
Հեղեղվել է  
Ու ներծծվել Հայոց երկրում:  
Եվ մեր ջուրը բազմադարյան,  
Որ դարավոր մեր խղճի պես  
Անապակ է  
Ու հստակ է,  
Այդ քծերը լվանում է,  
Լվանում է  
Ու... չի մաքրում (*Դ. Ա.*):



### Ա Ծ Ա Կ Ա Կ Ա Լ Ի Ա Ր Գ Ե Ր

Ուրիշ ի՞նչ ձկնատեսակներ գիտես. թվարկի՛ր:

Խճչակե՞ս են անվանում ձկների, օձերի, աղվեսների, այծերի, գայլերի խոմքը:

### Ա ռ ա ջ ա դ ր ա ն ի ն ե ր

**Քո տեսարում զբի՛ր տրված առածների իմաստները և սովորի՛ր:**

Չուկը գլխից է հոտում:

Չուկը գլխից կրոնեն:

Չուկը ծովում բազար չեն անում:

Չուկը ծառն ես հանում:

Չուկը դիպավ կաթին:

**Նկար**

### Կ ա դ ա կ ց ու թ յ ու ն ն ե ր ի տ ա ր ա ն

**Սովորի՛ր և գործածի՛ր նախադասություններում:**

**Միտք**

մտքի հետ հաշտվել – ընդունել տվյալ մտքի ճշմարտացիությունը  
մտքի թելք կորցնել – մտքի տրամարանական ընթացքը խառնել  
մտքի դռները բացել – ստիպել կամ տրամադրել խոսելու,

բացահայտելու սեփական մտքերը

մտքի թելք բարակել – մտածողությունը մթագննվել

մտքի բռիչը – բարձր գաղափար արտահայտելու ունակություն

### Ա Ծ Ա Կ Ա Կ Ա Լ Ի Ա Ր Գ

**Դո՞ւ ինչ դարձվածքներ կավելացնեիր սրանց:**

### Լ ս ե ն ք մ ե ժ ե ր ի ն

Ծշմարտությունը խղճի հաղթանակման մարդու մեջ:

*Վ. Գրիշիկի*

## ՄԵԶԲԵՐՎՈՂ ԽՈՍՔ

Րարցեր և առաջադրանքներ  
 Ի՞նչ զիտես բանավոր և գրավոր խոսքի մասին:  
 Ինչո՞վ են նրանք իրարից տարբերվում:  
 Հարցերին պատասխանի՛՝ օգտվելով տրված գծապատկերից:

### Խոսք

#### Գրավոր

գրում ու կարդում ենք  
 տառեր  
 առգանոթյան նշաններ  
 կետադրության նշաններ

#### Բանավոր

խոսում և լսում ենք  
 հնչյուններ  
 հնչերանգ  
 դադար, հայացք, ժեստ (շարժում),  
 միմիկա (դիմախաղ)

Բանավոր կամ գրավոր խոսքում հաճախ խոսուղի կամ հեղինակը մեջ է բերում ուրիշի կամ իր ասածը, գրավոր մեջքերում է այլ հեղինակի խոսքերից: Այդ խոսքը ընդունված է անվանել **մեջքերվող** կամ **որիշի խոսք**:

Սեղբերվող խոսքը կարող է ներկայացվել երկու ձևով՝ **ուղղակի և անուղղակի**:

#### Օրինակ՝

- Դու մեքենաներից բան չես հասկանում, – ասաց ընկերս:
- Ընկերս ասաց, որ ես մեքենաներից բան չեմ հասկանում:

#### Պառլ Կոելյո

#### Մատիտի պատմությունը

Փոքրիկ տղան նայում էր, թե ինչպես է պապիկն ինչոր բան գրում, և ապա հարցընց:

– Դու պատմվածք ես գրում այն մասին, ինչ մեզ հետ է կատարվել: Հնարիավո՞ր է, որ այդ պատմվածքը նի քիչ էլ իմ մասին լինի:

Պապիկը մի պահ ընդիատեց զրելը, ժպտաց և պատասխանեց քոռնիկին.

— Ես քո մասին գրում եմ, ճշնարիտ է, բայց ուզում եմ՝ իմանաս նաև մեկ այլ բան: Մատիտը, որով գրում եմ, պակաս կարևոր չէ, քան իմ գրած խոսքերը: Ես հուսով եմ, որ դու, երբ մեծանաս, կսիրես այն:

Տղան հետաքրքրությամբ նայեց մատիտին, բայց որևէ յուրահատուկ բան չնկատեց.

— Բայց այն նման է բոլոր մատիտներին, որ ես երբսէ տեսել եմ իմ կյանքում:

— Դա կախված է նրանից, թե ինչպես ես դու նայում իրերին: Մատիտի մեջ իինք որակներ կան, որոնք եքեք քեզ հաջողվի պահպանել քո մեջ, ապա դու մշտապես խաղաղ ու ներդաշնակ կլինես աշխարհի հետ:

Առաջին որակը: Դու կարող ես մեծ գործեր կատարել, բայց երեք չպետք է մոռանաս, որ կա մի ձեռք, որ ուղղորդում է մեր քայլերը: Այդ ձեռքը մենք Աստված ենք անվանում, և նա միշտ մեզ պետք է առաջնորդի իր կամքի համաձայն:

Երկրորդ որակը: Ժամանակ առ ժամանակ ես պետք է կանգ առնեմ և սրիչն օգտագործեմ: Դա մի փոքր ցավ է պատճառում մատիտին, բայց արդյունքում այն ավելի սուր է դառնում: Ուրեմն սովորի՛ դիմանալ ցավերին, որովհետև դրանք քեզ ավելի լավ մարդ կդարձնեն:

Երրորդ որակը: Մատիտը քեզ միշտ հնարավորություն է տայիս ռետին օգտագործելու, որպեսզի ջնջես այն ամենը, ինչ որ սխալ է: Իմացի՛ր, որ մեր կատարած գործերից որոշ բաներ ուղղելլ վատ չէ. ընդիակառակը, կարևոր է մեզ արդարության ճանապարհին պահելու համար:

Չորրորդ որակը: Մատիտի մեջ կարևոր ոչ թե փայտն է, արտաքին ձևը, այլ նրա միջի գրաքարը: Հետևաբար մշտապես զգո՞ն եղիր, հետևի՛ր, թե ինչ է կատարվում քո ներսում:

### Նկար - պապ ու թոռ

Եվ, ի վերջո, հինգերորդ որակը: Մատիտը միշտ հետք է թողնում: Ինմացիր, որ նույն կերպ, ինչ որ դու անում ես կյանքում, հետքեր է թողնում. ուրեմն աշխատի՛ր ամեն մի գործ կատարելիս թողնել այդ հետքը:

### Րարցեր և առաջադրանքներ

**Ա**

**ա** Քեզ հետաքրքրե՞ց այս պատմությունը մատիտի մասին.  
արտահայտվի՛ր բանավոր:

**բ** Իսկ դու կարո՞ղ ես այլ իրերի մեջ ևս տեսնել մարդկային նկարագրի հետ համընկնող որակներ. փորձի՛ր:

**գ** Ինչպե՞ս կրացատրեն տեքստում ընդգծված տողերը. մեկնաբանի՛ր:

**Բ**

**ա** Խոսքի դրսարման ի՞նչ ձևեր ես տեսնում այս տեքստում.  
տարրերակի՛ր:

**բ** Պատմի՛ր այս տեքստը՝ ուղղակի խոսքը դարձնելով անուղղակի:

## 1. ՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ

Հարևան սեղանին նատած շիկահեր ուսու աղջիկը դարձավ դեպի ինձ.

– Ներեցե՛ք, խնդրում եմ, այս պարոնն ուզում է իմանալ, թե դուք ինչ ազգից եք:

– Հայ եմ, – ասացի ես (Վ. Պ.):

Այս օրինակում հեղինակի խոսքերն են Հարևան սեղանին նատած շիկահեր ուսու աղջիկը դարձավ դեպի ինձ և ասացի ես:

Սեղօրվող ուղղակի խոսքերն են Ներեցե՛ք, խնդրում եմ, այս պարոնն ուզում է իմանալ, թե դուք ինչ ազգից եք և Հայ եմ:

**Ընդհանուր խոսքաշարում անփոփոխ, բառացի մեջբերվող  
խոսքը կոչվում է ուղղակի խոսք:**

\* Ուղղակի խոսքը սկսվում է գծիկով կամ չակերտներով և գրվում է մեծատառով:

\* Եթե ուղղակի խոսքը բարձրածայն հմչվում է, ապա ուղղակի խոսքից առաջ դրվում է գծիկ, իսկ հեղինակի խոսքից այն անջատվում է ստորակետ-գծով:

**Օրինակ՝**

– Չեղավ, չեղավ, մեր խոսակցությունն արդեն ուրիշ ընթացք է ստանում, պարունե՞ր, – խաղաղասիրաբար ճայն տվեց մեկն այն կողմից (U.U.):

\*Հեղինակի խոսքից հետո դրվում է միջակետ, եթե նրան հաջորդում է ուղղակի խոսքը:

**Օրինակ՝**

Թագավորն այդ իմացավ և զինվորներին դառնալով՝ հարցրեց.

– Կուզե՞ք, որ ծեր քագավորը գերսի Բեշիրից (Մ.):

\*Եթե հեղինակի խոսքը միջադասկում է ուղղակի խոսքին, ապա ուղղակի խոսքից երկու կրոմից բաժանվում է ստորակետ-գծով (,-):

**Օրինակ՝**

– Իմ հրաշագեն քագուհի, – մեղմորեն ասաց նա, – ես՝ աշխարհի ըմբռատ ոգիս, սիրում եմ քեզ (Ա. Վ.):

\*Եթե ուղղակի խոսքը մտքում է ասվում, հիշվում է, ապա գրվում է չակերտների մեջ:

**Օրինակ՝**

«Ես պետք է քարցնեմ իմ տիրությունը...», – մտածեց իշխանը և թույլ տվեց սպասավորին, որ շարունակե իր սովորական պշրանքը (Պ.):

Հեղինակի խոսքը կարող է դրվել ուղղակի խոսքից առաջ, ուղղակի խոսքից հետո, և հեղինակի խոսքը կարող է կիսել ուղղակի խոսքը, այսինքն՝ միջադասվել ուղղակի խոսքին:

**Օրինակներ՝**

Նըրա հետ վերցրին լիք բաժակները

Բոլոր մեծերը

Ու մեզ օրինեցին. «Ապրեք, երեխեք,

Բայց մեզ պես չապրեք...» (Հ. Թ.):

– Թոհիր, սիրելին, ազատ ու վայրի,

Թոհիր ու ասա՛ ստրուկ աշխարհին,

Թե ինչն է քանիք կյանքից ավելի..., –

Ասաց ջրերի լուսեղեն ոգին (Ա. Վ.):

**Նկար •**

– Հորս գլուխը վկա, սքանչելի է, – պատասխանեց որոյին, – միայն մոռացել ես ներկել քո շրբունքները, այն ժամանակ կատարելապես պարսկական քագուհու կնմանեիր (Պ.):

Հեղինակի խոսքը ուղղակի խոսքի հետ կապվում է ամենից շատ **սաել**, **հարցմել**, **պատասխանել** բայերով: Իսկ այդ բայերի հաճախակի գործածությունը խոսքը կարող է դարձնել միօրինակ: Այդ պատճառով էլ գրողները հաճախ խուսափում են այդ բայերից և գործածում հոմանիշ բայաձեր, որոնք առավել ինքնատիպ են դարձնում հեղինակի և ուղղակի խոսքի կապը՝ **շարումակել**, **խոսել**, **կրկնել**, **շնչար**, **բացականչել**, **հորդորել**, **համոզել**, **հուսադրել**, **համաձայնել**, **շատախոսել**, **բարկանալ** և այլն կամ գրեթե բացառում ասացական բայերը հեղինակի խոսքում, **ինչպես՝**

**Մեկը խփեց Սողոմոնի ոսին.**

- **Սորեր ես ծամում:**
- **Սորերն են ինձ ծամում, պարո՞ն հարյուրապես:**
- **Ռոտոցի՞չ ես եղել:**
- **Եղել եմ:**
- **Երևում եմ:**
- **Ինչի՞ց, – աչքերով հարցրեց Սողոմոնը:**
- **Մի քիչ քարացրո՛ հոգիո, վարժապե՛տ, չես դիմանա (Ք. Ա.):**

Մեկ այլ պարագայում նկատում ենք հեղինակի խոսքի գրեթե բացառությունը, եթե երկխոսությունը ընկալելի է զրուցակիցների միջև, **ինչպես՝**

- **Գիտե՞ս, Սամվել, քեզ ինչի համար կանչեցի:**
- **Ես ոչինչ չգիտեմ:**
- **Հորիցդ նամակ ստացա. կանչեցի, որ հայտնեմ քեզ:**
- **Նամա՞կ ստացար, – բացականչեց Սամվել, – այդ ուրախալի՞ է... շա՞տ ուրախալի... Ե՞րբ ստացար:**
- **Այս գիշեր: Սուրհանդակ եկավ (Ռ.):**

### Առաջադրանիւր

**ա** Հարցով դիմի՞ր պատմոթյան, աշխարհագրության և ֆիզկուլտուրայի ուսուցիչների՝ այն ձևակերպելով **հարցմել**, **դիմել** բայերով:

**բ** Պատասխանի՞ր ընկերություն, հորդ, հայոց լեզվի ուսուցչիդ հարցերին:

**գ** Կազմած երկխոսություններդ գրի՞ր քո տեսքում:

## 2. ԱՆՈՒՂԱԿԻ ԽՈՍՔ

**Ընդհանուր խոսքաշարում պատմողաբար, ոչ բառացի մեջ-բերվող խոսքը կոչվում է անուղղակի խոսք:**

Ուղղակի խոսքը անուղղակի դարձնելիս կատարվում են հետևյալ փոփոխությունները.

\* Ուղղակի խոսքը հեղինակի խոսքի հետ միասին վերածվում է բարդ ստորադասական նախադասության. հեղինակի խոսքը դառնում է գրյապարհ նախադասություն, իսկ ուղղակի խոսքը՝ երկրորդական, որոնք իրադր են կապվում են ստորադասական շաղկապներով՝ **որ, թե:**

### Օրինակ՝

— Ծերո՞նկ, խելքդ քոցրել ես,— բարձրաձայն ասաց առաջնորդը:

**Առաջնորդը բարձրաձայն ասաց, որ ծերուկը խելքը քոցրել է:**

Անուղղակի դարձնելիս վերանում են ուղղակի խոսքի գրության գծիկը, ստորակետ-գծիկները, չակերտները:

-**Անուղղակի** դարձնելիս հարցական և հրամայական նախադասությունները դառնում են պատմողական:

\*Հարցական նախադասությունները փոխակերպելիս գերադաս նախադասությունը՝ հեղինակի խոսքը, ստորադասին՝ անուղղակի խոսքին, կապվում է **թե** շաղկապով:

### Օրինակ՝

Երկարեղեն ոտքերով մոտեցավ նա քարավանի պետին և խոլաձայն հարցրեց.

— Քանի՞ ժամանակ է, որ այստեղ անապատ է գոյացել:

**Երկարեղեն ոտքերով մոտեցավ նա քարավանի պետին և խոլաձայն հարցրեց, թե քանի ժամանակ է, որ այստեղ անապատ է գոյացել:**

- Անուղղակի խոսքում առկա հարցական դերանվան վրա հարցական նշան չի դրվում: Կարելի է դնել շեշտ, կարելի է և չդնել:

-**Անուղղակի** դարձնելիս ոչ հարցական բառի վրա հարցական նշանը պահպանվում է, **արդյոք** բառի առկայության դեպքում հարցական նշան կարելի է դնել և չդնել:

### Օրինակներ՝

— Դու ո՞ւր ես գնում,— հարցրի ընկերուիուս:

**Ընկերուիուս հարցրի, թե նա որ է գնում:**

— Դու տո՞ւն ես գնում,— հարցրի ընկերուիուս:

ա) **Ընկերուիուս հարցրի, թե նա ոտ՞ո՞ն է գնում:**

բ) **Ընկերուիուս հարցրի, թե նա արդյոք տոտն է գնում:**

-**Անուղղակի** դարձնելիս դուքս են մնում ուղղակի խոսքում առկա ձայնարկությունները, որոշակի անձ չնշող կոչականները:

**Օրինակ՝**

– Այս, սիրելի՞ս, ես քեզ վաղուց էի ուզում տեսնել, – խոստովանեց տղան:

**Տղան խոստովանեց, որ ինքը վաղուց էր ուզում նրան տեսնել:**

– Ուղղակի խոսքում առկա որոշակի անձ նշող կոչականը անուղղակի դարձնելու դառնում է կամ լրացում գլխավոր նախադասության մեջ, կամ ենթակա՝ երկրորդական նախադասության կազմում:

**Օրինակ՝**

– Կարե՞ն, դասից չուշանաս, – հորդորեց մայրը:

**Մայրը հորդորեց, որ Կարենը դասից չուշանա:**

**Մայրը հորդորեց Կարենին, որ դասից չուշանա:**

– Տղան, մեծերի հանդեպ միշտ ուշադիր եղիր, – խրասում էր հայրը:

**Հայրը խրասում էր իր տղային, որ մեծերի հանդեպ միշտ ուշադիր լինի:**

## ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ուղղակի խոսքի դրսեորման տարածված ձևը երկխոսությունն է, հարց ու պատասխանը, մտքերի փոխանակումն ու պարզաբանումը:

**Խոսքի դրսեորման կարևոր ձևեր**

### Մեմախոսություն

Խոսող

### Երկխոսություն

Խոսող - լսող

Հաղորդող - ընկալող

Այս հասկացությունները սերտ շաղկապված են միմյանց, պայմանավորված են մեկը մյուսով:

### Առաջադրանք

**Քառարանի օգնությամբ քացատրի՛ր երկխոսություն, խոսակցություն, զրոյց, բանավեճ, քննարկում բառերի իմաստները:**

## ԵՐԿԽՈՍԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

### Առաջադրանքներ

**ա** Արտագրի՛ր և կետադրի՛ր տրված համառուտ առակները:

**բ** Բացատրի՛ր յուրաքանչյուր կետադրական դեպքը:

Ուղտին հարցրին թե ինչո՞ւ է վիզո՞ւ ասաց ինչս և ուղի՞յ:

Ծառն աստծուն գանգատ արեց կացնի ձեռքից թե ինձ կտրում է ասաց կոքը հենց քեզնից է:

Աղվեսի դունչը խաղողին շհասավ ասաց խակ է:

Մեկի մորուքը վառվեց

Սպասիր տաքանամ ասաց մյուսը:

Քամին մարագին ասաց

Դուռդ բաց դարման եմ քերում:

Ասաց

Իմ միջի եղածը մի տար քո բերածը պետք չէ:

Եշին աչքալուսանք տվին թե թոռ է ունեցել ասաց

Իմ քենոն իմ մեջքից չեն վերցնելու:

Կատվին ասին կղանքդ դեղ է խորը թաղեց:

**գ** Բացատրի՛ր առակների ենթատեքստը:

**դ** Հիշի՛ր նմանատիպ առակներ իմքդ, գրատի՛ր և կետադրի՛ր:

## ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՌՈՂՅԱ ԽՈՍՔՈՒՄ

Ուղղակի և անուղղակի խոսքի գործառության ամենալայն շրջանակը առօրյա խոսքն է:

**Առօրյա կյանքում** մարդկանց փոխադարձ շփումը իրականացվում է նախ և առաջ՝ **զրոյցի միջոցով**, իսկ զրոյցը ոչ այլ ինչ է, քան մարդկանց միջև մտքերի փոխանակություն, խոսակցություն կամ երկխոսություն: Առօրյա խոսքում, կենցաղում դա զրոյց է:

### Ի մ ա ց ի՝ ր

Երկխոսությունը իրականանում է նվազագույնը երկու անձանց միջև և ենթադրում է **սկզբնամաս, հիմնամաս, ավարտ**:

Երկխոսության սկիզբը սովորաբար միմյանց ողջունելն է, միմյանց որպիսությունը հարցնելը. դրանց դրսևորման տարբեր ձևեր կան:

**Ինչպե՞ս պետք է միմյանց ողջունենք.**

**Ընկերները՝ միմյանց.**

1.

- Բարև: Ինչպե՞ս ես:
- Բարև: Լավ եմ, դո՞ւ ինչպես ես:

Նկար

2.

- Ողջույն, Անահիտ:
- Ողջույն, Դավիթ:

3.

- Բարև, Եղբայր: Ինչպե՞ս ես:
- Բարև: Լավ եմ, դո՞ւ ինչպես ես:

**Կրտսերը՝ իրենից ավագներին՝ հարևաններին, բարեկամներին, ծանոթներին.**

- Բարև ձեզ: Ինչպե՞ս եք:
- Հազար բարի: Լավ ենք, դո՞ւ ինչպես ես:

**Աշակերտը՝ ուսուցչին, ուսանողը՝ դասախոսին, աշխատողը՝ իր դեկավարին.**

1.

- Բարև Ձեզ: Ինչպե՞ս եք:
- Շնորհակալություն: Լավ եմ:

2.

- Բարև Ձեզ: Ինչպե՞ս եք:
- Շնորհակալություն: Լավ եմ,  
Դո՞ւ ինչպես եք:

Նկար

**Կրտսերը տարեցին.**

1.

- Բարև Ձեզ, հայրիկ/մայրիկ/:
- Բարին քո արև, որդի:

2.

- Բարև հայրիկ/մայրիկ/: Ինչպե՞ս եք:
  - Բարև, հագար բարի, որդիս/աղջիկս, բալես, զավակս/: Լավ ենք: Դու ողջ եղի՛ր/լինես/:

### Ա ն ա կ ն կ ա լ հ ա ր ց

**Դո՞ւ ինչպես ես ողջունում ծնողներիդ, ընկերներիդ, ուսուցիչներիդ և որիշների:**

Երկխոսության լնբացքում շատ ենք գործածում թերի նախադասություններ: Խոսակցի հարցին կարճ պատասխանում ենք՝  
հաստատականի դեպքում **այո՛, լավ՛, բարի՛, անշուշտ, հարկավ,**  
**իհարկե, անպայման**  
միտման դեպքում՝ **ո՛չ, չէ՛, բնավ, երբեք**

#### Դիշի՛ր

Բարի լույս  
Բարի առավոտ  
Բարի օր  
Բարի երեկո  
Բարի կեազիշեր  
Բարի աջողություն /թթ./  
Բարի գալուստ

Բարի զիշեր  
Ցուեսություն  
Մնաս/ք/ բարով  
Հաջողություն

Նկար

#### Հ ա ր ց և ա ռ ա ջ ա դ ր ա ս տ

**ա** Դու ողջույնի ո՞ր ձևերին ես նախապատվորյուն տալիս՝ գրական հայերենի՞ն, խոսակցականի՞ն, թե՞ օտար ձևերին:

**բ** Կազմի՛ր վիոքրիկ երկխոսություններ՝ ողջույն-հրաժեշտի տարբեր ձևերով:

#### Տեքստ

Երբ նասրեղինը սովորում էր դպրոցում, ուսուցիչը երեխաներին հաճախ պատմում էր բնության, տարվա ժամանակների, ցերեկը զիշերվա փոխվելու մասին: Սի անգամ էլ նա դասի ժամանակ ասաց.

— Սիա այժմ զարուն է: Օրերը երկարում են, գիշերները՝ կարճանում: Իսկ մեկ ամիս անց, երբ սկսվի ամառը, օրը կերկարի մի ամբողջ ժամ...

Անցավ մեկ ամիս. դասի ժամանակ նորից խոսք բացվեց տարվա ժամանակների մասին, և ուսուցիչը հարցրեց Նասրեղինին:

— Դե՛, Նասրեղին, ասա՞ մեզ՝ օրը քանի՞ ժամ ունի:

— Հիմա օրերն ունեն քսանիկնազ ժամ, չնայած մնացած ժամանակ նրանք բաղկացած են քսանչորս ժամից, — համարձակ պատասխանեց Նասրեղինը:

### Առաջադրանիներ

**ա Տրված երկխոսության մեջ գտնի՛ր քերականական սխալները.**

- Բարև, հորեղբայր:
- Բարև, Կարեն: Ինչպե՞ս ես: Ձերո՞նք ինչպես են:
- Լավ են, շնորհակալ եմ: Վարդանը ո՞ւր է: Ձեր հետ եկե՞լ է Ծաղկաձոր:
- Զի՞, մնաց տանը: Պետք էր, որպեսզի մեկը տանը հսկեր: Իսկ դու ո՞ւմ հետ ես եկել: Հեռվում կանգնածը ընկե՞րդ է: Անունն ինչպե՞ս է:
- Տիգրանն է՝ իմ դասընկերը: Վյատեղ պարապում է իմ հետ, որպեսզի լավ մարզավիճակ ձեռք բերենք:
- Ապրե՛ք, շատ էլ ճիշտ եք անում: Դու գիտես, որ մեր համար քո հաջողությունները շատ գնահատելի են:
- Շնորհակալ եմ: Կաշխատեմ արդարացնեմ ձեր հույսերը: Դե լավ, ես գնամ: Ցտեսությունն: Բոլորին բարևիր:
- Անպայման կրաքանչեմ: Իսկ դու փողոցն անցնելուց զգույշ եղի՛ր:

### Դեսաքրիրէ

Մարդիկ երկխոսության ընթացքում դիմում են տարբեր ժեստերի, որոնց իմացությունը օգնում է երկխոսության պահին խոսակցին ճիշտ հասկանալ:

— Եթե խոսակիցը ցուցանատի և բոլք մատի օգնությամբ շոշափում է ձնոտը, ուրեմն **գնահատողական** է նրա վերաբերմունքը,

— Եթե խոսակիցը մատները բուրգի ձևով միահյուսում է, ուրեմն զգում է **վառահություն**,

**Նկար**

— Եթե խոսակիցը ձեռքերով քոնում է արմունկները, ուրեմն դարձյալ **ինքնավատահ** է,

— Եթե խոսակիցը շոշափում է ձեռքի ափերը, մատների ծայրերով սեղանին թխվթխվացնում, ուրեմն ունի ակնկալիքներ,

— Եթե խոսակիցը փախցնում է հայացքը, ուրեմն **անազնիվ է և ստում է**:

### Նկար

### Նկար

— Ձեռքերը կրծքին խաչելոր շատ տարածված դիրք է: Ձեռքերը կրծքին խաչելով՝ մարդն անզիտակցորեն փորձում է իր և ինչ-որ մեկի միջև պատճեշ ստեղծել: Այդ դիրքը ամենուր գնահատվում է պաշտպանական կամ բացասական: Այսպիսի կեցվածք մարդիկ ընդունում են սեփական անվտանգության մեջ վստահ չլինելու իրավիճակներում:

— Եթե ‘Դուք տեսնում եք Ձեր զրուցակցին՝ այդ դիրքով կանգնած, ապա անիմաստ է նրա հետ զրույցը շարունակել: Մեծ վստահությամբ կարող եք համարել, որ նա համաձայն չէ Ձեզ հետ (թրգմ.):

### Րարցեր և առաջադրանքներ

**ա** Արդյոք ուշադրություն դարձրե՞լ ես, թե ինչ ժեստեր են քեզ բնորոշ:

**բ** Չեզ ծանոք մարդկանց ո՞ր ժեստերն են հասկանում. այդ ժեստերը հասկանալը կամ քո կողմից դրանք կիրառելը քեզ օգնո՞ւմ, թե՞ խանգարում են:

### Իսկ դու կարո՞ղ ես

Մանուկ ժամանակ ես միշտ հասկանում էի, որ մարդիկ հաճախ ասում են բոլորովին ոչ այն, ինչ մտածում և զգում են: Իսկ մարդկանց խսկական մտքերն ու զգացմունքները հասկանալով և նրանց պահանջմունքներին համապատասխան ձևով արձագանքելով՝ կարելի է հասնել սեփական

**նպատակներին:**

Եթք իմ տասնմեկ տարին լրացավ, ես սկսեցի իմ աշխատանքային կարիերան որպես վաճառքի գործակալ: Դասերից հետո ես պնակներ լվանալու ռետինն սպոնզորի էի վաճառում, որպեսզի գրպանի ծախսերի համար մի քիչ դրամ վաստակեմ: Ես շատ արագ ստորեցի հասկանալ, թե իմ առջև դրավը բացած մարդը պատրաստվո՞ւմ է արդյոք գնել իմ ապրանքը, թե՞ ոչ: Եթե ինձ դուրս էին հրավիրում, և դա անելիս մարդու ձեռքի ափերը բաց էին լինում, ես հասկանում էի, որ կարող եմ հաստատակամություն հանդիս քերել: Այդպիսի մարդիկ երբեք ազրեսիվություն չեն դրսւում: Իսկ եթք ինձ քաղաքավարությամբ խնդրում էին հեռանալ և դա անելիս մատով կամ ձեռքի բոունցքված ափով դուռն էին ցույց տալիս, ես գգում էի, որ իսկապես, ավելի լավ է՝ հեռանամ:

Ինձ դրա էր զայիս առևտուր անելը. ես հասկանում էի, որ այդ գործում կարող եմ հաջողության հասնել: Բարձր դասարաններում ես սկսեցի երեկոներն ամանեղեն վաճառել: Այդ ժամանակ ինձ հաջողվեց դրամ վաստակել իմ առաջին խոշոր գնումը կատարելու համար: Առևտուրն ինձ քոյլ էր տալիս շփվել մարդկանց հետ և մոտիկից ուսումնասիրել նրան: Ես սովորեցի պոտենցիալ գնորդներին ճանաչել մարմնի շարժումների լեզվի միջոցով: Այդ կարողություններն ինձ անշափ օգնում էին դիսկուսիաներում: Ես անսխալ կարողանում էի որոշել, թե աղջիկներից ով կիամաձայնի պարել ինձ հետ, իսկ ում ավելի լավ է չմոտենալ:

Եթք ես դարձա քան տարեկան, աշխատանքի ընդունվեցի ապահովագրական լնելերությունում և կարողացա հասնել նկատելի հաջողությունների: Ես դարձա ամենաերիտասարդ աշխատակիցը, որին հաջողվել էր մեկ տարվա ընթացքում մեկ միլիոն դոլարի ապահովագրեր վաճառել: Ես հասկացա, որ կարող եմ հաջողության հասնել ցանկացած գործում, որը կապված կլինի մարդկանց հաղորդակցվելու հետ (թրգմ.):

## ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՃԱԿՄԱՅ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՈՒՅՆԵՐԸ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՈՒՅՆԵՐԸ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՈՒՅՆԵՐԸ:**

Գեղարվեստական ստեղծագործություններում հերոսների խոսակցությունն իրար հետ ներկայանում է իրեւ երկխոսություն, իսկ միայնակ խոսող հերոսի նարերի արտահայտությունը՝ **ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**, որոնք սերտ ձուլված են հեղինակային խոսքին:

Գեղարվեստական տեքստերում հեղինակը հերոսներին տիպականացնելու, անհատականացնելու համար նրանց խոսքը ոճականորեն բնդգծում է, ցայտուն է դարձնում՝ խոսեցնելով նրանց իրենց հարազատ լեզվով ու բառապաշտով:

Գեղարվեստական գրականության մեջ գործող հերոսների խոսքը կարող է ներկայացվել հաճախ անուղղակի ձևով, վերաշարադրվել այնպես, որ ընթերցողը հստակ ընկալում է, որ այդ մտքերը տվյալ հերոսին են:

### Հովի. Թումանյան

#### Ոսկու կարասը

##### Նկար

Ես մեր ծերերիցն եմ լսել, մեր ծերերը՝ իրենց պապերից, նրանց պապերն ել՝ իրենց մեծերից, թե մի ժամանակ մի աղքատ հողագործ է լինում, ունենում է մի օրավար հող ու մի լուծ եզ:

Չմեռը էս աղքատ հողագործի եզմերը սատկում են: Գարունը վար ու ցանքի ժամանակը որ գալիս է, եզ չի ունենում, թե վարի, հողը վարձով տալիս է իր հարևանին:

Ես հարևանը վարելու ժամանակ խոփը մի տեղ դեմ է ընկնում, դուրս է գալի մի կարաս՝ մեջո լիքր ոսկի: Եզմերը լծած քողնում են, վազում է գյուղը՝ հողատիրոջ մոտ:

— Հե՞յ, աչքդ յուս.—  
ասում են, քո հողումը մի կարաս ոսկի դուրս եկավ, արի տար:

— Չէ՞, ախապե՞ր, եդ իմը չի, — պատասխա-

##### Նկար

նում է հողատերը: – Հոդի վարձը դու տվել ես, դու վարում ես, էն հողումն ինչ էլ դարս զա, քունն է, ոսկի է դարս եկել, թող ոսկի լինի, էլի քունն է:

Սկսում են վիճել. սա ասում է՝ քունն է, նա, թե չէ՝ քունը: Վեծր տաքանում է, իրար ծեծում են: Գնում են թագավորի մոտ գանգատ:

Թագավորը մի կարաս ոսկու անունը լսում է թե չէ, աչքերը չորս է բաց անում: Ասում է.

– Ո՞չ քունն է, ո՞չ դրանք. իմ հողում կարասով ոսկի է դուրս եկել՝ իմն է:

Իր մարդկանցով գնում է, որ հանի բերի: Գնում է, կարասի բերանը բաց անել է տալի, տեսնում – ի՞նչ ոսկի – կարասը լիքը օձ...

Զարհուրած ու կատաղած եւս է գալի: Հրամայում է՝ պատժեն անգետ ուսնչպարներին, որ համարձակվել են իրեն խարել:

– Չե՛, թագավորն ապրած կենա, – գոռում են խեղճերը, – մեզ ինչո՞ւ ես սպանում, լավ չես տեսել, օձ չկա էնտեղ, ոսկի է, ոսկի...

### Առաջադրանք

#### Հեքիաքի շարունակության մեջ լրացրո՞ւ բաց թողած առողանության նշանները:

Թագավորը նոր մարդիկ է ուղարկում, որ գնան ստուգեն: Մարդիկը գնում են, եւս գալի, թե՝ ծշմարիտ, ոսկի է:

– Վահ, – գարնամում է թագավորը: Ասում է՝ երևի լավ շտեսա, կամ տեսած են կարասը չեր: Վեր է կենում, մին էլ գնում:

Կարասը բաց է անում... դարձյալ մեջը լիքը օձ:

Էս ինչ հրաշք է, ինչ միտք ունի՝ չեն հասկանում:

Թագավորը հրամայում է, հավաքում է իր երկրի իմաստուններին:

– Ռացատրեցեք, – ասում է, – ով իմաստուններ, ինչ հրաշք է սա: Են հոդագործներն իրենց հոդում կարասով ոսկի են գտել: Ես եմ գնում՝ կարասը լիքն օձ է դառնում, սրանք են գնում՝ ոսկի: Էս ինչ կնշանակի:

– Դրա բացատրությունն էս է, թագավոր, եթե չես բարկանայ, – ասում են իմաստունները: – Կարասով ոսկին աղքատ հոդագործներին պարզ է որ կած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար: Երբ որ նրանք են գնում, իրենց արդար վարձին են գնում ու միշտ էլ ոսկի են գտնում, իսկ երբ որ դու ես գնում, գնում ես՝ ուրիշի բախտը հափշտակես, նրա համար էլ ոսկու տեղ օձ ես գտնում:

Թագավորը ցնցվում է, խոսք չի գտնում պատասխանելու:

– Լավ, – ասում է, – դե հիմի էն որոշեցեք, թե եղ երկուսից որին է պատկանում գտած ոսկին:

– Իհարկե հողատիրոջը, – ձայն է տալի վարող գյուղացին:

— Չէ, վարողինն է, — մեջ է մտնում հոդատերը: Ու նորից սկսում են կռվել:

— Լավ, յավ, կացեք, — կանգնեցնում են խմաստունները, — ինչ ունեք դուք՝ տղա կամ աղջիկ:

Դուրս է գալի, որ մեկը մի աղա ունի, մյուսը՝ մի աղջիկ: Իմաստունները վճռում են, որ սրանք զնան, իրենց աղջիկն ու տղեն իրար հետ պասկեն, են գտած ոսկին էլ տան նրանց: Էստեղ համաձայնում են բարի մարդիկը, ուրախանում են, ու կոյիվը վերջանում է, սկսում է հարսանիքը: Օխտն օր, օխտք գիշեր հարսանիք են անում, կարատվ ոսկին էլ, որ պարզն էր դրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար, տալիս են իրենց զավակներին:

Բարին՝ էստեղ, չարը՝ են ազահ քագավորի մոտ:

### Բառերի բացատրություն

խոփ- զորբանի՝ հողի մեջ խրվող մասը  
ուանչպար-հողագործ  
օխտր-յոթ  
օրավար-մեկ օրվա ընթացքում կատարած վար

- Ր ա ր ց Ե ր և ա ռ ա ջ ա դ ր ա ն ֆ ն Ե ր
- ա** Հնարավո՞ր է այս տեքստը պատմել առանց երկխոսությունների:
  - բ** Քանի՞ հոգու միջն է տեղի ունենում խոսք ու զրույցը:
  - գ** Դուրս գրիր հեքիաթից կոչական ու քառ-նախադասություն պարտնակող նախադասությունները՝ ընդգծելով դրանք:
  - դ** Գրիր տղա, բարի, չար, իմաստուն, քագավոր, ազահ, քացատրել, վճռել, զարհուրել, ուղարկել, վիճել քառերի հոմանիշ և հականիշ մեկական տարրերակ:
  - ե** Դուրս գրիր հեքիաթում գործածված բոլոր քարրառային ու խոսակցական ձևերը, փակագծում նշի՛ր քառային կամ քերականական՝ դրանց դիմաց գրելով գրական տարրերակը:

Խ մ բ ա յ ի ն ա ս է խ ա ս ն ֆ - մ ր ց ո ւ յ թ

Փորձեք բեմականացնել այս հեքիաթը:

Երկխոսությունը բնորոշ է գեղարվեստական արձակին, քայց այն հանդիպում է նաև չափածոյում, հատկապես պրեմներում, քալաղներում, չափածո առակներում:

Ավ. Բաահակյան

## Առակ

Ժողվեցան մի օր ծառ ու ծիլ բոլոր,  
Որ իրենց համար ընտրեն թագավոր.  
Ծառ խորհուրդ արին ու դարձան ապա  
**Ասին** ձիթենուն.

- Եղի՛ր թագավոր, իշխի՛ր **մեր վրա:**
- Իս ինչի՞ն է պետք, – ասաց ձիթենին, –  
Ես իս գործն **ունիմ**. չէ՞ որ ամենին  
Սնունդ եմ բաշխում իս պտուղներով.  
Ես ինչպե՞ս իշխեմ իս բարությունով:

Նկար

Խորից խորհեցին ու դարձան ապա  
**Ասին** թզենուն.

- Եղի՛ր թագավոր, իշխի՛ր **մեր վրա:**
- Ո՛չ, ինձ համար չէ, – ասաց թզենին, –  
Ես հաճելի եմ չէ՞ որ ամենին՝  
Քաղցրիկ ու անուշ իս պտուղներով.  
Ես ինչպե՞ս իշխեմ իս քաղցրությունով...

Նկար

Խորիրդի **նախան** և խաղողենուն

Եկան դիմեցին.

- Ինչե՞ր եք ասում,  
Թողթեմ իս գինին՝ ոսկի ու պայծառ,  
Որ ցնծությունով **լեցնում** է աշխարհ,  
Զվարթ երգերով թնդում սար ու ձոր.  
Ո՛չ, իս բանը չէ լինել թագավոր:  
Երկար խորհեցին ծառ ու ծիլ բոլոր,  
Որ շար տատասկին անեն թագավոր...
- **Կրթիմ** թագավոր, և դրա համար  
Իմ սուր փշերով ես շա՞տ եմ հարմար.  
**Կր խոցեմ** խորին, վա՞յ նրա օրին,  
Որ **չինազանդի** իս օրենքներին.  
Եկե՞ք, **քուփիս** տակ մտե՛ք ապաստան..., –  
Ասաց և սրեց փշերը դաժան...

Նկար

### Առաջադրանք և հարց

**ա** Արտագրիր ընդգծված բառերը՝ դրանց դիմաց գրելով համապատասխան ճիշտ ձևը:

**բ** Ինչպե՞ս կմեկնաբանես այդ ձևերի գործածությունը ստեղծագործության մեջ:

## **ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Դրամատիկական ժանրի ստեղծագործություններում՝ պիեսներում, բովանդակությունը զարգանում է հերոսների խոսքի միջոցով՝ երկխոսություն և մենախոսություն: Յուրաքանչյուր կերպար այդ դեպքում դրսւորվում է իր լեզվով՝ իր նկարագրին, էությանը ու նիշավայրին բնորոշ բառապաշարով:

### Դիշիր

**Դրամատիկական ժանրի** ստեղծագործություններում՝ դրամա, կատակերգություն, ողբերգություն, **երկխոսությունն ու մենախոսությունը** գեղարվեստական պատկերման **միակ ձևն են:**

Դերենիկ Դեմիրճյան

**Քաջ Նազար**

(հաստվածներ)

**ՆԱԶԱՐ – Ուստիան:**

ՈՒՍՏԻԱՆ – Հրամայի, աղա՛:

**ՆԱԶԱՐ – Ուստիան,** ի՞նչ եմ ասում, օրը քերպեց, ի՞ր՞:

ՈՒՍՏԻԱՆ – **Քո՞ն** ես, մտիկ արա:

**ՆԱԶԱՐ – Ես էլ էդ եմ ասում:**

ՈՒՍՏԻԱՆ – Թե՞ որ էդ ես ասում, էլ ի՞նչ ես խոսում:

**ՆԱԶԱՐ – Ասում եմ՝ զմամ գեղամեց, քալամը բերեմ:**

ՈՒՍՏԻԱՆ – Թալա՞մը, հա՛, ո՞ւր է, բեր:

**ՆԱԶԱՐ –**/Ծոճրակը քորելով/ Ասում եմ՝ վեր կենամ մի զնամ /Վեր է կենում և մորթին քարշ տալով բերում գցում է բոնրի կողքին և վեր ընկնում վրան/: Գնամ, ասում եմ, է՛ն **իքը** գեղամեց:

ՈՒՍՏԻԱՆ – **Բը ե՛...էլ ո՞ր վեր ըմկար:**

**ՆԱԶԱՐ – Ես էլ էդ ասում:** Տեսնեմ տղերքը գեղամիջումն են: Մի

զարկեմ սարբ, **քարվան**-քան անցկենալիս  
կլինի...

**ՈՒՍՏԻԱՆ** – Չեմ իմանում իմչ ես  
ասում: Բա ասում էիր քալանը եկել է:

**ՆԱԶԱՐ** – Ի՞նչ քալան...

**ՈՒՍՏԻԱՆ** – Կրեմ զլուխդ, բա ո՞ւր էիր  
ասում:

**ՆԱԶԱՐ** – Էղ չէ. ասում եմ՝ Ջոռողլու  
**իգիրներ** են եկել գեղը: Գնամ մի տեսմեմ՝  
էղ ո՞նց են սիրու արել:

**ՈՒՍՏԻԱՆ** – Ի՞նչ... Ելի զնում ես՝  
գեղամիջում շնթռե՞ն: Ի՞նչ գործ ոնես  
գեղամիջում:

**ՆԱԶԱՐ** – Իգիր եմ, պիտի գեղամիջում  
երևամ:

**ՈՒՍՏԻԱՆ** – Դու մկան ծակը հազար  
քումանի ես առնում. ասում ես՝ իգի՞ր եմ...

**Նկար**

**ՆԱԶԱՐ** – Իմացի, որ ես չպիտի աշխատեմ. դու պիտի աշխատես:

**ՈՒՍՏԻԱՆ** – Իմչո՞ւ, հողեմ զլուխդ, դու ի՞նչ ես:

**ՆԱԶԱՐ** – Էնդոր, որ ես ազնիվ եմ:

**ՈՒՍՏԻԱՆ** – Ո՞նց թե, էղ էլ նոր հնարեցի՞ր:

**ՆԱԶԱՐ** – Ինչ պիտի հնարեմ: Գրքերի մեջ գրած է. պապիս  
ապուպապը քագավոր էր: Մեճը ցեղով ազնիվ ենք:

**ՈՒՍՏԻԱՆ** – Ցիւմ պապիդ զլուխը: Ցեղով ազնիվը դու դառար, հա՞:  
Չես աշխատում, հերիք չի՝ հիմի էլ իմ ազնվորյունն ես ուզում ձեռից  
խես: Ազնիվը դո՞ւ ես, թե՞ ես...

## Ր Ա Ծ Ե Ծ Ա Տ Ի Ռ

Հովհ. Թումանյան

### Քաջ Նազար

(հատված)

Էղ Վախելու Նազարը մի գիշեր կնօքա հետ շեմքն է դուրս գալի...

– Այ կնիկ, ի՞նչ քարվան կտրելու գիշեր է... Սիրտս ասում է՝ վեր կաց  
զնա Հնդքստանից եկող Շահի քարվանը կտրի, թեր տունը լցրու...

Կնիկը թե.

– Զենդ կտրի, տեղդ նստի, քարվան կտրողիս մտիկ արա...

Նազարը թե.

— Անզգա՞մ կնիկ, ինչո՞ւ չես թող անում՝ ես գնամ, քարվան կտրեմ, բերեմ տունը լցնեմ... Ել ի՞նչ տղամարդ եմ ես, ել ինչո՞ւ եմ գյակ ծածկում, որդու հանարձակվում ես իմ առաջը խոսես:

Որ շատ կովում է, կնիկը տուն է մտնում, դրանք փակում:

— Հողե՞մ եղ վախսկոտ գլուխդ, դե գնա հիմա, քարվան կտրի...

Ասում են՝ մինչև էսօր ել դեռ ապրում ու քագավորում է. Քաջ Նազարը: Ու երբ քաջորյունից, խելքից, հանճարից մոտը խոսք են գցում, ասում է.

— Ի՞նչ քաջորյուն, ի՞նչ խելք, ի՞նչ հանճար: Բանը մարդուս քախտն է: Բախտ ունե՞ս՝ քեֆ արա...

Եվ ասում են՝ մինչև էսօր ել քեֆ է անում քաջ Նազարը ու ծիծաղում աշխարհի վրա:

## Նկար

### Ավ. Խասհակյան

### Աղա Նազար

(հատված)

— Այ մարդ,— գանգատվում էր կնիկը, — ոչ քարով ես ել աշխարհը մտա, մարդ առա. Էսպես էլ օ՞ր կլինի, էսպես էլ ապրուստ կլինի, որ մենք ենք անում:

— Ի՞նչ անեմ, այ կնիկ, — ասում էր Նազարը, ես ել գիտեմ, որ գեշ է, ճարս ի՞նչ: Էս աշխարհի վրա, ինչքան ես հասկացա, ավելի լավ է մարդ մի մատնոց քախտ ունենա, քան թե մի կարաս խելք... Թե չէ դու ասա՛, ես իո խելա՞ն չեմ, պատճառն ի՞նչ է, որ աղքատ եմ:

— Խելառ չես, քայց խելոքի պես ել չես: Բախտստ ո՞րն է, այ մարդ. Իո նստած տեղի պոտուկով ոսկի շպիտի՞ գտնես: Գնա՛,— խրատում է կինը,

զլուխդ քարին տուր, քարն էլ քլսիդ, տես, փող չե՞ս վաստակի, մարդ չե՞ս դառնա:

— Կնիկ, դու կնիկ ես, փուշ կխոսիս: Ասել եմ ու էլի կասեմ, թե բախտն է բանը, բախտը որ տա մարդուս, նստած տեղն էլ կուտա: Ի՞նչ է, ես ունի՞ց պակաս տղամարդ եմ, որ ողջ գեղի զիտունը ես եմ, բայց արի տես, որ բախտ չունեմ: Ուստի ի՞նչ է իմ **քովս**, Տերտերանց Պողոս աղան ի՞նչ է իմ քովս. նրանց մի բրդուճ կանեմ, կուտեմ թե՛ խելքի, թե՛ կտրիճության կողմից, բայց տես, որ նրանք բախտ ունին ու էստեղից էլ գոմշի ակով ոսկի...

### Առաջադրանքներ

**ա** Ներկայացրո՞ւ, թե յուրաքանչյուր ստեղծագործության մեջ ինչպես են բնութագրվում հերոսները:

**բ** Ո՞ր ատեղծագործության երկխոսությունները քեզ առավել դուր եկան և ինչո՞ւ:

**գ** Երեք ստեղծագործություններից դուրս գրիր հինգ դարձվածք և բացատրի՛ր:

**դ** Դուրս ընդգծված քարքառային ու ժողովրդախոսակցական բառերը և դրանց դիմաց նշի՛ր հայերեն համարժեքները:

### Սեղծազործական աշխատանք

**ա** Գրի՛ր շարադրություն՝ «Մի՛ վախեցիր», «Իսկ ես չեմ վախենու» վերնագրերից որևէ մեկն ընտրելով:

**ա** Նկարի՛ր Քաջ Նազարին քո պատկերացմամբ:

## ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՄՎՍՆՎԳԻՑՎԿԱՆ

### ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Մասնագիտական բնագավառում, աշխատանքային միջավայրում գրույցը դառնում է **երկխոսություն**, բանավեճ՝ ամենատարբեր թեմաներով՝ աշխատանքի ընդունում, կարգապահական հարցի քննարկում, կազմակերպական միջոցառում, փոխադարձ հարաբերությունների պարզաբնում, ստեղծագործության քննարկում և այլն:

## ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

### Ի մ ա ց ի՝ ր

Առաջին դեմքով ներկայացվող քնարական յուրաքանչյուր խոսք կարելի դիտարկել իրու մենախոսություն՝ ամենատարբեր թեմաներով:

**Մ. Արագի**

**Արևը**

Լսո՞ւմ եք... սպասեցեք մի փոքր. ես ձեզ կպատմեմ քոլորը սկզբից...

Գնո՞ւմ եք... լա՛վ, ես կպատմեմ ծաղիկներին ու խոտերին...

Սիրո՞ւն կակաչներ, լա՛վ լսեցեք արևի պատմությունը...

Աղջիկս հիվանդ էր...

Գիտե՞ք, նա էլ ձեզ նման մի ծաղիկ էր՝ նախշունիկ դեմքով, ոսկեգանգուր մազերով:

Աղջիկս հիվանդ էր...

Բժիշկը եկավ, իջավ մեր բնակարանը: Նա տխուր էր: Ինչո՞ւ... Հա՛, հիշում եմ, նա չէր սիրում ներքենի հարկերը...

Նա իջավ ներքև, նայեց իմ աղջկան, նայեց սենյակի պատերին.

— Խոնավ է, — ասաց, — պիտի փոխեք քնարականը, պիտի արևկող սենյակ ճարեք...

Քանի՞ երեխա ունեք, — հարցրեց:

— Երեքն էին. երկուսը մեռան, մնաց այս մեկը... Ազատեք իմ աղջկան. նա մեր տան հոգին է...

Նա իմշ-որ դեղ գրեց ու տխուր դեմքով դուրս գնաց:

— Հայրիկ, ի՞նչ գրեց բժիշկը, — հարցրեց աղջիկս:

— Այև՝ գրեց, սիրելի ս, արև՝ գրեց, որ փայլի քեզ վրա ու ազատի ցավից: Ու այն օրը գնացի արև փնտրելու. գնացի շատ հեռու՝ քաղաքի ծայրը,

**Նկար**

ու գտա արևկող մի բնակարան:

— Միլուն կակաչներ, արևի գավակներ, ավելի լավ չէ՞ր լինի՝ ձեզ մոտ բերեի իմ ոսկեծամիկ աղջկան: Դուք նրան կգուգեիք կարմիր ու կանաչ... բայց, հա՛, զիտեմ, դուք նրան հաց չեիք տա... Դուք սնվում եք վաղորդյան ցողով...

Լսե՛ք, ես դեռ չեմ վերջացրել...

...Մյուս առավոտ պիտի տանեի աղջկաս արևի տուն, բայց երբ լուսացավ, նա ինձ կանչեց, ձեռքս բռնեց ու փակեց աչքերը...

Հետո եկան մարդիկ ու տարան նրան...

Ու երբ ոսկեծամիկ աղջիկս հեռացավ մեզանից... ես դարձա արևի հիվանդ:

Ես գնում էի, նստում փոքրիկ գերեզմանի մոտ ու սպասում արևածագին...

Ու մի օր էլ դիմեցի արևին.

— Հզո՞ր արև,— ասի,— մի մեծ գանգատ ունեմ քեզանից. ինչո՞ւ դու մի շողք խնայեցիր իմ աղջկան, ինչո՞ւ սպանեցիր ու տարար նրան:

Նա տիխրեց ու մքնեց:

— Գնա՛,— ասաց,— հայտնի՞ր աշխարհին, ասա՛ վերևի հարկը արևի շողքերը խլեց, ստվեր ձգեց ներքևի հարկին ու սպանեց են ոսկեկեր աղջկան...

### Ր ա ր ց Ե ր և ա ռ ա ջ ա դ ր ա ն ֆ ն Ե ր

#### **Ա**

**ա** Ըեզ դո՞ւր եկավ պատմվածքը. ի՞նչը քեզ հուզեց. փորձիր թեման կապել մեր օրերի հետ:

**բ** Դասարանում ծավալե՛ք բանավեճ-զրույց բարության, կարեկցանքի մասին:

#### **Բ**

**ա** Հստ նպատակադրման՝ ի՞նչ նախադասություններ կան այս տեքստում. առանձին դո՞ւրս գրիր:

**բ** Որո՞նք են մենախոսական, որո՞նք երկխոսական հատվածները:

**գ** Դուրս գրիր որիշի ուղղակի խոսքերը, ուշադրություն դարձրո՛ւ դրանց կետադրությանը:

**դ** Դուրս գրած ուղղակի խոսքերը դարձրո՛ւ անուղղակի:

## Ս Ե Ղ Ծ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Մ ա ս ի ս ա ն ֆ

Նախապես ընտրի՞ր տրված վերնագրերից որևէ մեկը, համապատասխան բառապաշարը և կազմի՞ր մենախոսական տեքստ:

«Խույլ մի՛ տուր, որ քեզ խղճան»

«Քարությունը կփրկի աշխարհը»

«Օգնի՛ր կարիքավորին»

## Տ Ե Ւ Ս Ա Յ Ի Ւ ա ս ի ս ա ն ֆ

## Եղևնին

(հատված)

Առավոտյան եկան ծառան ու սպասուին: «Հիմա կսկսեն նորից ինձ գարդարել», – մտածում էր եղևնին: Բայց նրան սենյակից դուրս տարան, տանդուղքով վերև քաշեցին և խցկեցին տանիքի ամենամութ անկյունը, որտեղ նույնիսկ ցերեկվա լույսը չէր թափանցում:

«Այս ի՞նչ է նշանակում, – մտածում էր եղևնին: – Ի՞նչ եմ անելու ևս այս-տեղ»:

Եվ նա, պատին հենված, մտածում էր ու մտածում... Դրա համար ժամանակ շատ ուներ:

«Դրաում ձմեռ է, – մտածում էր եղևնին, – գետինն ամրացել է և ձյունով ծածկվել, նշանակում է՝ չի կարելի ինձ նորից տնկել հողի մեջ, ահա դրա համար էլ ստիպված եմ մինչև գարուն մնալ տանիքի տակ: Ի՞նչ խելոք բան են մտածել: Որքա՞ն բարի են մարդիկ: Ա՞յս, եթե միայն այստեղ այսքան մուք չիմեր ու այսպես անտանելի ամայի: Նույնիսկ նապաստակ չկա: Իսկ անտառում որքա՞ն ուրախ էր»:

Սի առավոտ մարդիկ եկան՝ տանիքը կարգի բերելու: Արկդերը դուրս տարան: Նրանց հետևից էլ՝ եղևնին:



«Դե՛, հիմա ինձ համար նոր կյանք է սկսվում»,— մտածեց Եղևնին:

... Բակում ուրախ խաղում էին այս նույն երեխաները, որոնք Ծննդյան տոնին պարում էին տոնածառի շուրջը: Նրանցից մեկը հանկարծ աստղը տեսավ և ծառից պոկեց և ոտքը դրեց ծառի ճյուղերին: Ծյուղերը ճրճրթացին:

Եղևնին նայեց այգու ջահել, թարմ ծաղիկներին, ինտո էլ՝ իրեն և ափսոսաց, որ չի մնացել տանիքի մթին անկյունում: Նա մտաբերեց և իր ջահելությունը, և անտառը, և ուրախ տոնը...

— Ամեն ինչ անցավ,— ասաց խեղճ Եղևնին: Եվ ինչո՞ւ ես չէի ուրախանում, քանի դեռ ժամանակ կար: Իսկ հիմա... Ամեն ինչ անցավ...

Ծառան մի կացին բերեց և Եղևնին կտոր-կտոր արեց. մի ամբողջ կապ կպչան ստացվեց: Ինչպե՞ս թեժ էին վառվուն նրանք մեծ կաթսայի տակ: Ծառը խոր-խոր հառաչեց, և այդ հառաչանքները նման էին ցածրածայն կրակոցների (Հ. Ք. Ա.):

### Ր ա ր ց ե ր և ա ռ ա զ ա դ ր ա ն ֆ ն ե ր

#### **Ա**

**ա** Արդյոք հիշեցի՞ր հեքիաքը. պատմի՞ր այն ամբողջությանք:

**բ** Հիմա դու հեքիաքներ կարդո՞ւմ ես. ո՞րն է քո կարդացած վերջին հեքիաքը:

### Ա ն ա կ ն կ ա լ հ ա ր ց

Եղևնու այս տխոր ճակատագրին ծանոթանալուց հետո կողե՞ս Ամանորի զիշերը թարմ Եղևնի տեսնել ձեր տանը:

#### **Բ**

**ա** Դո՞ւրս գրիր ուղղակի խոսքերը. ըստ նպատակադրման՝ քնութագրի՞ր այդ նախադասությունները. ուշադրություն դարձրո՞ւ կետադրությանը:

**բ** Ուղղակի խոսքերը դարձրու անուղղակի. ի՞նչ փոփոխություններ կատարեցիր:

**գ** Ուշադրություն դարձրու ուղղակի խոսքերի կետադրմանը և քացատրիր:

### Ս ե ն ջ ա զ ո ր ծ ա կ ա ն ա ս ե ս ա ն ֆ

Գրի՞ր շարադրություն՝ «Անտարբերությո՞ւն, թե՞ հիսարափություն» Վերնագրով՝ իբրև մենախոսություն:

## ԼԵՆՔ մԵԾԵՐԻԸ

Աստված իմ... Պահպանիր ինձ այն միամիտ հավատից, որ այս կյանքում ամեն ինչ պետք է հարթ լինի: Տուր ինձ հստակ գիտակցություն, որ դժվարությունները, ձախողումները, պարտությունները և անհաջողությունները միայն կյանքի բաղադրիչ մասերն են, որոնց շնորհիվ մենք աճում ենք ու հստանամում:

Ակադեմիական պատմագիր

### ԿՐԿՆՈՂԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔ

#### Առաջադրանիներ

**ա** Կազմիր կարճ երկխոսություններ հետևյալ թեմաներով՝ «Մի մեղացիր», «Մեկնում եմ քաղաքից», «Չըսուայգում», «Համակարգչի կայրում»:

**բ** Արտագրիր և լրացրո՞ւ երկխոսությունը.

— Հայկ,— տարակուսանքով գլուխը բարձրացրեց ուսուցուիին,— .....

Տղան շփոթված ոտքի կանգնեց:

— .....,— ասաց նա թույլ ձայնով:

— Գրատախտակի մոտ,— կրկնեց ուսուցիչը:

Հայկն աչքերը տրորեց.

«.....»,— ասում էր նրա աչքերի արտահայտությունը:

— .....,— անհանգստացավ ուսուցուիին,— .....

— .....,— պատասխանեց տղան:

— Հասկանում եմ,.....,— արագ վրա բերեց ուսուչուիին,— .....

— .....,— ալատախանեց նա և դեմքը կարմրեց:

Եկար

Խ մ բ ա յ ի ն զ ր ո ւ յ ց - բ ա ն ա վ ե ճ  
Ք ա ր ց ե ր ու ա ռ ա ջ ա դ ր ա ն ֆ ն ե ր

**1.** Զանգվածային լրատվամիջոցներից ո՞րն է նախընտրում քո ընտանիքը՝

թերթեր ու ամսագրե՞ր,  
ռադիո՞,  
հեռուստացո՞ւյց,  
համացա՞նց:

- 2.** Ի՞նչ թերթ, ամսագիր կամ համդես ես դու կարդում. հատկապես ի՞նչ նյութեր ես նախընտրում կարդալ:
- 3.** Դասարանում ներկայացրո՞ւ որևէ թերթից կամ ամսագրից կարդացած նյութը:

### Խ Ծ Ր Ա Խ Ը Ն Խ Ա Դ

– Աշակերտներից մեկը բնտրում է զուգընկեր և հաճախատրաստից նրա հետ զրուցում իր կամ ուսուցչի առաջարկած թեմայով: Ուսուցիչը գնահատում է նրանցից յուրաքանչյուրի բանավոր խոսքը՝ կարևորելով թե՛ երկխոսության բովանդակությունը, թե՛ ճիշտ խոսքը: Որպես թեմա կարելի է վերցնել «Սետրոյի կայարանում», «Մարզապահում», «Ներկայացման ընդմիջմանը», «Ծրանի թերքահավաքին» և այլն:

### ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑԸ ՔՈ ԿՅԱՆՔՈՒՄ

– Հայրիկը բերե՞ց, – բակով մեկ զրնօքաց Հովիկի ձայնը: – Եկե՞ք, հեռուստացույցի ամենավերջին նորություն...

Նրանց հին հեռուստացույցը այլևս պիտանի չէր:

Ու նրա եղբայրներն ու քույրերը, բողած դասագիրք, գնդակ ու ցատկապարան, հավաքվեցին արկոյի շուրջ: Հինգ զույգ մանկական ձեռքեր մեկնվեցին՝ բացելու ստվարաթղթե տուփու: Հայրը տուփից հանեց այնքան փափագած հեռուստացույցը. ո՞նց էին կարուտել: Մի քանի բոսք անց, երբ երկնագույն եկրանը լուսավորվեց, ու հայտնվեց սիրելի հումորիստների ժայռուն դեմքը, երեխաները ուրախությունից ծղրտացին:

Նկար

Ո՞վ կարող է անտարբեր ընդունել հեռուստացույցի հայտնվելն իր քնակարանում կամ առանց հեռուստացույցի ապրել: Չե՞ որ սա քո տնից բացվող պատուհան է աշխարհին, երկվորյակը կախարդական այն հայելու, որի մասին դարեր ու դարեր պատմել են հերիաքները: Սեղմի՛ր հեռակառավարման վահանակի կոճակը ու կզգաս կյանքի ոիբնը աշխարհի բոլոր ծագերում:

Հովիկենց տանը նոր հեռուստացույցի մուտքն ընդունվեց իբրև տոն ու, շատ ժամանակ չանցած, անմեկատ նվաճեց նաև նրանց կամքն ու ժամանակը, խախտեց կյանքի սովորական ոիբմը:

— Իզո՞ւր գնեցինք: Ամեն ինչ դարձյալ գլխիվայր շրջվեց: Հեռուստացույց չեղավ, պատուհաս եղավ մեր զլիսին, — տրտնջում էր մայրը:

...Հիմա կուսափի հեռուստասերիալը, ինտո՝ «Կարգին սերալ»: Երեխաները երբեք քաց չեն քողնում այս պահը: Շուտով ֆուտբոլի խաղն են ցուցադրելու: Հովիկը պետք է դիտի երկու խաղակեսն ել: Իսկ դասե՞րը: «Ոչինչ, դասերս ինտո կսովորեն», — մտածում է նա...

...Սեղան բացում է մաթեմատիկայի դասագիրքը: Կարդում է խնդիրը, կարդում է նորից... Դժվար է հասկանալ. ականջի տակ աղմկում է հեռուստացույցը:

— Դե անջատի՛ր, — խնդրում է եղբորը:

— Ի՞նչ անեմ, քո դասի պատճառով մարտաֆիլմը չնայե՞՞մ:

Անահիտը կարդում է ոտանավորը, աչքի պոչով հետևում ֆիլմին: Մայրը նրան գրքով ուղարկում է ննջարան: Ժամը 12-ն է: Սեղան ննջում է խնդրագրքի վրա, փոքրիկ Ալվարդը քնարաբախ շուռումուռ է գալիս նույն սենյակում բացված բազմոց-մահճակալի վրա ու գանգատվում, որ հեռուստացույցը անջատեն:

— Դե լավ, — հեգնում է Հովիկը, — երեսդ պատի կողմն արա...

— Քիչ է մնում դուրս շարտեն այդ հեռուստացույցը, — զայրույթի պահին ասում է հայրը:

Ո՞վ է մեղավոր: Հեռուստացո՞ւյցը... (Հ. Ռ.):

### R a r g Ե r և առաջադրանքներ

1. Ծանո՞թ է քեզ հեղինակի նկարագրած իրավիճակը. ո՞վ է ձեր տանը ավելի երկար հեռուստացույց դիտում:

- 2.** Արդյոք պատմվածքի հերոսները ճիշտ էին կազմակերպում իրենց առօրյան:
- 3.** Դու ունես նաև համակարգիչ. կարողանո՞ւմ ես կտրվել համակարգչից:
- 4.** Գրիիր «Համակարգիչն իմ կյանքում» շարադրություն՝ անկեղծ արտահայտելով քո և քո ընտանիքի վերաբերմունքը:

## ԼԵՆՔ ՄԵԾԵՐԻԸ

Մարդու եղունգները, մրա անձրևամոցի թևքերը, մրա կոշիկները, անդրավարտիքը, նրա ձեռքերի կոշտուկները, դեմքի արտահայտությունը, ճարմանդները, շարժումները մարդու մասին շատ բան են ասում: Ուշադիր դիտողը, նկատված նշանները միավորելով, կարող է գրեթե անսխալ եղակացության հանգել:

Շնորհի Հոգին

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1. ԴԻՄՈՒՄ

Պաշտոնական գրագրության մի ձև է դիմումը, որը սովորաբար ուղղված է լինում պաշտոնատար անձանց՝ հիմարկ-ձեռնարկությունների, ուսումնական հաստատությունների դեկավարներին՝ որևէ հարց լուծելու ակնկալիքով։

Դիմումի մեջ հստակ պետք է նշվեն՝

Նկար

**ո՞ւմ է ուղղված,  
ո՞ւմ կողմից,  
ի՞նչ խնդրանքով։**

Դիմումը պետք է ձևակերպել հետևյալ ձևաչափերով։

- **Ում է ուղղված և ում կողմից**-ը գրվում է բավականաչափ խորքից՝ գրեթե աջ կեսից, որպեսզի դիմումին պատասխանողը ազատ տեղում մակագրություն կատարի՝ դիմումում բարձրացված հարցի առնչությամբ։

- **Դիմում**-ը գրվում է մեջտեղից, որի վրա չի դրվում որևէ կետադրական նշան։

- Բուն շարադրանքը պետք է գրվի մեկ պարբերություն խորքից. այն պետք է գրվի հնարավորինս սեղմ ու հասկանալի, բայց հստակ պատճառաբանությամբ։

- Դիմումի մեջ հիշատակվող փաստաթղթերի առկայության դեպքում նշվում է՝ **Դիմումին կից ներկայացնում եմ...**

### Դիմումի նմուշ

Երևանի Վ. Տերյանի անվան  
թիվ 19 ավագ դպրոցի տնօրեն  
տիկին Է. Մնացականյանին  
Երեքտնի համայնքի բնակիչ  
Տ. Մինասյանից (Նոր Արեշ,  
16 փողոց, 28 տուն, հեռ.՝ 45-25-55)

### ԴԻՄՈՒՄ

Հարգելի! տիկին Մնացականյան.

Որդիս՝ Կարեն Սինասյանը, այս ուսումնական տարում ավարտում է հիմնական

դպրոցը: Ես ցանկանում եմ, որ որդիս հետագա ուսումը շարունակի Ձեր դպրոցում:

Կից ներկայացնում եմ համապատասխան փաստաթղթեր:

Դիմում (ստորագր.)՝ Տիգրան Մինասյան

25. 05. 2014

## 2. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր հիմնարկում որոշակի կոնկրետ ժամանակահատվածում իրավիրկում են ժողովներ ու նիստեր: Ժողովում կամ նիստում քննարկված բոլոր հարցերը անպայմանորեն գրի են առնվազ: Գրառված այդ փաստաթուղթը կոչվում է **ԱՐՃԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**:

### Դ Ե Տ Ա Ֆ Ր Ի Ւ Տ

**Արճանագրություն – Արճանագրություն** – Արճանագրություն նշանակում է «կորող, սահմանադրար, մեծ քար, կոոր»:

Հնում **արճանագրություն** ասելով հասկանում էին **փորագրված քարեն տախտակ**, հետագայում՝ մարդու կամ կենդանու քանդակ: Այս արմատից առաջանում են արճանագիր, արճանագրություն, արճանագրել քառերը, որոնց իմաստը բխում է ամենահիմն նշանակությունից՝

**Արճանագրություն** - 1. Քարի՝ աղյուսի և նման կարծր առարկաների վրա փորագրված գրություն, 2. Ժողովում նիստում ասվածների գրանցու-

մը պարունակող փաստաթուղթ:

- Իրավաբանական-հարցաքննության ժամանակ տրված ցուցմունքների կամ դատական նիստի ողջ բնթացքը
- Որևէ փաստ՝ իրողություն հավաստող, վավերացնող փաստաթուղթ, օրինակ՝ վթարի արձանագրություն
- քաղաքացիական դրաւթյան, ծնունդի ու մահվան մասին կատարվող գրանցում
- դիվանագիտության ոլորտում՝ համաձայնագիր՝ որևէ օտար պետության հետ կնքված համաձայնության գրավոր փաստաթուղթ
- Փոխարերորեն՝ դեպքերի, փաստերի չոր ու ցամաք, առանց ստեղծագործական նշակման նկարագրություն, շարադրանք

Արձանագրությունը, լինելով տեղեկատվական տեքստ, ցանկացած հիմնարկի ու կազմակերպության, լինի դա դպրոց թե հիվանդանոց, կուտակցության գրասենյակ թե դատարան, կառավարություն թե Ազգային ժողով, գործավարության հիմքն է, քանի որ այդ փաստաթղթում է վերջնական որոշում կայացվում:

Արձանագրությունը գրառվում է նիստի քարտուղարի կողմից, ձևակերպվում է ճշգրիտ, հստակ, կազմվում է խնամքով և հաստատվում, վավերացվում է նիստի կամ ժողովի նախագահի ու քարտուղարի ստորագրություններով և տվյալ հիմնարկի կնիքով:

Արձանագրությունը պաշտոնական գրագրության կադապարային փաստաթուղթ է, որն ունի որոշակի ձև, կառուցվածք, և յուրաքանչյուր, ով կազմում է արձանագրություն, պահում է այդ որոշակի ձևն ու կադապարը:

Եթե հիմնարկը ունի իր պաշտոնական թլանկը, ապա արձանագրության առաջին էջը գրառվում է այդ թլանկի վրա:

Էջի մեջտեղում գիշատառերով գրվում է արձանագրության վերնագիրը, հաջորդ տողերում նշվում է հիմնարկի որերորդ նիստի արձանագրությունն է:

Նիստի հերթական համարը սովորաբար գրում են հենց **Արձանագրություն** ձևակերպման կողքին՝

### **Արձանագրություն- թիվ 10**

Նոր տողից՝ սկզբնամասից իրար տակ գրվում է

### **Նախագահ**

**Քարտուղար**, որոնց դիմաց գրվում է տվյալ անձանց անուն-ազգանուները (անվան՝ սկզբնատառը, ազգանունը՝ լրիվ):

Հաջորդ տողից՝

### **Ներկա էին կամ**

**Նիստին մասնակցում են,** որին հաջորդում են ներկաների անուն-ազգանունները՝ նշելով նաև պաշտոնը:

Սրան հաջորդում է՝

**Օրակարգ,** որի ներքեւ տողից համարակալմամբ նշվում են այն բոլոր հարցերը, որոնք որված են քննարկման: Եթե օրակարգի տվյալ հարցը պետք է ներկայացնի որևէ մեկը, ապա անպայման հարցի տակ նշվում է նաև ելույթ ունեցողի անուն-ազգանունը, պաշտոնը:

Տեղեկատվական այս մասին հաջորդում է ժողովի կամ նիստի ընթացքը, ելույթ ունեցողների հիմնական խոսքը՝

**Լսեցին –** քննարկվող հարցի մասին գեկուցողին (անուն-ազգանունը)

– Եթե հարցի վերաբերյալ գեկուցումը երկար է, այն կցվում է արձանագրությանը:

– Եթե գեկուցողին տրվում են հարցեր, ապա արձանագրության մեջ նշվում է՝

**Հարց-հարցի** բովանդակությունը,

**Պատասխան –** հարցին տրվող պատասխանը գեկուցողի կողմից:

**Արտահայտվեցին –** տվյալ հարցի շորջ յուրաքանչյուր ելույթ ունեցողին(անուն-ազգանունը)

**Որոշեցին –** ձևակերպվում է կայացված որոշումը, ընդ որում, որոշումը կարող է բաղկացած լինել մի քանի կետից. այդ դեպքում յուրաքանչյուր կետը նշվում է նոր տողից՝ համարակալմամբ:

Արձանագրության ավարտին հաջորդում է մեկ տող ներքեւում դարձյալ՝

**Նախագահ –** (ստորագրություն) անուն-ազգանուն

**Քարտուղար –** (ստորագրություն) անուն-ազգանուն

### **Նմուշ**

### **Արձանագրություն թիվ 7**

Երեանի թիվ 15 դպրոցի մանկավարժական խորհրդի  
ժողովը

**Նախագահ –** դպրոցի տնօրեն Ա. Սահակյան

**Քարտուղար –** ուսմասվար Գ. Դանիելյան

Ներկա են թիվ 15 դպրոցի մանկավարժական ողջ կոլեկտիվը, ծնողներ...

Օրակարգ՝

1. Դպրոցի՝ հատուկ հսկողության տակ գտնվող աշակերտների վարքագիծը մեկ ուսումնական տարում:

(զեկուցող՝ դպրոցի տնօրեն Ա. Սահակյան)

2. Աշակերտների ամառային հանգստի կազմակերպումը Սևանում

(զեկուցող՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչ Կ. Մնացականյան)

Լսեցին դպրոցի տնօրեն Ա. Սահակյանի և ֆիզկուլտուրայի ուսուցիչ Կ. Մնացականյանի ելույթները...

Արտահայտվեցին՝

ուսուցիչ Գ. Մելքոնյանը – ելույթի տեքստը...

ոստիկանության օպեր-լիազոր Ա. Պողոսյանը – ելույթի տեքստը...

ծնողներ Բ. Ազատյանը, Կ. Մովսիսյանը – ելույթի տեքստերը...

Որոշեցին՝

ա) հատուկ հսկողության տակ գտնվող աշակերտների վարքագիծը համարել բավարար և դիմել ոստիկանության ներքին գործերի բաժին՝ նրանց հաշվառումից հանելու համար:

բ) հավանություն տալ Կ. Մնացականյանի՝ աշակերտների ամառային հանգստի կազմակերպման նախագծին և աջակցել դրա իրականացմանը:

Ժողովի նախագահ՝ (ստորագրություն) Ա. Սահակյան

Ժողովի քարտուղար՝ (ստորագրություն) Գ. Դանիելյան

### Առաջադրանք

Փորձիր ներկայացնել արձանագրության մեջ հիշատակված ելույթների տեքստերը քա տրամարանությամբ:

### 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվությունը հիմնարկի կամ կազմակերպությամ՝ որևէ ժամանակահատվածում որևէ հարցի կապակցությամբ կատարած աշխատանքների գրավոր ներկայացումն է ավելի բարձր, վերադաս օդակի առջև:

Հաշվետվությունը գրավոր փաստաթուղթ է, որը, սակայն, ժողովի ընթացքում կարող է ներկայացվել նաև բանավոր:

Հաշվետվություն գրելու համար որևէ գրավոր կաղապար կամ ստան-

դարս չկա:

Տվյալ փաստաթղթում կարևորվում է տեքստի հիմնական ասելիքը՝ աշխատանքային գործունեությունը ճիշտ մատնանշող ուղղությունները՝ սկսած առաջնայինից մինչև վերջին հարցը: Այն պետք է ներառի գործունեությունը ցույց տվող փաստացի թվական տվյալներ, հատակ վիճակագրություն և ընդիանուացնող եզրահանգումներ:

#### Առաջադրանք

Քանի որ դու, սիրելի՝ աշակերտ, դեռ դպրոցական ես, ապա քեզ առաջարկում ենք գրել հաշվետվություն հետևյալ պայմանական թեմաներով՝

**ա)** հաշվետվություն հայրիկին՝ մեկ անսվա ընթացքում քո կատարած աշխատանքի, պահվածքի նասին,

**բ)** քո դասարանի անոնից հաշվետվություն դպրոցական ժողովում՝ ձեր կատարած աշխատանքների (արտադասարանական թե դասարանային), դասարանի ընդհանուր առաջադիմության, այդ առաջադիմությունը բարձրացնելուն ուղղված ձեր քայլերի նասին:



## ՏԱՐՎԵՐՁՅԱՆ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

S t f u s a j h n    a c | u a s a n f

### Ռազմիկ Դավոյան

Նկարչի մատներին և ձեռքերին,  
և գգեստին անգամ  
ներկը ոչ թե կեղս է,  
այլ շողջողուն գոհար,  
քանզի նա մասունքն է այն սուրբ ներշնչումի,  
որով կյանքը կրկին  
արարվում է՝ որպես հավերժություն,  
և կործանում չունի,  
վախճան ու վերջ չունի:

Թանաքն անհունորեն գեղեցիկ է:  
աշակերտի մատղաշ մատիկներին.  
և թանկագին հոյս են  
ջաղացանի գգեստն ալբարախս,  
հացրուխների գոգնոցները խմորապատ,  
ծխոտ օճորքների մուրն անխարդախս,  
բուրումնավետ ծուխը՝  
Հայոց լեռնաշխարհում բազմասապատ...

Ծշմարտութությունն այնքան հուզիչ է ու պայծառ,  
երբ որ արդար մարդու շորթերից է հնչում.-  
և նա աղը է դառնում, աշխ, ծայրեծայր  
և շորթերի վրա սուտ խոսողի,  
և կեղծ բարեպաշտի...



### Հովհաննես Շիրազ

Թեկուզ բնության գույները բոլոր  
Հրաշքով առնես քո ծով կտավին,  
Նորից չես հասնի բնությանը խոր,  
Զո ծով կտավով փոքր ես տակավին:  
Բայց եթե վրձնես այդ գույների ինտ

Եվ մարդու ոգու զույները բոլոր,  
Կապրես քո մի բուռ կտակով հավետ՝  
Մարդու պես վսեմ, քնության պես խոր...

**Համն Սահյան**  
**Տեսողությունս**  
Վտանգի զույնը  
Մեջքով եմ տեսնում,  
Արևի զույնը  
Տեսնում եմ մաշկով,  
Իրերը ես բաց  
Աչքով եմ տեսնում,  
Իսկ նրանց խորքը՝  
Միայն փակ աչքով:

Նկար -

**Առաջադրանք**  
Այս առեղծագործություններին ավելացրո՞ւ ևս մեկը՝ Հովհաննես Թումանյանի «Իններորդ ալիք», և արտագրի՞ր քո տեսրում:

### Րարցեր և առաջադրանքներ

#### **Ա**

**ա** Տրված բանաստեղծություններից ո՞րը քեզ առավել դրոր նկավ. սովորի՞ն այն անգիր:

**բ** Ի՞նչ ասել է բանաստեղծական խորք. քեզ ո՞ր բանաստեղծությունը ի՞նչ սովորեցրեց. արտահայտվի՞ր բանավոր:

**գ** Դու ի՞նչ բանաստեղծություն կավելացնեիր այս ցանկին՝ նրանց արտահայտած նյութին համարժեք:

#### **Բ**

**ա** Դուրս գրիր բոլոր բանաստեղծությունների համադասական նախադասությունները բնութագրելով դրանք լսու բաղադրիչների ինքնուրույնության, լսու կապակցման միջոցների:

**բ** Դուրս գրիր բոլոր բանաստեղծությունների ստորադասական նախադասությունները բնութագրելով դրանք լսու գերադաս և ստորադաս բաղադրիչների, լսու կապակցման միջոցների:

**գ** Հարցերի և կապակցական կադապարների օգնությամբ պարզի՞ր, քեզ լիսավորի ո՞ր անդամին են լրացնում ստորադաս նախադասությունները:

**գ**

**ա** Ի՞նչ ասել է քառի ուղի և փոխաբերական իմաստ:

**բ** Դուքս գրիր քանաստեղծություններից տապը քառ և քառարանի օգնությամբ նշիր դրանց ուղիղ և փոխաբերական իմաստները:

### Վախթանգ Անանյան

#### Աճձրել

(Կրծաստումներով)

Սիրում եմ անձրեւ երբ նոսր վարագույրներով կախվում է սևագորշ ամպերից և տիեզերական ցնցուղի նման իր տարափի տակ առնում հանդ ու անդաստան:

Սիրում եմ շոնդալի անձրեւ ջրառատ ծանր որ աղմկալի հարվածում է տանիքներին ու ջրհորդաններով գահավիժում ցած:

Սիրում եմ անձրեւ ամառվա երկարատև երաշտին երբ բոշնած բույսերը ուշքի են գալիս և վերակենդանացող արարածների նման «օխա՛յ» են քրթմնջում հրճվանքով երբ պապակված հողը կլանում է երկնային շիթերն այնպիսի ագահությամբ որ ոչ մի առվակ չի գոյանում երկրի վրա:

Սիրում եմ և գարնանամուտի անձրեւ որին ուղեկցում են ամպերի առաջին որոտներն ու երերեն կայծակները:

Սիրում եմ անձրեւ իր բոլոր ձևերով իր բոլոր արտահայտություններով և հախուռն ու ջրառատ և կարճատև տեղատարափը որ դեռ չդադարած ծխածանն է շքեղ կամարներ կապում մեր ծորերի վրա:

Երբ սկսվում է անձրեւ և մարդիկ նրանից պաշտպանվելու համար ծածկերի տակ են վազում ես դուրս եմ գալիս ու քայլում բաց երկնքի տակ: Թող թափի բոլոր կյանքերին կյանք տվող երկնային հեղուկը:

Անձրեւ հուշեր է արքնացնում իմ մեջ քաղցր հուշեր...

...Ասում են ես անձրեւ տակ եմ ծնվել և երբ աշխարհ եկա առաջին ծայները որ լսեցի ամպի գոռոցն էր և անձրեսի շոնդալի թմբկահարությունը: Այն ժամանակ ասում են մենք մեր վրանները խփել էինք Բազումի լեռների կանաչով լի մի գեղատեսիլ սարահարթում... Գոռզոռում են ամպերը կայծակը խփում է դիմացի ժայռին և այդ պահին աշխարհ եմ գալիս ես հազար տեղից կարկատած մեր վրանում:

Ամեն տեղից կաթում էր այդ վրանը չըպ չըպ...: Դա օգոստոսին էր բայց այնպես ցուրտ էր մեր սարերում որ շներն անգամ դրդում էին իրենց բներում: Թաց փայտը մխում էր օջախում և դառը ծխով լցնում մեր ողորմելի բնակարանը: Ծում էի ասում են աշխարհով մեկ այնպես էի ճշում որ...

Աղջի երեխու վրա կաթում է կսառչի կմեռնի փաթաթենք զյուղը տար ասել է իմ հորեղբոր կինը Սոնան: Ու առանց համաձայնության սպասելու շալը կապել են մորս մեջքից ինձ խանձարուրով զցել մեջը ծեռնախայտը ծեռքը տվել: Եվ իմ բորիկ մայրը լեռան լանջով ամպամած բարձունքից քայլել է դեպի Դիլջանի հովիտը: Քայլել է դեպի տաքը դեպի արևը իր վերջին զավակին զազազած տարելրից փրկելու ...

Շամփին անձրևը սաստկացել է սառը ջրերն անցել են և շալը և իմ անշուք բարուրը ու լողացրել ինձ: Այս աշխարհի գալուն պես ես լողացել եմ անձրևի ջրով: Երեխ այդ է պատճառը որ զարմանալիորեն մեծ է անձրևի պաշտամունքը իմ մեջ...»

Այս սրտում իջել է մայրս լեռներից իր մեջքին զգալով այն փոքրիկ արարածի զոյլությունը իջել է ամպերի միջից: Եվ երբ հասել է մեր զյուղի թիկունքը փակող ցածր սարի կատարին Դիլջանի հովիտը նրա դեմ է ելել իր ողջ շրեդությամբ անձրևից լվացված ոսկեգույն արտեր, ինձի հասած ծաղկուն մարգագետիններ որոնց մեջ այլ կարմիր կակաչներն էին վառվում:

Պետք է որ մայրս թաքուն թերկրանք զգար իր սրտի տակ բարի արևից շերմացած այն հովիտն իջնելիս:

Հիմա մորս հետ մեր իին գորգերը լցնում ենք լեռնային գետակն ու մահակով հարվածներ տալիս որ մաքրվի շըրպ շըրպ շըրպ:

Այդ գետակի ափին կանաչի վրա փոռում էին և մեր անկողինները: Թափալվիր: Ախր չեք պատկերացնում թե մեր ցուրտ ու ամպերով պատած սարերում ինչ թերկրանք է բերում արևի արևից շերմացած անկողինը կանաչը որոնց վրա զլորվում ու գզվոտվում էինք մենք:



Լորիկ ՄԻՆԱԳՅԱՆ

**Ա մ փ ո փ ի չ հ ա ր ց ե ր և ա ռ ա զ ա դ ր ա ն ֆ օ ե ր  
Ա**

**ա** Փորձիր պատմել այս նյութը՝ ստեղծագործարար:

**Բ** Իսկ քե՞զ բնության որ պահն է դուք գալիս. նկարագրի

**գ Կետադրիք տրված տեքստը և բացատրիք՝**

1. բարդ նախադասության կետադրման օրինաչափությունները,
2. որիշի ուղղակի խոսքի կետադրությունը,
3. առողջանության նշանները և դրանց առկայությունը տեքստում:

**Ս Ե Ւ Ծ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ծ Ա Վ Ա Տ Ա Ծ Ի**

**ա Ի՞նչ երաժշտություն կլսեիր՝ համահունչ «Անձրւը» տեքստին:**

**բ Օգտագործելով արված տեքստերի նյութերը՝ նկարի՞ն որևէ տեսարան:**

**գ Ո՞վ է քո սիրած նկարիչը. հավաքի՞ր նյութեր նրա մասին և ներկայացրո՞ւ դասարանում:**

**դ Գրի՞ր շարադրություն՝ «Ի՞նչ կուզեի նկարել, եթե նկարիչ լինեի» թեմայով:**

**Ա ռ ա ջ ա դ ր ա ն ի ն ե ր**

**ա Բնութագրիք յուրաքանչյուր նախադասության տեսակը:**

**բ Քաղաքիչ քանի՞ նախադասությունից է կազմված յուրաքանչյուր քարդ նախադասություն:**

**գ Դուրս գրիր բոլոր նախադասությունների դերբայական դարձվածները՝ նշելով նրանց շարահյուսական պաշտոնը:**

**դ Որոշիր երկրորդական նախադասությունների կապակցման միջոցները:**

**ե Վերլուծիք տրված նախադասություններից հինգը՝ ըստ նախադասության շարահյուսական անդամների:**

1. Երբ քայլում էր Աբովյանով՝ զամբյուղը լիքը ծաղիկներ, հաճախ էլ մի քանի կիտրոն մեջը դրած, հեռվից թվում էր, թե մի սև հարցական է քայլում փողոցով՝ ինքն իրենից դժգոհ, ինքն իրեն կորցրած:

*Հ. Աղազար*

3. Հարսն էր, որ բարձը դրել էր ուստայի մեջքի ետևը, և այժմ ուստան, այդ բարձին հենված, լուսամուտից նայում էր դուրս՝ դեպի այն աշխարհը, որից ինքը շուտով պիտի հեռանար:

*Մ. Աղաման*

4. Այժմ նա համոզված էր, որ թե նույնիսկ եռապատկեր աղբյուրների թիվը, դարձյալ կիրականացներ:

*Մ. Աղաման*

5. Անհարմար չէր լինի, եթե իջներ գետափ, ձիու տեղը փոխեր:

*Հր. Մարտիրոսին*

6. Նա հենց նոր դուրս եկավ հագուստեղինի խանոթից, որ զործակատար էր երկար տարիներ ի վեր, և հիմա շտապում է տուն՝ ընթրելու:

*Մր. Շոյքսին*

7. Մայրերի մասին կարելի է գրել աճվերջ, մանավանդ պատերազմի օրերին, եթե յուրաքանչյուր մայր մի հերոս է՝ հավատի, հույսի և տոկունության մի ամբողջ աշխարհ՝ անմեկնելի ու հուզիչ, անասելի բարդ և միևնույն ժամանակ պաարզ:

*Մր. Շոյքսին*

8. Անդուն հանկարծ հիշեց հորը, որ ահա, նույն քարի տակ նստած, տրեխսի փոկ էր քաշում, և մորը, որ ջրում քորդ էր վանում, և իրեն, որ նստել էր այդ որձաքարերին ու ջրի հետ երգում էր:

*Հր. Մարտիրոսին*

9. Լուսնյակ գիշերներին, երբ գյուղը քնած էր բեզարած մրափով, հովը սառնություն էր բերում ցերեկվա շոգից խանձված դաշտերին, լուսնյակ գիշերներին, երբ բարդու վրա՝ իր բնի մեջ, հանգստանում է արագիլ, որ լուսաբացին, լառ-լառ թները փուած, իշնի ճահճուտի վրա, Լառ-Մարգարը մինչև լուսաբաց աշխատում էր:

*Աֆ. Վահոնիկյ*

10. Ես ուշադիր լսում էի ընկերոցս, և թեպետ ծառերը դարձյալ ճյուղերը կախել էին ճանապարհի վրա, բայց այլևս մտրակով չէի պոկում նրանց տերևները:

*Աֆ. Վահոնիկյ*

## ՀԱՎԵԼՎԱԾ 1

### Գծառատկերներ

Բարդ նախադասությունները, բայց կազմության, լինում են **երկրադադրիչ** և **բազմադադրիչ**:

#### Բարդ համադասական նախադասություն

Գծապատկերը ճիշտ ստանալու առաջին պայմանը բարդ նախադասության մեջ եղած բադադրիչ նախադասությունների ճիշտ համարակալումն է. նախադասությունները համարակալվում են հերթականությամբ: Իսկ դրա համար պետք է միշտ իիշել բարդ նախադասության սահմանումը:

#### Դիմ ի՞ր

**Մեկից ավելի պարզ նախադասություններից կազմված նախադասությունը կոչվում է բարդ նախադասություն:**

Այն բարդ նախադասությունները, որոնց կազմի մեջ մտնող պարզ նախադասությունները համազոր են կամ համադաս, կոչվում են բարդ համադասական նախադասություններ:

Բարդ համադասական նախադասության մեջ մտնող բադադրիչ նախադասությունները կոչվում են համադաս նախադասություններ:

Բարդ համադասական նախադասության համադաս նախադասությունները գծապատկերում իրար միանում են հորիզոնական գծով,  
**ինչպես՝**

1. 1/Ծովագում եր, 2/ն մի անուշ թմրություն լցվում եր մարմինը:

1———2

2. 1/Հետո երեք ստվերներ շարժվեցին, 2/գլուխներն իջան վար՝ մինչև  
գետին, 3/կապան փաշայի ոտքերին 4/ն ստվերների պես դանդաղ ելան վեր:

1———2———3———4

Բարդ համադասական նախադասության մեջ համադաս նախադասությունները կարող են ունենալ իրենց ստորադասված երկրորդական նախադասություն, **ինչպես՝**

3. 1/Սակայն տարիներն ու աղբյուրներն աննկատելի շարվեցին 2/և նա մի օր մեծ զարմանքով նկատեց, 3/որ արդեն կառուցել է քսաներարդ աղբյուրը:

1 —— 2  
                  3

### Դիշի՛ր

Նման նախադասությունները, որոնցում համադաս նախադասություններից մեկը կամ յուրաքանչյուրը ունենում է իրեն ստորադասվող երկրորդական, կոչվում են խառը տիպի բարդ նախադասություն:

4. 1/Բարդիների արանքներով նա տեսնում էր ցածրում գտնվող երկու այլ տների տափակ կտորները, 2/և կտորներից այն կողմ՝ նորից բարդիների արևոտ զազաքները, 3/որ խոյացել էին կտորներից բարձր 4/և սովորի պատառներ էին զցել դրանց վրա:

1 —— 2  
                  3 — 4

## Բարդ ստորադասական նախադասություն

Գծապատկերով ճիշտ ստանալու առաջին պայմանը բարդ ստորադասական նախադասության մեջ եղած բաղադրիչ նախադասությունների ճիշտ համարակալումն է. նախադասությունները համարակալվում են հերթականությամբ՝ անկախ գերադաս կամ տուրադաս լինելուց:

### Դիշի՛ր

Այն բարդ նախադասությունները, որոնց կազմի մեջ մտնող պարզ նախադասություններից մեկը զերադաս է, գլխավոր, իսկ մյուսը կամ մյուսները լրացնում կամ պարզաբանում են գլխավորի միտքը, կոչվում են բարդ ստորադասական նախադասություններ:

Այն նախադասությունը, որի որևէ անդամը արտահայտված է մեկ որիշ նախադասությամբ, կոչվում է գլխավոր կամ գերադաս նախադասություն:

Այն նախադասությունը, որը փոխարինում է գլխավորի որևէ անդամին կամ ամբողջ գլխավորին, կոչվում է երկրորդական կամ ստորադաս նախադասություն:

Բարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունները կոչվում են բաղադրիչ նախադասություններ:

Բարդ ստորադասական նախադասության գերադաս նախադասությունը ստորադասին միանում է ուղղահայաց գծով, **ինչպես՝**

1/Ծնչակտոր քամի էլ կար, 2/որ հազիվիազ հաջողեցնում էր մի երկու բուռ անձրևաջուր պոկել օդից:

1

2

Բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասությունը լինում է երեք տեսակ՝

**1.Համաստորադաս բարդ ստորադասական նախադասություններ,** որոնցում ստորադաս երկրորդական նախադասությունները միմյանց համադաս, համազոր են, գլխավորին ստորադաս:

1/Կառուցելով ևս չորս աղբյուր՝ նրան նույնիսկ թվաց, 2/թե ինքը երբեք չի հասնի վերջինին, 3/թե իր նպատակը կմնա անկատար:

- 1-գերադաս
- 2- ստորադաս
- 3- ստորադաս

1

2-----3

**2.Տարատորադաս բարդ ստորադասական նախադասություններ,** որոնցում երկրորդական նախադասությունները գլխավորին ստորադաս են, միմյանց՝ տարասեն, անհամազոր:

1/ Թեև նա արդեն վարսունինգ տարեկան էր, 2/քայց ծերությունը չէր նրա մահվան պատճառը, 3/որովհետև նա դեռ ամրակազմ էր և առողջ:

- 1 – ստորադաս
- 2 - գերադաս նախ
- 3 – ստորադաս.

2

1

3

1/Երբ մուրճ իջնում էր այգու ծառերի կատարներին, 2/հին երևանցիները գրավում էին քաղաքային այգու բոլոր նստարանները, 3/որ

լսեին իրենց կույր երաժշտի անսովոր մեղեղիները:

- 1 – ստորադաս
- 2 - գերադաս նախ.
- 3 – ստորադաս

2  
1                  3

**3. Ենթաստորադաս բարդ ստորադասական նախադասություններ,** որոնցում երկրորդական նախադասությունները հաջորդաբար ստորադաս են մեկու մյուսին:

**1/Սուտ կլինի, 2/եքն ասեն, 3/որ աստված այստեղից է վերցրել իր դրախտի անունն ու ձևը:**

- 1 - գերադաս նախ.
- 2 – ստորադաս
- 3 – ենթաստորադաս

Երկրորդ նախադասությունը՝ **եքն ասեն**, իր հերթին գերադաս է երրորդ նախադասության համար:

1  
2  
3

**1/Ու չվրդովվեց, 2/երք տեսավ, 3/թե ինչպես մեկ առ մեկ հեռանում են հուղարկավորները:**

- 1 – գերադաս նախ.
- 2 – ստորադաս
- 3 – ենթաստորադաս

1  
2  
3

Երկրորդ նախադասությունը՝ **երք տեսավ**, իր հերթին գերադաս է երրորդ նախադասության համար:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2

### ԱՌԱՆՍՁԻՆ ԵՎ ԳԾԻԿՈՎ ԳՐՎՈԴ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՑՄԱՆԿ

#### Ա

ազգային-ազատագրական	աշակերտ-աշակերտուիի
ալան-թալան	աշխարհից աշխարհ
ալֆա-ճառագայթներ	աչք աչքի գցել
ալվան-ալվան	աչքով-ունքով
ալ ու ալվան	աչքով-ունքով անել
ականջը գցել	ապրել-մեռնել
ակաս-պակաս	ապրեմ-չապրեմ
ահել-ջահել	առ այն
ահել ու ջահել	առ Աստված
աղաչանք-պաղատանք	առիթ-անառիթ
աղի-լեղի	առհավետ
աղբյուր-հուշարձան	առոր-փառոր
աղմուկ-աղաղակ	առուժախ
աղջիկ-պատանի	առք ու վաճառք
աղտ-աղարտ	ասել-խոսել
աման-չաման	ավել-պակաս
ամառ-ձմեռ	ավել-թափել
ամերիկա-իսրայելական	արաբ/ա-թուրքական
ամսից ամիս	արագ-արագ
այծ-այծատեր	արյուն-արցունք
այն էլ	արյուն-քրտինք
այսինչ-այնինչ	արմանք-զարմանք
այսօր-վաղը	արքայից արքա
անզիերեն-հայերեն	Արաս-Միրզա
անգլո-ամերիկյան	Արու-Լալա Մահարի
անել-դնել	Աքո Դարի+ի
անթիվ-անհամար	Աղիս Արեքա
անտես-անհայտ	Աթենաս-Պալլաս
անտուն-անտեր	Ալանաց դուռ
անցնել-դառնալ	Ալմա Աքա
անցնող-դարձող	Ալի-Ալան
անց կենալ	Ավան-Առինջ թաղամաս
անուն-ազգանուն	Ավստրիո-Հունգարիա

## Արփա-Սևան ջրատար

**Բ**

բաժան-բաժան  
բառ-մասնիկ  
բառ-նախադասություն  
բարակ-մարակ  
բարձր-բարձր  
բարով-խերով  
բացահայտիչ-բացահայտյալ  
բացել-փակել  
բաց կանաչ  
բետա-ճառագայթում  
բետա-մասնիկ  
բերել դնել  
բերել թողնել  
բերել հասցնել  
բերնից բերան  
բժիշկ-նյարդաբան  
բոյ-բուսաբթ  
բոյով-բուսաբթով  
բրոնզի դար  
բուք -բուրան  
բուք ու բորան  
Բարեն-Բարեն  
Բաժքեռուկ-Մելիքյան  
Բայկալ-Ամուրյան մայրուղի  
Բաշ-Ապարան  
Բիկ Բեն – Լոնդոնի խորհրդանշիչ  
համարվող ժամացույցը  
Բիշեր-Սթոու  
Բոյլ-Մարիոսի օրենք  
Բընստ-Լիտովսկի պայմանագիր  
Բուենոս Այրես

**Գ**

գալ դիմել

գալ նստել  
գաղափարական-քաղաքական  
գամմա-ճառագայթ  
գայլ-գազան  
գայլ ու գազան  
գավառից զավառ  
գեներալ-մայոր  
գերմանա-քուրքական  
գերմանաֆաշիստական  
գինու-կոնյակի արտադրություն  
գիշեր ու զօր//գիշերուգօր  
գիշեր-ցերեկ  
գիշեր ու ցերեկ  
գիտահանրամատչելի  
գիր-գրականություն  
գլուոր-մլտոր  
գլուխ գլխի  
գյուղից գյուղ  
գնալ-գալ  
գնալ հասմել  
գոռալ-գոռօգոռալ  
գոռում-գոշյուն  
գրական-գեղարվեստական  
գրան-ատոն  
գրամ-մոլեկուլ  
գրել-կարդալ  
գրող-հրապարակախոս  
գունդ-գունդ  
գունդ-կծիկ  
գուսան Աշոտ  
Գանառ-Ջարիապա  
Գեյ-Լ./յուսակի օրենք

**Դ**

դանակ-պատառաքաղ  
դաշտ ու հովիտ  
դարիվ-դարիվ – լեկի-լեցուն

դափ-դատարկ  
դեղ-դարման  
դեմ դիմաց  
դեմ հանդիման  
դեպից դեպք  
դես-դեն  
դեսից-դենից  
դիմում-բողոք  
դիցուր թե  
դիոլ-զուռնա  
դոճից դուռ  
դոյլ-ինչ  
դուռ-դարպաս  
դուռ դռան  
դուռ-դրացի  
դուռ-դրկից  
դուռ-լուսամուտ  
դուրսուներս անել  
Դանիել Բեկ-Փիրումյան  
Դավիթ-Բեկ  
Դեղձուն-Ծամ  
Դոնի Ռոստով, բայց՝ դոնիոսու-  
տովցի

երգ ու տաղ  
երեք գույն, բայց՝ երեքգույն/ա./  
ծիածան  
երեք սենյակ, բայց՝ երեքսենյա-  
կանց  
երկար-բարակ  
երկինք-գետին  
երկրից երկիր  
երկու-երկու  
երկու և կես  
երկու երրորդ  
եփել-քափել  
Երգ երզոց – Հիմ Կտակարանի  
գրքերից

**Զ**  
զառ-մանուշակ  
զառ-վառ  
զատ-զատ  
զարմիկ-զարմուհի  
զեկույց-նամակ  
զիզի-պիզի  
զուգել-զարդարել  
զույգ-զույգ

**Ե**  
եզան լեզու  
եզ-եզնատեր  
ելնել գնալ  
ելնել-ընկնել  
ելնել-նստել  
ելնել կանգնել  
եղած-չեղած  
երանգ-երանգ  
երբեմն-երբեմն  
երբ որ  
երգել-պարել  
երգիչ-երգչուիի

**Է**  
էգուց-էլօր  
էլ ավելի  
էջ առ էջ//էջառէջ  
էջ ու կես//էջուկես  
Էլզաս-Լոբարինգիա  
Էլ-Զուվեյք  
Երեքունի-Երևան

**Ը**  
ընդ ձեզ  
ընդ որում

լնկած-ելած  
լնկեր-բարեկամ  
րնկեր-րնկերուիհի  
ըստ ամենայնի  
ըստ այդմ  
ըստ արժանվույն  
ըստ երևույթին  
ըստ իս  
ըստ կարգի  
ըստ կարելվույն  
ըստ հարկի  
ըստ որում  
ըստ պատշաճի  
ըստ օրինի

**Ծ**

թանգարան-արգելոց  
թանգարան-ինստիտուտ  
թանկ-էժան  
թաց-թաց  
թերև քաշ, *pajg*՝ թերեքաշային  
թել-ասեղ  
թելիկ-մելիկ  
թել-պանիր//թելպանիր  
թերև և դեմ  
թերի բարձրագույն  
թիզ ու կես//թիզուկես  
թղթակից անդամ  
թղթնել հեռանալ  
թոփ-վայրէջք  
թոփ-վոփ  
թրև զալ  
թև թևի  
թև-թիկունք  
թաջ-Սահալ//թաջ Սահալ – մզ-  
կիր-դամբարան

**Ժ**

ժամանակ առ ժամանակ  
ժամ առ ժամ//ժամառժամ  
ժամ-պատարագ  
ժուկով-ժամանակով  
ժան-ժակ Ռուսո  
ժան-Պոլ Սարտր  
ժոլի-Կյուրի Ֆրեդերիկ

**Ի**

ի բարօրություն  
ի բացառյալ  
ի բնե  
ի գիտություն  
ի դեմս  
ի դեպ  
ի դերև ելնել  
ի զարմանս  
ի զեն  
ի զորու  
ի զորու լինել  
ի թիվս  
ի թիվս այլոց  
ի լրումն  
ի լուր  
ի ծնե  
ի կատար ածել  
ի կատարումն  
ի հակակշխո  
ի հաշիվ  
ի հատուցումն  
ի հեճուկս  
ի մարտ  
ի մի թերել  
ի մի գալ  
ի մի գումարել  
ի մոսոն

ի նկատի առնել  
 ի նկատի ունենալ  
 ի նշան  
 ի նշանավորումն  
 ի շահ  
 ի չիք  
 ի պաշտոնն  
 ի պատասխան  
 ի պատիվ  
 ի սկզբանն  
 ի սրտե  
 ի վար  
 ի վեր  
 ի վերջոն  
 ի վիճակի լինել  
 ի վերուստ  
 ի տարրերություն  
 ի տեղի  
 ի տես  
 ի տնօրինություն  
 ի տրիտոր – *trpr̥l* *hwastmgnis*  
 ի ցույց  
 ի ցույց դնել  
 ի փառու  
 իրերո-կովկասյան  
 իմացող-չիմացող  
 ինժեներ-մեխանիկ  
 ինչ էլ լինի  
 ինչ-ինչ  
 ինչ-որ – *awarərəpəriawik*  
 ինչ որ – *hwarmarəpəriawik*  
 դերանուն  
 ինչ որ է  
 իշխանաց իշխան  
 իրավ որ  
 իրեն-իրեն  
 իրոր որ

**L**  
 լալ-մարջան  
 լալ ու մարջան  
 լակոտ-լուկուտ  
 լավ-վատ  
 լավից-վատից  
 լաց-կոծ, *rajg'* լացուկոծ  
 լեգեոն առ լեգեոն  
 լեփ-լեցուն  
 լիրո-էպիկական  
 լիտր-վայրկյան  
 լոիկ-մնջիկ  
 լրացոմ-լրացյալ  
 լույս ընծայել, *rajg'*  
 լույսրնծայում  
 Լա Մանշ  
 Լառ-Մարզար  
 Լոռիս-Մելիքով  
 Լոս Անջելես

**N**  
 խարել-խարխրել  
 խաղը-խայտառակ  
 խանութ-սրահ  
 խելք խելքի  
 խունջիկ-մունջիկ  
 խուտուտ-մուտուտ  
 խուրձ-խուրձ  
 խև-դև  
 Խնկո-Ապեր

**D**  
 ծալ-ծալ  
 ծախել-ծախծխել  
 ծամ-ծամ  
 ծայրից ծայր  
 ծանոք-անծանոք

ծանր-ծանր  
ծանր քաշ, *բայց*՝ ծանրքաշային  
ծառս լինել  
ծափ-ծիծաղ  
ծափ ու ծիծաղ  
ծեզից ծեզ  
ծիլ-ծաղիկ  
ծիլ տալ  
ծլել-ծաղկել  
ծունր իջնել  
ծուռտիկ-մուռտիկ  
ծուռ-ծուռ նայել  
ծուռ նայել  
ծուփ-ծուփ

կտրել-կարել  
Կարա-Մուրգա  
Կումա-Մանիչի իջվածք  
Կուր-Արաքսի խառնարան

**Հ**  
հազար ու մեկ  
հականե-հանվանե  
հայ-արաբական  
հայ-ռուս-անգլերեն  
հայր սուրբ  
հավաքել բերել  
հավիտյանս հավիտենից  
հատկացուցիչ-հատկացյալ  
հարայ-հրոց

հարավ-արևելք  
հարավ-արևմուտք  
հարգը պահել  
հարկի-անհարկի  
հաց-մաց  
հեռանալ զնալ  
հեռվից հեռու//հեռու հեռվից  
հեռու-հեռավոր  
հեռու-մոտիկ  
հիմնական աստղ, *բայց*,  
հիմնաստղանի  
հինգից յոթ  
հլու-հնագանդ  
հյուսիս-արևմուտք  
հյուսիս-արևելք  
հյուրանոց-ռեստորան  
հոգի-մարմին  
հոգով-մարմնով  
հոգևոր-մշակութային  
հորով-մորով  
հորոտ-մորոտ  
հույս-ապավեն

**Կ**  
կալ-կալվոր  
կահ-կարասի//կահկարասի  
կամա-ակամա  
կամա քե ակամա  
կամ քե  
կանչել բերել  
կապել-կապկապել  
կաս-կարմիր  
կարգ-կանոն  
կարգին-սարքին  
կարել-կարկատել  
կարծես քե  
կետ-ստորակետ  
կերած-խմած  
կիլոմետր-ժամ  
կիլովատտ-ժամ  
կոկլիկ-սոկլիկ  
կոտր ընկնել  
կողք կողքի  
կոչ-նամակ  
կոել-կոփել

հույս ու հավատ  
հունա-հոռմեական  
հուշարձան-կոթող  
հուշ-երեկո  
հուր-հավիտյան  
հուր-իրեղեն  
հօդս ցնդել  
Հասան-Զալալյան

մեկ վեցերորդ  
մեն-միակ  
մեն-միայն  
մեջք մեջքի  
մեռնել պրծնել  
մեռնել կորչել  
միայն թե  
մրցույթ-փառատոն  
մուգ կարմիր

**Զ**

ձայն-ծպտուն  
ձայն-ձուն//ձեն-ձուն  
ձեռք ձեռքի  
ձեռք-ուոք  
ձեռքով-ոտքով  
ձյուն-ձմեռ  
ձորից ձոր

Մելիք-Բախչյան  
Սիրզա-Ավագյան  
Սոնտե Կառլո

**Յ**

յոթ-ութ  
յոթից ութ

**Թ**

ճակատ ճակատի  
ճաք-ճաք  
ճաքել-ճաքճել  
ճեփ-ճերմակ

ճախնադարյան-համայնական  
ճետ-աղեղ  
ճետ ու աղեղ  
ճկար-առաջարկ  
ճոր օր, բայց՝ նորօրյա

**Մ**

մազ-մորուք  
մայրիշխանուքյուն  
մանր-մունր  
մաս հանել  
մաս-մաքուք  
մարդ-մուրդ  
մաքուրօդ, ա.  
մեգ-մառախուդ  
մեգ-մշուշ  
մեծից փոքր  
մեծով-փոքրով  
մեկ առ մեկ//մեկառնեկ  
մեկը մեկին

ճատել-վեր կենալ  
Նար-Դոս  
Նյու Յորք  
Նյու Զերսի  
Նոր Չուղա, բայց՝ նորջուղայեցի

**Ծ**

շախով-շուխով  
շաշյուն-շառաշյուն  
շարան-շարան  
շեկլիկ-մեկլիկ  
շենքով-շնորհքով  
շիք-շիք

շիփ-շիտակ  
շտապ-շտապ  
շուտ-շուտ  
շոք-շվաք  
Ծահ-Արաս Երկրորդ

**Ո**  
ոլոր-մոլոր  
ողջ-առողջ  
ողջ և առողջ  
ով-ով  
ոտով-զլխով  
ոտուծեռ  
ոտքից գլուխ  
որդան կարմիր  
որդ ու քրթուր  
որոշիչ-որոշյալ  
որտեղ որ է

**Չ**  
չափ ու սահման  
չափուձև//չափ ու ձև  
չէ մի  
չէ որ  
չէ որ չէ  
չին-տիբեթական,  
չինի<sup>՞</sup> թե  
չոքեչոք գնալ  
Չինգիզ խան  
Չնչկիկ Սովթան

**Պ**  
պակաս կարևոր  
պակաս-պառատ  
պանիր-հաց  
պատեհ-անպատեհ  
պարապ-սարապ

պարզից պարզ  
պես-պես  
պտուղ-բանջարեղեն  
Պեր Լաշեզ  
Պոլոզ Մուկուչ  
Պողմա-Պետրոս  
Պուերտո Ռիկո

**Ջ**  
ջանք թափել  
ջանք ու եռանդ  
ջարդել-Վշրել  
ջրմուղ-կոյուղի  
Ջուլ-Լենցի օրենք

**Ռ**  
ռազմածովային  
ռուս-պարսկական  
ռուս-ֆիննական  
Ռեչ Պոսպոլիտա  
Ռիմսկի-Կորսակով

**Ս**  
սակավ առ սակավ  
սանտիմենտը-ժամ  
սարից սար  
սեղան-նստարան  
սերնդից սերունդ, բայց՝ սերնդե-  
սերունդ  
սեփի-սև  
սոցիալ-դեմոկրատ  
ստուգիչ-անցագրային  
սրբություն սրբոց  
սուտ-մուտ  
սուտի-մուտի  
սուտ ու վիոչ

սերկ-մեխիկ	տասից քսան
սև-սպիտակ	տասով տասը
սև ու սպիտակ	տարուց տարի, <i>բայց՝</i>
Սալտիկով-Շեղրին	տարեցտարի
Սայաթ-Նովա	տեղը-տեղին
Սան Դոմինգո	տեղի-անտեղի
Սանկտ Պետերբուրգ	տեղի տայ
Սան Մարինո	տեղից տեղ
Սան Ուենտ	տեր հայր
Սան Սալվադոր	տեր-տիրական
Սանտ Ֆագո	տիեզերագնաց օդաչու
Սեն-Մինոն	տիկ-տկլոր
Սոլոմ-Գոմոր	տիկնանց տիկին

**Վ**

վազ տայ	տնով-տեղով
վաշ-վիշ	տուն-քանգարան
վառ դեղին	տուն-տեղ
վառ վարդագույն	Տեր-Հովհաննիսյան
վատտ-ժամ	Տեր-Ղուկասով
վարել-ցանել	Տյան Շան
վեր-վեր քոչել	Տոքք Անգեղ
վերից վար	<b>Ր</b>
վերուվար անել	րոպե առ րոպե
վոլտ-ամպեր	<b>Ց</b>
Վան-Վասպորտական	ցուցահանդես-վաճառք
Վեստ Սարգիս	<b>Ո</b>
Վոլգա-Դոն	ուզած-չուզած

**Տ**

տալ-առնել
տակից-գլխից
տանել-բերել
տանել տալ
տառ առ տառ//տառառտառ
տասը-տասը
տասը-տասնինգ
տասից տասը

տասից քսան
տասով տասը
տարուց տարի, <i>բայց՝</i>
տարեցտարի
տեղը-տեղին
տեղի-անտեղի
տեղի տայ
տեղից տեղ
տեր հայր
տեր-տիրական
տիեզերագնաց օդաչու
տիկ-տկլոր
տիկնանց տիկին
տնից տուն
տնով-տեղով
տուն-քանգարան
տուն-տեղ
Տեր-Հովհաննիսյան
Տեր-Ղուկասով
Տյան Շան
Տոքք Անգեղ

**Ր**

րոպե առ րոպե

**Ց**

ցուցահանդես-վաճառք

**Ո**

ուզած-չուզած
ուղղիչ-աշխատանքային
ումպ-ումպ
ուշի-ուշով//ուշիուշով
ուսուցիչ-ուսուցուիչ
ուս ուսի
ուտել-խմել
ուտող-ուրացող

ուրախ-զվարք

ուր որ

ուր որ է

Ուլան Բատոր

### Փ

փախչել գնալ

փալաս-փուլուս

փառք ու պատիվ

փասա-փուսա

փլան-փստան

փոխնիփոխն

փոքր-ինչ

փուշ ու տատասկ

### Ջ

ջահ-ջահ ծիծաղել

ջաղցր-մեղցր

ջաշել բերել

ջաշել տանել

ջաշել-ջաշըշել

ջարից ջար

յափ-քրտինք

յեֆ-ուրախություն

յիթ յթի

յուն-դադար

յուռկիկ-Զալալի/ Յուռկիկ Զալալի

### Օ

օրը ցերեկով

օրը օրին

օրոր-շորոր

օր օրի

### Ֆ

ֆրանսերեն-իտալերեն

ֆրանս-պրուսական

## ՀԱՍԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ակ. Բ. – Ակսել Բակունց  
 Ա. Դ. – Արամ Դանալանյան  
 Ա. Ս. – Անահիտ Սահինյան  
 Ավ. Իս. – Ավետիք Իսահակյան  
 Բ. Վ. – Բոգդան Վերդյան  
 Գ. Ս. – Գեղամ Սարյան  
 Ե. Զ. – Եղիշե Չարենց  
 Էդ.Ավ. – Էդուարդ Ավագյան  
 Հ. Թ. – Հովհաննես Խումանյան  
 Հ. Դ. – Հովհաննես Դուկասյան  
 Հ. Մաք. – Հրանտ Մաքեռսյան  
 Հ. Շ. – Հովհաննես Շիրազ  
 Հ. Ս. – Համո Սահյան  
 Հրչ. Մաք. – Հրաչյա Մաքեռսյան  
 Հր. Ք. – Հրաչյա Քոչար  
 Մ. Ա. – Մկրտիչ Արմեն  
 Մ. Ն. – Միքայել Նալբանդյան  
 Շիրվ. – Շիրվանզադե  
 Զ. Ա. – Զինգիկ Այրմատով  
 Պ. Ս. – Պարույր Սևակ  
 Ջ. Լ. – Ջեկ Լոնդոն  
 Ո. Դ. – Ուզմիկ Դավոյան  
 Ո. Հ. – Ուոլեն Հովսեփյան  
 Ս. Ա. – Ստեփան Ալաջաջյան  
 Ս. Խ. – Սերո Խանգաղյան  
 Ս. Կ. – Սիլվա Կապուտիկյան  
 Ս. Զ. – Ստեփան Զորյան  
 Վ. Ա. – Վախթանգ Անանյան  
 Վ. Դ. – Վահագն Դավթյան  
 Վ. Թ. – Վահան Թոքովենց  
 Վ. Պ. – Վարդգես Պետրոսյան  
 Վիլ. Ս. – Վիլյամ Սարոյան  
 Վ. Տ. – Վահան Տերյան

Ու. – Ըստիկ

անձն. – անձնանուն

բրր. – բարբառային

գվո. – գավառական

թրզմ. – թարզմանական

ժող. – ժողովրդական

հուն. աս. – հունական ասացվածք

պատմ. – պատմական

